3184

615

# ԳԻՐՔ
# ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ։

Յորում աւանդին կանոնք Մարդկային կենակցութեան։

Յաւելեալ ՚ի վերջոյ և համառօտ բովանդակութիւն գրոյս Աշխարհաբառ Լեզուաւ, ՚ի պէտս Մանկանց։

Արարեալ ՚ի Հայր Իգնատիոս վարդապետէ Փափազեան, յաշակերտութենէ Տեառն Մխիթարայ Ձծի Աբբայի։

Եւ Տպագրեալ ՚ի Վէնէտիկ Յամի Տն. 1806. հրամանաւ գերապատիւ Տն Ստեփաննոսի արհի Եպիսկոպոսի և Աբբայի։

Իսկ այժմ վերստին տպագրութեամբ ՚ի լոյս ածաւ Արդեամբ և Ծախիւք քաղցրամիտ պատանեկին Աղայ Մարտիրոս Սարգսեանին։

՚Ի Հայրապետութեան Տեառն Եփրեմ ամենայն հայոց կաթողիկոսի։

Յամի Տեառն . . . . 1814։

և Ազարիայի 199։ Համս I։

## ՚Ի ԿԱԼԿԱԹԱՅ.

՚Ի Տպարանի Աւետ Ջընթլումեանի։

*Printed by Aviet Gentlocm.*

Մինչչև էր աւա՛րտել տպագրութիւն գրոյս
օրհասն մահուն կանխել հեզամիտ և քաղց-
րաբարոյ Աղա՛յ Մարտիրոս Սարգսեանին
հանգեաւ՛ ՚ի տէր Համս ամսոյ 13 ին.

## Առ ընթերցասէր վերծանօղս:

Հարկ մարդկային ընկերութեան հաստատեալ է 'ի մի զքաղաքական բազմութիւն. և 'ի նմա հաստատեալ զօրէնս կենակցութեան ընդ միմեանս. այլ կարգադրիչ և վայելուչ կառավարիչ այնմ ճանաչի կարևոր ուսումն ընտիր քաղաքավարութեան. որչափ զի՝ առանց այնր բազմութիւն քաղաքական չէ համարելի ընկերութիւն մարդկան, այլ հաւաքումն այլասեռ կենդանեաց 'ի մի գումար խմբելոց քան զի միաբանութիւն անհրահանգ խուռն բազմութեան յաւէտ նկարէ զժողով վայրենի գազանաց քան զընկերութիւն քաղաքական կենդանւոյ, որպիսի է մարդս: Եւ զայս յայտնապէս տեսանեմք 'ի վայրենամիտ ազինս յորս չիք երբեք լեալ կրթութիւն այսր ուսման: Իսկ յորս միանգամ պայծառացաւ այս ուսումն և վարժութիւն, շքեղ հանդիսացան յաշխարհի ոչ միայն քաղաքական օրինօք ընկերութեան, այլ և բարեկրօն վարուք առաքինական կենաց. մինչև անքաղաքավարութիւն 'ի քաղաքացիս, նշան համարեցաւ անառաքինի վարուց. ուստի և քաղաքավարութիւն եղև ցուցակ միանգամայն և շարժառիթ առաքինական ընթացից. որով և սովորութիւն եղև ասել զառաքինեաց և զբարեաց, թէ բարուք քաղաքավարեցան. յորմէ և առաքինութիւն իսկ կոչի երբեմն և քաղաքավարութիւն: 'Ի սոյն առաքինութիւն յորդորիմք և 'ի սուրբ գրոց, որով ուսուցանեն մեզ զհետ լինել բարիոք կենցաղավարութեան. ոչ միայն ընդ Աստուծոյ՝ այլ և ընդ ամենայն մարդ-

կան

ծկան. յաւել տուողական լեզուի. խօսեցողութեան չէ արժանի առաջի տմ ծաղրական. և ևս թէ. Ամենայն ինչ ձեր պարկեշտա-բարաւ և ըստ կարգի լինիցի. I. Կորն. 14. 40. որ լինի մարդկօրէն վարելով յամի և ընդ ամենեսին: Զայս խրատ կարևոր տեսանեմք ուշադրեալ և ՚ի սէր Հարց և յիմաստուն վարդապետաց. որք գործովք ցուցին զնոյն, և ուսուցին մեզ:

Յայս ընտիր և ՚ի կենցաղօգուտ ուսմանէ ի՛ւիք ի՛ւիք պակասեալ տեսանելով զանտերունջ ազգս մեր ՚ի քաղում տեղիս առ ՚ի չգոյէ ուսուցչի և կանոնաց ՚ի կրթութի, փոյթ յանձին կալաք զառաջի կայս երկատիրութի ընծայել ընկերասէր վերծանողաց հաճոյ՚լով կանոնս պատշաճականս ազգիս ՚ի հարթել զանախորժ խորթութիս իւրաքանչիւր գործողութե, ըստ բանից և ըստ գործոց:

Կարգ և յառաջատուութի գրոցս այս բովանդակի, զի զամ գլխաւոր և զերևելի գործողութիս մարդոյ նախ յառաջ կարգեցաք. իսկ զմասնաւորս և զվերաբերեալս ՚ի նոսին, յայլ գլուխս դասեցաք: Յաճելեալ ՚ի վերջոյ և առանձին կանոնադրութի ընդ այլ և այլ վիճակի մարդկան: Որք և համառօտ հատուած բանի երրեակ գլխով յաղագս կենցաղավարութե են այս: Սակայն եթէ ընթերցողաց ինչ ինչ կրկնութի թըւեսցի վս նմանաւոր գործողութե, որ համդիպի յայլ և այլ կենցաղավարութիս. հարկ իրայն ստիպեաց զմեզ ՚ի նոյն՚ առ ՚ի տալ յիշատակել ընթերցողին զկանոն ուղղութե: Եւ է հակառակն այսմ, հնար է թէ ինչ ինչ կարծեսցի

զանց

զանց եղեալ. սակայն յերկարութենէ խորշելով թողաք ՚ի փոյթ ընթերցողաց ՚ի նմանւոյ զնմանն մակաբերել յուղղութի. թող զայն՝ զի և անհնար էր զամ մասնաւորականս գործս մի առ մի ՚ի համար բերել, որ իբր անհամար է ըստ այլևայլութեան անձին, տեղւոյ, ժամանակի և այլոց հանգամանաց

Զոճ շարագրութեան ջանացաք ըստ կարի պարզ յօրինել. զի չէին մեզ կամք ճարտարախօսութի, կամ խրթնաբանութի ուսուցանել, այլ զասացեալսն մեր՝ ամենեցուն իմացուցանել. վասն որոյ և ուրեք ուրեք զճաբառ գրոյս, կամ ռամկական բառս ես ՚ի կիր առաք.

Զունեցաք մեզ յայսմ զձեռնտուութի յայլ գրեանց ոչ յայլոց ազգաց. զի թէպէտ ընդհանուր սկզբունք աւանդեալք ՚ի գիրս նոցա՝ հասարակաց են յամ կանոնք, բայց մասնաւոր կանոնք առանձին ազգաց են յատուկ սեփական. Եւ ոչ ՚ի մերոցս, զի բայց ՚ի քանի մի տող ոտանաւոր խրատուց կարգաւորեալ վարժապետի առ նորավարժս ՚ի ջահասո. չէր այլ ոք ՚ի մերազնէից մատուցեալ ՚ի գրութիս այսպիսի ուսմանս. այլ աւանդութք և գործածութք ՚ի սակաւս և եթ գտեալ կայր. զոր մեք յանձն առաք բովանդակել բազում աշխատութբ, փափաքելով օգտել և քաղաքավար ուղղութ համօրէն ազգիս ՚ի փառս Աստուծոյ.

Որք իմաստուն քարս ունին, 'ի վերայ այնր և կրթութին, դիւրաւ տան ածպաշտութե պտուղ՝ գործով և բանիւ:

Սուրբ Ներսէս. Լամբրոնացին. 'ի Մեկնութիւն առակաց.

ԳԼ 14. 6:

## Գովեստ՝ շնորհակալութեան՝ և Յիշատակարան, ՚ի վերայ Տպարանին ։

Իբրև զպարտէզ՝ լի եմ պտղովք՝ լն զանազան·
փթթեալ ծաղկիւ՝ ՚ի յիս զվարդ՝ և զշուշան·
կան համբրէլ՝ տունկք և արմատք՝ վայելչական·
՚ի շտեմարանս՝ իմ են գանձեալ՝ և մրգք համայն ։
Նմանիմ աղբերց՝ որ միշտ բղխէ՝ զջուր յորդական
և ոռոգեալ՝ լնու զդաշտ՝ և անդաստան·
պասքեալ անձինք՝ ինև ըմբեն՝ ջուր անխափան·
և ես սփոփեմ՝ քաղցր տեսլեամբ՝ իմ, զպոլակն ։
Իբրև ունիմ՝ պարգև շնորհ՝ լա, բազմազան·
՚ի մեսրոպայ՝ խաճակայ՝ որք ինձ ծնան.
նախկին ծնողք՝ են ինձ նոքա՝ և լիկա կան·
որոց զտառս՝ մնաամբ էին՝ գրեալ տուան ։
Առատանալէս՝ աճիմ, բերկրիմ՝ և պանծանամ·
ջրով աղբիս՝ բեղմնաւորիմ՝ միշտ յաս ժամ·
արդեամբ գոյիւք՝ պտղաբերիմ՝ ես հայկազեան·
նոցա բաշխեմ՝ քաղցր պտուղն՝ իմ, բարեհամ ։
Զնիւթ ցանկալի՝ ուսումնասէր՝ մտաց մարդկան·
տամ ես զիմաստ՝ լա, երկնային՝ և աննման·
հիւսեմ պսակ՝ ՚ի զարդ գլխոյ՝ վայելչական··
և նուիրեմ՝ մանեակ ոսկի՝ և պատմուճան ։
Են ինձ այլև՝ ծաղկունք բազում՝ զարմանազան·
զօրութբ սքանչելի՝ և բնութբ՝ ներգործական·
որք ախտացեալ՝ մտօք դիմեն՝ իմ դպրատան·
տամ ես նոցա՝ ողջանալիս՝ բժշկական ։

Այլոյն

Այլոյն տամ 'ի փշրոյ զվարդ՝ հոտոտա կան․
ամանց մտայ՝ զաչս բանամ՝ տեսողա կան․
մխուսոյ առնեմ՝ անօթ շնորհայ՝ և պատուական․
և ամենից՝ լուսաւորեմ՝ բանիւք ուս ման։
Նա և զբանս՝ իմ, սերմանեմ՝ 'ի սիրտ մարդ կան։
բուրեմ 'ի քիմս՝ զհոտ անուշ՝ անմահա կան․
ծառ և ծաղկունք՝ որք երևին՝ իմ բուրաստան․
զմայլեն զնոսա՝ և տան խրատ՝ զգօնա կան։
Է արդարև՝ ինև պատեալ՝ գանձ մեծու թեան։
բաշխեմ ևտամ՝ որք են խնդրողք՝ բարի ուսման․
և զլանամ՝ տալ զնոյունց՝ որք անպի տան․
զխրատ ունին՝ անլուր գետին՝ ոպ խո պան։
Մայր եմ որդւոց՝ ես յոլովից՝ որք վարժե յան․
և ժուժկալեալ՝ չանխոնջ հասին՝ 'ի կէտն ուսման․
օտար ծնունդ՝ են ինձ նոքա՝ վայրենա կան․
տառք իմ խօսունք՝ որք ուսանին՝ անգիտայան։
Արուեստաւոր՝ և ուսուցիչ՝ եմ գիտնա կան․
ինև ունիմ՝ տառք՝ լուսեղէնք՝ ա̅ծա կան․
ես խրատիչ՝ եմ յաշխարհի՝ և վարժա րան․
զաստիարակ՝ և իմաստուն՝ զայեակ ման կան։
Տէր եմ բոլոր՝ ուսմանցըն ես՝ ընդ հանրա կան։
և 'ի գիտնոց՝ ես միշտ լինիմ՝ յար օգնա կան․
անթիւ ունիմ՝ ես զաշակերտս՝ և բարե կամ։
համայն գիտունք՝ են դաս առել՝ իմ դպրատան․
Որև ծերոյ՝ եմ զաւազան՝ և յենա րան․
երիտասարդ՝ պատանեկայ՝ զբօսա րան․
մանկանց տղայոց՝ գնտակ և վէգ՝ քառակողմեան․
և բազբաղոյ՝ երեխայից՝ եմ բայա րան։

Իւսոյն ինեւ՝ ամենեքին՝ բան զանա զան.
ըռուն զկարգ՝ ուսմանց իւրեանց՝ և թերութեան.
՚ի պարտիզէս՝ քաղեալ ծաղկունք՝ խրատական.
վայելչապէս՝ կազմեն զթագ՝ըն, գիտութեան:
Ցնծութիւն եմ յիմարաց՝ և իմաստնոց՝ըն խոհական.
ամենեցուն՝ տամ ես խրատ՝ ըզ գօնա կան.
մատաղ մանկանց՝ըն յորդորեմ՝ պատրաստական:
մատչել առ իս՝ սիրել զ ջան՝ բարի ուս ման.
Արդ դպրոցէս՝ ոչ ոք գտաւ՝ ունայնա կան.
զի օրինակ՝ բարի եմ ես՝ յարմարա կան.
անմեղ մանկանց՝ և որք մօք՝ խաւարա նան.
զարթուցանեմ՝ ՚ի քնոյ նոյա՝ թմբրողա կան:
Նաև Ճրագ՝ եմ լուսատու՝ անշիջա կան.
՚ի գիշերիս՝ այս աշխարհի՝ աղօտա կան.
ծագեմ զլոյս՝ առաւօտու՝ զերթ փայլա կան.
այնց ամենից՝ որք են շնորհաց՝ ընդունա կան:
՚Ի անթառամ՝ ծաղկանց կազմեալ՝ եմ բուրաստան.
որք ՚ի պարտէզ՝ իմ, վայելուչ ծաղկագրե ցան.
և մարգարիտ՝ եմ լուսափայլ՝ ջահ պատուական
ինձ գեղեցիկ՝ յօրինողէ՝ կամ անուա սան:
Ըստ իմաստնոյն՝ Սողոմոնի՝ արքայա կան.
խրատից ուսեալ՝ որք ՚ի յականջս՝ իմ, հնչեցան.
մատուցանել՝ զգոհութի՝ բարեաց տո խան.
վարձ երախտեաց՝ հատուցանել՝ մեզ շտ անխափան:
Նուէր չունիմ՝ ես, այնպիսի՝ արժանա կան.
որով մատչեալ՝ ընծայեցից՝ չքնաղա կան.
կամ գոհութե՝ բանիւք բազմօք՝ և յարգա կան.
վճարեցից՝ զպարտս իմ՝ եբր պարտա պան:

Ծաղիկ պտուղ՝ պրդեւք զարդուն՝ մերոյ սակայն.
մատուցանեմ՝ իմ սիրելեաց ըն, յատկա կան.
և մանաւանդ՝ որք ինձ եղեն՝ սերտ օգնական.
և որք ցուցին՝ ինձ անխնայ՝ զսէր և զ ջան։
Աղբերաբար՝ յորդեմ նոցա՝ ջուր պարզա կան.
մտօք քաղցեալը՝ ըմպել հայրի՝ անապակա կան.
մերկացելոց՝ տամ ես զգեստ՝ և պատմու ճան.
և պանդխտաց՝ նոցա լինիմ՝ ապաւնջա կան։
Յարմարեմ զ գոհութի փառաւոր կան.
վասն ընկալեալ՝ իմ երախտեաց՝ անխնայական.
և սակս բազում՝ ազգի ազդի՝ շնորհաց համայն.
զառատ տուրս՝ և օգնութեանց՝ միանգա մայն։
Եւ զի չունիմ՝ զայլ ինչ ինեւ՝ նուէրա կան.
զի նոյանէ՝ եմ ընկալեալ՝ զարդուն հա մայն.
որպէս առնեմ՝ նոյնպէս բաշխեմ՝ անզանազան.
միայն վստահ՝ և ազնութի՝ որք ինձ մնան։
Նուիրեմ նոցա՝ գեր ի վերոյ՝ զարմանա կան.
քաղցրատեսիլ՝ տաւիղք իմով՝ զփունջ ծաղկան
նա և պտուղ՝ և բերք ազնիւ՝ համեղա կան.
ի հասուտել՝ և վայելել՝ միշտ յար ժամ։
Որք սերտ սիրով՝ զհաստատուն իմ կամե ցան.
անչափ գոհեմ ես ի նոցունց՝ և միշտ մնամ.
փոխարինել՝ զբարեաց իւրեանց՝ թէ չկարենամ.
սակայն լինիմ՝ յար անմոռաց՝ և գոհա բան.
Հիւսեմ նոցա՝ դրուատ բանից՝ և օրհնու թեան.
վասնայնորիկ՝ զի իմ ծննդեան՝ պատճառ եղան։
առատապէս՝ բաշխեմ նոցա՝ իմ պանծա բան.
որք հին և նոր՝ կարեն հանել՝ անտի դրամ։

Եւն

Ընդ համայնից՝ տայէ ձեզ կեանք՝ նորոգութեան.
երկայն աւուր՝ըս, վայելել՝ անդորրա կան.
և տեսանել՝ որդւոց որդիս՝ ուրախա կան.
համայն բարեաց՝ և բերկրութեց՝ լինել արժան:
Բոտխնս մախթեմ՝ վասն ձերոց՝ աջողու թեան.
զի լիցիք միշտ՝ զանձամբ ձերով՝ ՚ի յողջու թե.
նա և մանկունք՝ շուրջ զ ձեօք՝ թո՛ղ զարգանան:
զի աճեցեալ՝ տայեն տեղի՝ ձեզ խնդութեան:
Տայէ և ձեզ՝ տէր բերկրութի՝ վայելչա կան.
և լցուսցէ՝ զ տունս ձեր՝ բարեօք հա մայն.
առ և տոյց՝ գործոց բանից՝ ձեր, օգնա կան.
ինքն լիցի՝ աջովն իւրով՝ անեղա կան:
Պահպանեալ՝ աճեցուսցէ՝ զ ձեզ միա բան.
հայրն բարի՝ խնամովք գթովք՝ իւր հայրական.
ազդիս հայոց՝ բացցէ զ դուռն՝ ողորմու թեան.
կատարեսցէ՝ զխնդրուածս՝ ձեր ամե նայն:
Ա՛արտ առնեմ՝ իմ գոհութե՝ և օրհնութեան.
և ձեզ հանձնեմ՝ ՚ի խնամս տեառ՝ըն, փօրուե.
արդարութե՝ շահեցուցէք զ դահե կան.
և գանձեցէք՝ զայն ՚ի յերկնից՝ըն, գանձարան:
Բամեալ բանքս իմ՝ եթէ լիցեն՝ վրիպա կան.
մի անգոսնէք՝ իբրև յիմար՝ և անար ժան.
կամ թէ գտջիք՝ բան ինչ ՚ի սմա՝ սխալա կան.
ներեսջիք այնմ՝ յումմէ վ̅ս իմ՝ շարադրեցան.
Արդ զի չեմես՝ քուրայ և բով՝ կամ վառարան.
որով հալի՝ ոսկի արծաթ՝ և զայլ նման.
և ոչ եմ խարոյկ՝ հրահալելեաց՝ըն ջերմա կան.
զի ՚ի տխտից՝ սրբեալ հանից՝ նիւթ մաքրական:

Նա

Նաւ չեմես՝ մահակ ևնուլթ՝ որք փորձա կան.
զի քննեցեալ՝ առաջ նդիս՝ զսխա լան.
անխօս տառք իմ՝ այամ դարուս՝ չարժին այնքան
զի անխրատից՝ հարկանիցեն՝ ընդուռլ զգան
Ի փշաբեր՝ վայրիս դնիմ՝ ես ինքս ար կան.
և ով ինչ կամի՝ բերեալ յարգանտ՝ ըս իմ աղան
զլաւն և զ յուսին՝ ՚ի մի խառնեալ՝ չփոթանան
և գլխովին՝ տան խանգարել՝ զիմաստ և բան.
Սկսանիմ՝ պատմել գրոյս՝ ըզ հանգա ման.
և ցուցանեմ՝ սա է շաւիղ՝ քաղաքա կան.
աւանդէ մեզ՝ կանոնք մարդկան՝ կենակցութե.
և տայ յօգուտն՝ խրատք յոլով՝ և զանա զան.
Արդ սա ուսուցիչ՝ կենայ մերոյ պատեհա կան.
խրատէ փոխել՝ զվարս մեր՝ անուղղա կան.
վարժէ զմեզ՝ աստուածովք՝ ուշիմա կան.
յառաջ բերէ՝ առակք և բանք՝ բարոյա կան.
Կարի քաղցրեն՝ հանճարք սորին՝ իմաստութեան.
մեզ հրաւիրէ՝ մատչել կամօք՝ այս խրախճան.
պահել առնել՝ հուսուցանել՝ միշտ անխափան.
և քարոզել՝ ՚ի մէջ միմեանց այս՝ բարի բան.
Սա նախ տպեալ՝ ՚ի Վենետիկ՝ յամի տեառն.
որէր հազար՝ և ութն հարիւր՝ վեցն յաւելման.
է հեղինակն՝ յաշակերտաց՝ Մխիթա րեան.
Իգնատիոս՝ հայր վարդապետն՝ որ փափագեան.
Սիրով գրեալ՝ զյորդորակն՝ կնքէ ըզ բան.
և գերազանց՝ քաղցր ոճիւ՝ վսեմա կան.
մեզ գեղեցիկ՝ ըս, աւանդէ՝ իմաստնա կան.
բարի խրատ՝ ուշիմ հանճար՝ զգօնա կան.

Ի սէր սորին՝ մայլեալ գոլով՝ կաթոգնա կան.
պատանեակ՝ն, Մարտիրոս՝ աղայ Սարգսեան.
ետ՝ ի տպել՝ արդեամբ ծախիւք՝ իւր իսկական.
Հեզաբարոյ՝ հօրն յարգելոյն՝ համա նման.
Րոտեալ զսէր՝ իւր հարազատ՝ որդիա կան.
գործովք եցոյց՝ հօրն իւրոյ՝ լինիլ նման.
զինա եթող՝ զիւր յիշատակ՝ զերկուս մատեան։
և սա՝ ի լոյս եբեր գրքոյկս զայս, պատուական։
Որով՝ կարեն՝ վարժիլ այժմոյս՝ մանկունքն այն.
որք անզուսպ են՝ և պէտս ունին՝ միշտ գիտուե
ամ է նոցա՝ ապտակ և բիր՝ եթէ զգան.
սովաւ կանոնս՝ ուղղեալ զվարս՝ իմաստնանան։
Յորմէ և դուք՝ շահելունիք՝ խրատք զանա զան.
և ձեր մանկանց՝ լինելոց է՝ ուխթ ըլնծ ման.
օրինողաց՝ տալոց է դեղ՝ համեստու թեան.
երեխայից՝ ջամբելոց է՝ կաթն զօրու թեան։
Նախանձաւոր՝ լերուք շնորհացն՝ որք լաւա կան.
զայն ուսուցէք՝ և ձեր մանկանց՝ նազելական.
պահել զհաւատ՝ անկեղծ սրտիւ՝ հաստատական
և հետևել՝ յուսով բարեաց՝ միշտ անխափան։
Բարի սէրն՝ գերազանց է՝ քան զամե նայն
և անցանէ՝ քան զկոպար և ըզ սահ ման.
փրկչին մերմէ՝ է աւանդել՝ զայս պատուիրան։
սիրել զա͞ծ՝ և զմիմեանս՝ կերպիւ բնա կան։
Ատելութի՝ և զնախանձ՝ միանգա մայն.
բարձէք՝ ի ձէնջ՝ և իսկապէս՝ առէք խոտան.
բարի վարուց՝ յանձին բերէք՝ ըզ կերպա րան.
և քաղցրագոյն՝ սիրոյ լերուք դուք համբարան։

Րաբու

Բազում բարի՝ տէրն համայնից՝ միշտ անսա սան.
պահեսցէ յար՝ զազգս հայոց՝ ՚ի խնդու թեան.
զի ձեռնտու՝ լիցին միմեանց՝ և օգնա կան.
և հուսկ յետոյ՝ ձեռն արկանել՝ իմ շինութե։

Ես արդ ահա՝ որք ընթեռնոյք՝ մեր զայս մատեան.
մի հայրմերիք՝ չմոռանայք՝ առնել յիշ ման.
աղա Սարգսին՝ և հանգուցելոյն՝ ըն իւր համայն.
տէր դասեսցէ՝ նոյա ընդ սրբոց՝ յարքայութեան.

Կրկնեցէք՝ զ յիշումն ձեր՝ երկրորդա կան.
հաւատարիմ՝ զ կողակիցն՝ իւր Մարամ ջան.
ժրագլուխ՝ բարի տիկին՝ ըն, հեզա կան.
առատաձիր՝ և քաղցրա գոյթ՝ խնամա կան։

Այլ և զգնիք՝ Աղա Յովաննէս՝ ըն Սարգս եան.
և իւր տիկին՝ եղիսաբեթ ըն՝ խոհեմա կան.
մատաղատունկ՝ մանկունք իւրեանց վայելչական
ուստերք նոյա՝ ընդ դստերօք՝ միանգա մայն։

Մի մոռանայք՝ յիշել նոա և՝ ըղ պատուա կան.
զերկու եղբարսն՝ զկարապետն՝ և ըղ Բէկտան.
այլ և ալայ՝ Մարտիրոս ըն՝ խոհեմա կան.
իմ օժանդակ՝ նպաստաւորն՝ և օգնա կանն։

՚Ի վերջ բանիս՝ հայցեմ ՚ի ձէնջ՝ առնել ար ժան.
յիշել երբեմն՝ տէր և խնամիչն՝ իմ գործատն.
այրն Զընթլում՝ Ը իւրայնօք ըն, համաձայն.
նա և նոյա՝ որք տարս իմ՝ աշխատե ցան։

Այս յիշեցնուէր՝ և ցիշատակ՝ ընծայա ջան.
Մատուցանէ՝ Մարտիրոսն՝ աղայ Սարգսեան.
հայցէ և զոր՝ վը որբն՝ տառապեա լեան.
և տայցէ՝ Այն ամէն լուծքէ. քան։

## Ներբողեան վասն Մեծանուն հանգուցելոյն Աբբայ Մխիթարայ:

Իմաստանօք՝ զմիտ և զուշ լու, բերթա նան.
կարծի լեզուս՝ առ 'ի պատմել զգոյժ միհուան
մեր սիրեցեալ՝ Մաստերոսի՝ կենաց զրուցման.
որ դիպեցաւ՝ զայս մեզ յամսոյս՝ երեքտասան:
Մահս հրաւէր՝ և ողբալի՝ հիւանդու թեան.
անկեալ դնիւր՝ երիւք ամսօք՝ խղճուկն այն.
դեղ և դարման՝ յոլով բժշկաց՝ ոչ օգնեցան.
և տքնութինք՝ բազմաց վերջնում՝ դերև ելան:
Սաստկանալ ցաւոց ախտից՝ ըն մահա կան.
գտեալ բժշկաց՝ զդեղ և հնար՝ օդ ծովական.
'ի քումբայի երթալ նաւաւ՝ խորհրդադրեցան.
զոր և խսկոյն՝ աճապարեալ՝ գնալ կազմեցան:
'Ի մի ժողովեալ՝ ազգ ընտանեաց՝ ըն միա բան.
գիրկըս արկեալ՝ եսուն զյետին՝ բարևմնայն.
մեծականկան՝ լալիս ողբով՝ բաժանեցան.
մայրն 'ի յորդւոյ՝ եղբայրք 'ի սիրոյ՝ եղբայրակն:
Բաժեալ անձանց՝ որոց բաշխեալ՝ էր խնամս կան.
դքաղցրագոյն՝ սէրն իւր ազնիւ՝ համեղա կան.
միագումար՝ միշտ հայցէին՝ վասն ողջութեան.
զի անմնից՝ էր գթառատ՝ և սիրա կան.
Եւ արդ ողբոց՝ ինձ ժամանեալ՝ պատմել զբան.
այն պատահմունք՝ որք մերձնաւի՝ հնդիկայեցան.
զի 'ի հասանիլ՝ յանկարծ բանի՝ զըրրունք արեան.
'ի բերանոյ՝ հեղու լսկանի՝ զախտաներանկան:

Ցաւ

Ցաւ և երկիւղ՝ ամենեքումբք՝ շուրջ պատե ցան·
որք լռեցին՝ և որք տեսին՝ բղխումն արեան·
մինչ երկիւղէ՝ նաւէն դուռն՝ յետս փութցն·
դեղք անօգուտ՝ բժշկաց կրկին՝ հետևեցան։
Եւ մերձակայքն՝ ամէն կերպիւ՝ ըն, ջանս ցան·
արդեամբք ծախիւք՝ և ոչ մի ինչ՝ պակասե ցան·
այլ մինչ տեսին՝ տն· օգնութիւնք՝ տկարա ցան·
Ձեռն ՚ի ծնօթի՝ եդեալ սգովք լալ սկսան·
Արդ մինչ եհաս՝ զօրն և ըոպէն՝ բարի մահուան·
մաքուր հոգին՝ իւր աւանդեց՝ յոյժ քաղցրական
մայրն ողբալի՝ ընդ ընտանեօք սգով լցան·
եղբայրք և քորք՝ ընդ սիրելեօք կսկըծե ցան։
Լսեալ խօսից՝ հաւտեսանելոյ՝ այրն հեղա կան·
վճարեցաւ՝ վասն սորայ՝ աշխարհ ամե նայն·
առողջութի՝ երբ կորնչի՝ զգան յայն ժամ·
՚ի վախճանի՝ տայ ճանաչել՝ բայց անա գան։
Մաշեալ ճմլին՝ սիրտք տեսողաց՝ զայս դառնութե.
մահ և կորուստ՝ այս խղճալոյս՝ ցաւ անդարման
ո՛ւր եղերեաց՝ զօրեղութի՝ և փառք համայն·
վստահայեալ՝ մինչ վարէր զկեան՝ անհոգուեն
Անագորոյն՝ սուրն մահուան՝ արկ ըզ կոր ծան·
դորովական՝ այրս տօնելի՝ վսեմա կան·
ոչ զդալար՝ հասակ և գեղ՝ վայելչա կան·
ետուն արդել՝ կենաց բառնիլ՝ զսա տարաժամ։
Բախճանական՝ կենօք ծաղկէր՝ ուրախա կան·
պայծառ և պերճ՝ երիտասարդ՝ ըս սիրա կան·
մինչ բքաբեր՝ հողմն հնչեալ՝ դառն մահուան
թառամեցոյց՝ անխնայօրէն՝ ՚ի գերեզ ման։

Տաժանելի՛ ցաւօք լցեալ՝ Թաղծոտա կան.
և սիրելիք՝ անմխիթար՝ սուգ զգե ցան
այլ չեմք լսելոյ՝ զքո բարբառ՝ և քաղցր ձայն.
որ կոչէիր՝ և սփոփէիր՝ միշտ յարա ժամ:
Իրա՛ւապէ՞ս՝ է սգալի՝ Համբաւ մահ ուան.
ո՛չ ամենից՝ որք հասակաւ լցեալ գնան.
և ո՛չ նոցա՝ որք ՚ի կեանս՝ անգութ կե ցան.
և չար վարուց՝ վատթար բարուց՝ հետևեցան:
Բաքուն բարի՝ տէրն. համայնից՝ չարար ար ժան.
՚ի տեսանել՝ հանգուցելոյն՝ զայս նոր մատեան.
որ իւր ծախիւք՝ և յիշատակ՝ իւր տպե ցան.
և ներբողեանս՝ մի ծառայից՝ իւր գրե ցան:
Ողորմութեանց՝ տուող քրիստոս՝ Ած և բան.
որ վասն մեր՝ մեռար մարմնովն ըս, մահկան.
և Թաղեցար՝ ՚ի սիրտ երկրի՝ վիմօք կընք ման.
և յետ երից՝ աւուրց յարեար՝ անապա կան:
Սգոյ լցեալ՝ սիրտ ընտանեայց՝ ըն, տրտմա կան.
մխիթարեա՝ քոյ սբ հոգովդ՝ սփոփա կան.
փարատեցո՝ սրտից սոցա՝ զսուգ Թաղծա կան.
ողորմահատէ՛լ բժշկեցո՛ զվէր տրտմութեան:

՚Ի վէրջ Էանիս՝ հայցեմ ՚ի ձէնջ՝ որք Էարէ չամ.
հանգուցելոյս՝ ես, տայցէք՝ լինել ար ժան.
ընդ սիրելեաց՝ ըն, ղասաչէց՝ յաջանդաղ մեան.
լեցի ի՛ղձով՝ ես Մարտիրոս՝ ըն, սիրալան:

# ԳԻՐՔ
# ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ.

## ԳԼՈՒԽ. Ա.

### Թէ զինչ իցէ քաղաքավարութիւն.

Քաղաքավարութիւնդ անուն, որ 'ի յոյն լեզու բօլի՛տիքա կամ ատտիկիսմօս լսի. և 'ի լատինս չիվի՛լիտաս կամ ուրբանիտաս. ըստ հնչման ձայնին նշանակէ զքաղաքականութիւն՝ կամ զկենցաղավարութիւն 'ի քաղաքի։ Այլ սովորութեամբ առեալ լինի այս բառ 'ի տեղի այնր առաքինութեան, որով մարդիկ վայելուչ և ընտիր կենակցութեամբ վարին ընդ միմեանս։ Եւ այս կարի յարմարութեամբ զի որովհետև կարգաւորեալ կենցաղավարութիւն յաճախ 'ի քաղաքս լինի քան արտաքոյ 'ի շէնս և 'ի գիւղս, նմին իրի պատշաճ եղև զայս առաքինութիւն կոչել քաղաքավարութիւն. ըստ որում ուսուցանէ՝ սա մարդկան զվայելուչ և զընտիր կենցաղավարութիւն քաղաքական. զոր և մարթ է սահմանել այսպէս։ Քաղաքավարութիւն է առաքինութիւն, որ ուղղէ և վայելչացուցանէ զբանս և զգործս մարդկան ըստ արտաքին և քաղաքական կենաց։ Կոչի առաքինութիւն. զի է մասն բարեխառնութեան. ըստ որում 'ի գործողութիւնս մարդկան ունի զօրինաւոր չափ և ըզ-

վայե

վայելուչ եղանակ. վճռոյ եւ սախ, որ ուղղէ եւ
վայելչութեանն զբանս եւ զգործս մարդկան ։ Ուղ
ղելն եւ վայելուչ գործելն են կրկին պաշտօնք
քաղաքավարութե. զի այս առաքինութի կարգի նախ՝
յուղղել եւ 'ի սրբել զբանս եւ զգործս մարդկան յար
տաքին թերութեց եւ յանախորժ խորթութեց. եւ
միւս եւս՝ ոչ հետեւակ է առաջնոյն, առ ուսու-
ցանել եւ առաջնորդել մարդոյ յազնուական շնոր
հըս բանից եւ գործոյ. ունելով յամի չափ եւ կանոն
զվայելուչն, որում հնարի նմանեցուցանել զվար-
մունս մարդկան ։ Այս եւս՝ ըստ արտաքին եւ քաղ
քական կենաց. զի վախճան այսր առաքինութե ոչ է
սրբել եւ յարդարուն գործել զմարդիկ ըստ հո-
գւոյ՝ կամ ըստ ներքին կարողութեց նորա. այլ
միայն արտաքուստ տալ վայելչութի բանից եւ գործոյ
նց. կանոնաւորելով զայն ըստ արտաքին գործողու
թեան, զորս գործէ մարդ իբրեւ կենդանի քաղաքա
կան. եւ առաջի ունելով նոյն զմարդավայել հան
գամանս, զոր պարտ է ունել յընկերութիւն եւ 'ի
կենակցութիւն ընդ մարդկան ։ Յայս սակս իսկ՝ այս ա
ռաքինութի վայելչապէս կոչի մարդավարութի եւ
բարւոք եւ վայելչական կենցաղավարութի. զի կանոնք
եւ խրատք սորա գլխովին կարգեալ են յուսուցա
անստգիւտ եւ ընտիր կենակցութե վարելոյ մարդկան
ընդ միմեանս ։

Յառաջելոյս յայտ է՝ թէ իսկութի այսր առաքինու
թե հիմնեալ կայ 'ի վայելչութե եւ 'ի բարեկարգու.
թե, որով յարդարէ զմարդկային վարմունս բանից

եւ

և գործոյ։ Այլ քանզի պէսպէս են վարմունք մարդկան՝ ըստ այլևայլութեան գործոյ նոցա և բնութեան՝ կամ հասակի կամ վիճակի կամ պատուոյ, նմին իրի և կանոնաց քաղաքավարութեան օրէն է լինել այլևայլ. որովք իբր ճարտար բժիշկ ըստ ամի մատուցէ զյան կաւորն դարման յուղղութիւն և յիւրեքեալս ազնուական կենաց։ Որում կամելով սկիզբն առնել, պատշաճ համարիմ աստանօր ՚ի սկզբան աւանդել կանոնս ինչ հանրականս, որովք հասարակօրէն կառավարին ամենայն կենակցութիւնք մարդկան։

## ԳԼՈՒԽ. Բ։

### Յաղագս հանրական կանոնաց քաղաքավարութեան։

Հանրական կանոնք կոչին ՚ի քաղաքավարութեան այն խրատք, որք ՚ի հասարակի հային առ ամենայն գործողութիւնս և վարմունս մարդկան միանգամայն. և համարին իբր ուղղիչ և կառավար համօրէն մարդկային կենակցութեանց. զի նոքօք ևեթ հնար է զգօնամիտ մարդոյ տիրապէս ուղղել և վայելչացուցանել զամենայն գործս և զբանս իւր յամենայն ընթացս քաղաքավարութեան։ Այսպիսի կանոնք թէպէտ և մարթին լինել բազմապատիկ ըստ իւրաքանչիւր տեսակի մարդկային գործողութեանց. այլ որ գլխաւորքն են ՚ի նոսա և յառաւետ պիտանիք, զայնս միայն նշանակեսցուք աստանօր։

I. Առաջին կանոն քաղաքավարութեան, զոր աւանդեն իմաստունք՝ է այն. զի պարտ է ամենայն ուրեք

արթուն

արժութեան մտօք ուշադիր լինել այնմ ամի, զոր համ դերձեալ է խօսիլ կամ գործել. քանզի այր անխորհուրդ նման է անպարիսպ քաղաքի. յառակս իմաստնոյն. Որպէս քաղաք կործանեալ ՚ի պարսպաց և անպարիսպ իցէ, նոյնպէս այր, որ ոչ խորհրդով գործիցէ. Առակ. իե. 28. Վասն զի ՚ի մարդկային կենակցութես բազմապիսի թերութիւնք և տմարդութիւնք սովոր են յառաջ գալ յանմտածութենէ. յորոյ առ ՚ի զգուշանալ. պիտոյ է մարդոյ յամի զգաստ և հսկօղ լինել ՚ի վը բանից և գործոց իւրոց, զի մի ինչ խօսեսցի կամ գործեսցէ անխորհուրդ և ըստ բերման բնութե. այլ դիտելով և կշռելով արասցէ զամ.

2. Երկրորդ՝ պարտ է մարդոյ քննել և տեսանել ոչ միայն զիրն, զոր հանդերձեալ է ասել կամ առնել, զի իցէ բարի և վայելուչ. այլ և արժան է հայիլ յեղանակն առնելոյ. նախ՝ զի վայելչապէս և ըստ կարգի արասցէ. և երկրորդ՝ զի գործօղն յառնել իւրում այնպիսի օրինակաւ վարեսցի որ իցէ յանկաւոր և պատշաճ իւրում վիճակի և հասակի, զի ոչ ամ գործողութիւնք թէպէտ և վայելչականք՝ ամեցուն են ՚ի դէպ. զոր օրինակ՝ Չէ արժան մեծամեծաց՝ ծերոց և չափահասից ՚ի կենցաղավարիլն ընդ հաւասարս կամ ընդ ստորինս՝ վարել զայնպիսի շարժմունս յարգութե, զոր անկ է տղայոց և կրտսերագունից առնել առ վերնագոյնըս ոպ համբուրել զձեռս, կամ մատուցանել զառաջին և պատուաւոր տեղին. իա. Բայց եթէ

Հանգամանք վիճակի իշխանութ՟ե կլասերոյն զնոյն պահանջեսցէ ։ Նոյնպէս չէ օրէն մանկանց և բատորնագունից ՚ի վարիլն ը՟ն հաւասարս կամ ընդվերնագոյնս, զծերոց և զմեծամեծաց վարմունս գաղափարելով ՚ի գործածել ։ Ըստ այսմ և գիւղականաց անվայելուչ է ըստ կարգի ազնուականաց շարժիլ և վարիլ ։ Այլ պարտ է ամենեցուն միտ դնել ։ զի վայելչապէս արասցեն զպատշաճեալսն վիճակի իւրեանց ։

3. Երրորդ՝ պարտ է քաջ գիտել ՚ի ժամանակն՝ յաւիթն և ՚ի տեղին, յորում գործէ ոք՝ խօսի և կենակցի. զի թէպէտ և գործ ինչ կամ խօսք կամ շարժմունք իցեն մարդավարականք և վայելուչք, սակայն թէ լինիցին ՚ի տարադէպ ժամու և յաւթի կամ յանյարմար տեղւոջ, համարին տմարդութիւնք ։ զորօրինակ՝ ՚ի կամիլ ուրուք շնորհակալ լինիլ զումեքէ վ՟ա երախտեաց նորա, եթէ գայցէ զնա ՚ի սուգ՝ կամ ՚ի տկարութ՟ե մարմնոյ, կամ զբաղեալ յանյաջողութ՟ե ինչ գործոյ, չէ օրէն առնել զայն յայնժամ, զի յայսպիսի աւիթս և ՚ի ժամանակս՝ յաւէտ մխիթարութ՟ե և քաջալերութ՟ե կարօտի բարեկամն՝ քան շնորհակալութ՟ե ։

4. Չորրորդ՝ պարտ է միտ դնել սովորութեան քաղաքի և ազգի, յորում բնակեալ իցէ. եթէ զինչ և զիա՞րդ իցեն մարդավարական շարժմունք և կենակցութիւնք նոցա. զի ոչ մի օրինակ գործի ա՟մ ինչ յա՟մ տեղիս. այլ զորօրինակ քաղաքք ՚ի քաղաքաց տարբերին տեղեօք և բնակչօք, նոյնպէս և

քաղա

քաղաքավարական կենակցութիւնք նոցա է միմեանս
այլևայլք են. և երբեմն ներհակք միմեանց՝ կամ
տարբերք ամենևին. զորօրինակ՝ վայելուչ սովո-
րութիւն համարեալ է յարևմուտս ՚ի տեսանել բարե-
կամաց զմիմեանս՝ բանալ զգլուխ և խոնարհիլ
իւրերաց. այլ այս քաղաքավարութիւն օտար գոլով՝ի
սովորութե արևելեայց և անգործածելի առ նոսա,
իբր ամարդութիւն և ծաղրածութիւն համարի, եթէ
տեսցի՝ի մ̃ջ ուրուք։ Ուստի պա՛րտ է խոհական
անձին քննել և իմանալ, և ըստ տեղւոյն ՚ի գործ
արկանել. քանզի այն համարի վայելուչ յա̃չ տե-
ղւոյ, որ իցէ համաձայն կարգի և սովորութե նոցա։
5. Հինգերորդ՝ որովհետև հա՛րկէ մարդկային
ընկերութե կենակցութիւն ունիլ ը̅ բազումս, որոց
միշտ՝ հասակ և հանգամանք բնութե անհնա՛րէ,
թէ իցեն միօրինակք. նմին իրի պա՛րտ է մարդոյ
յա̃մ ՚ի վարմունս իւր միտ դնել և հայիլ, թէ ընդ
որս և առաջի որո՞ց կենցաղավարի, որ̃պս զի ըստ
այնմ յարմարեսցէ զանձն վայելուչ օրինակաւ՝ վա-
րիլ ընդ նոսա։ Առ որ ՚ի նպաստ վարժութե գիտել
արժա՛ն է։ Նախ՝ զի զորօրինակ պէսպէս են մար-
դիկ բնութ̅ք, նոյնպէս և այլևայլ են բնական բեր-
մունք և ախորժակք նոցա՝ զոր ունին առ զանա-
զան իրս. իբր զի՝ ոմանք բնապէս յանկան մեծութե
փառաց և իշխանութե. այլք ընչից և ստացուածոց
իսկ կէսք կերակրոց՝ ըմպելեաց և զբօսանաց. և
այլք այլոց իրաց, առ որս իցեն հակամիտեալ ՚ի
բնէ. վ̃որոյ և յա̃մ ձկտին խնդրել զայնս.

զոր

զորս ախորժեն. բայց քանզի անհնար է նոյն յամ իրս և յամ տեղիս զնոյն գտանել, փափագ նց և ցանկումն յայնպիսիս ուղղի, զոր հնար է նց ընդունիլ յայլոց: Այս տեսանեմք յաշխարհի, զի որ ընչասէրն է կամ որ փափագի ստացուածոյ, յայնպիսի տեղիս, ուր ոչ գոյ յոյս օգտի՝ զոր օրինակ 'ի հասարակ կենցաղավարութե, աէըն ընչից ձկտի երբեմն 'ի սէր պատուոյ և մեծարանաց, վորոյ և այնմ փափագի և զնոյն խնդրէ: Նմին իրի պարտ է ամ ումեք խնամով դիտել, զի 'ի կենակցիլն ը այլս, յորժամ ոչ կարէ ընդունել զբուն ախորժակ նց մի արասցէ կամ ասասցէ այնպիսի ինչ, որով տայցէ առիթ քամահելոյ: Երկրորդ՝ դիտել արժան է, զի զոր օրինակ բնութիւն տայ մարդոյ յօժարիլ առ զանազան իրս, նոյնպէս առնէ և հասակն. վյ տեսանեմ, զի ծերք այլ իրաց ցանկան, և մանկունք այլում իրի: Նմին նման գործէ և վիճակ մարդոյ. զի այլ է բաղձանք մեծատանց՝ և այլ աղքատաց. այլ քաղաքացւոց, և այլ շինականաց. այլ իմաստնոց, և այլ տգիտաց. և այլ ստրկաց. այլ եկեղեցականաց, և այլ աշխարհականաց. այլ հիւանդաց և այլ առողջաց: Զնոյն է տեսանել և յայլևայլ արհեստաւորս իսկ. զի ըստ պէտից և ըստ զանազան գործոց, յորս պարապին, համահանդէտ այնմ իղձս և յօժարութիս կրեն 'ի սրտի: Զոր դիտելով մարդոյ պարտի 'ի կենակցութիս իւր խոհական ընտրութբ և մտադիր արթնութբ դիտել և կշռել զիւրաքանչիւրոցն բնութի, զվիճակ և

զայլ

զայլ համգամանս, զի կարասցէ վայելուչ կարգօ[ք]
վարիլ ընդ նմին. Սակայն առ ՚ի խրատ ը՟ հա[...]
րական, պարտ է զգուշանալ յասելոյ կամ ՚ի գո[...]
ծելոյ առաջի այլոց զայնպիսի ինչ, որ իցէ նուա[...]
կալի կամ անհաճոյ. և զզուանս բերէ զգայու[...]
թեց. կամ տայ յիշատակել զանարժս, կամ ընդ[...]
դէմ ելանէ սիրոյ և պատուոյ այլոց, և որ կար[...]
գի ՚ի վնաս ընկերին.

6. Վեցերորդ պարտ է միտ դնել քաղաքավարա-
կան շարժմանց և խոնարհական արարողութեց, զոր
իտալացիք կոչեն Սէրիմօնիա. որով ընծայի ումեք
պատիւ և յարգութի: Սակայն գիտել արժան է,
զի կրկնակի լինի այն. առաջինն է՝ որ լինի ՚ի պա[...]
տուց, որպիսի է պատիւն և մեծարանքն, զոր
պարտի առնել փոքրն առ մեծն. որպէս ծառայք
առ տեարս. որդիք առ ծնօղս, և հպատակք կամ
ժողովուրդք առ իշխանն և առ առաջնորդ իւր-
եանց. և զայս ստիպին նոքա առնել ՚ի բնական
իրաւանց, զորովք եթէ զանց արասցեն, անիրաւ[...]
առ նոսա. քանզի ՚ի նուաստագունից առ մեծամե-
ծըս՝ ոչ այնչափ քաղաքավարութի պահանջի, որչափ
խոնարհ հպատակութի: Իսկ երկրորդն է՝ որ լինի
՚ի սիրոյ և վս մարդավարութե. զոր ՚ի կիր առնու[ն]
մարդիկ ՚ի կենցաղավարութե. և ՚ի սոյն ևս պարտա-
ւորին, ոչ ՚ի հարկէ, զի է կամաւորական ինչ
այլ վս վայելչութե. որով հետև է վայելուչ սովո-
րութի ինչ գործածութ մտեալ ՚ի մարդիկ. զոր և
չառնելն համարի տմարդութի մեծ: Սակայն պար[տ]

է

է խնամով դիտել և զգուշանալ, զի մի յայսպիսի քաղաքավարական շարժմունս և յարգութիս, զոր առնէ ոք, անցցէ ը̅ չափ. այլ արասցէ զպատշաճականն և եթ. զոր վարեն առաւելագոյնքն և խելահասքն 'ի մարդկանէ: Քանզի այսպիսի վարմունք թէ ըստ չափ անցանիցեն, համարին մարդելուզունի, ծաղրածունի և թեթևամտունի. ք̅ զորս չիք տգեղ ինչ և անարժան 'ի մարդ ազնուատոհմ: Սակայն և այս հաւաստի է, զի որովհետև 'ի մէջ մարդկան ախորժական են այսպիսի վարմունք, ներելի է' թէ առ փոքր մի աւելագոյնս լիցին' քան թէ նուազ քան զչափն. բայց յայնմանէ ևս պարտէ զգոյշ կալ. զի մի ըստ անխոհեմ դերձակաց 'ի կամիլն ձևել զբաճկոն սիրոյ և քաղաքավարութե, առ կարի իմն լայնութե և երկայնութե ելցէ վերարկու ամարդութե. զի ամի օրէն է ունել զիւր կոպար և սահման պատշաճաւոր: Արդ' պարտ է մարդոյ 'ի քաղաքավարական շարժմունս զգուշանալ նախ' 'ի լկտի, յաճախ և յանյարմար բեկբեկմանէ մարմնոյ, գլխոյ, ձեռաց և ամ անդամոց. կամ ըստ հակադակն այսմ' 'ի լոյծ և 'ի դանդաղ շարժմանէ: Այլ պարտի ջանալ, զի ամ շարժուածք իւր լիցի հանդարտ, համեստ և վայելուչ, որ տեսողաց իցէ ախորժելի: Երկրորդ' 'ի բանս յարգութե և պատուոյ պարտ է զգուշանալ 'ի կարի իմն սեթևեթ, չափազանց և յաւելորդ խօսից. կամ 'ի գծծութե նուաստացուցանելոյ, զանձն, որ զզուելի է իմաստնոց մանաւանդ վեհաբարոյ անձանց.

Դ.

7. Եօթներորդ՝ առ ՚ի կանոնաւորել մարդոյ ըզ-
կեանս իւր ըստ վայելուչ կարգի քաղաքավարութե̄
և ախորժելի ընծայել զայն յաչս այլոց պարտ է
յաճախ յայն լինիլ ուշադիր. զի ՚ի կենցաղավարու-
թիս մի լիցի զհետ խնդրելոյ զհաճոյս անձին.
կամ վարելոյ ըստ կամաց և յօժարութե̄ բնութե̄
իւրոյ. այլ մանաւանդ միտ դիցէ հաճել զկենա-
կիցս իւր խորհելով յա̄մի եթէ զինչ իրք վայել-
չականք իցեն. Ը̄ որ ախորժին առաւելագոյնք
՚ի մարդկանէ. և զինչ՝ որ զնոսին խրտեցուցանէ.
զի այնու դիւրաւ մարթասցի ՚ի միտ առնուլ. թէ
յորո՞ց իրաց պարտ իցէ խորշիլ. և զո՞րս առնել
արժան իցէ: Այս արթնութի̄ և աչալրջութի̄՝ որով
ուղղին ա̄մ գործք մեր. պարտի լինիլ սեփական
մարդկայինս բնութե̄. յոր և խրատիմք յիմաստնոյ.
յաւել Կիկերոնի. Ոչ դոյզն ձիրք է բնութե̄ և
բանի. զի ՚ի կենդանիս՝ միայն մարդն իմանայ՝ թէ
զի՞նչ իցէ կարգն, զինչ իցէ վայելուչն, և զինչ է
ղանակ գործոյ և բանից: Զայս համեմատութի̄
բնութի̄ն և բանն ՚ի տեսութէ̄ աչաց ՚ի տեսութի̄ հոգւոյն
վերաբերեալ ևս ք̄ զևս արժանավայել համարի պա-
հել զգեղեցկութի̄՝ զբարեյարմարութի̄ և զկարգա-
ւորութի̄ ՚ի խորհուրդս և ՚ի գործս և զգուշանայ.
զի մի ինչ անվայելը գործեսցէ: Եւ ահա սոքօք
գոյաւորի և ծագի համեստն այն՝ զոր խնդրեմք:

ա̄. Գիր. յշ. պրպր. Գլ. Դ:

Այսոքիկ են կանոնք հանրականք. որովք կառա-
վարին և վայելչանան ա̄մ խօսք և գործք մարդկան:

Բայց

Բայց քանզի ոչ ամենայն է մերձեցուցանել զայսոսիկ կանոնս 'ի մասնաւոր գործողութիս իւրեանց նմին իրի պատշաճ է աստանօր առանձին գլխովք և ևս բացայայտել զայնս. 'ի մէջ բերելով զմասնաւոր գործողութիս և ուղղելով զթերութիս նոցա. որով և դիւր ըմբռնելի ընծայել ընթերցողաց զե մասս նախակարգեալ կանոնաց:

## ԳԼՈՒԽ. Գ.

### Կանոնք առ կենցաղավարութիւն:

### Առաջին:

Սենակցութիւն մարդոյ յայնժամ լինի ախորժելի այլոց. յորժամ միտ դիցէ 'ի կենցաղավարութեան չտալ ումեք ձանձրութիւն որով և իցէ առթիւ. այլ ըստ կարի հաւասարեսցէ նոցա զանձն. ընդ որս կենակցի: Այս ոչ բարւոք գործեն նոքա. որք 'ի պատճառս առանձնական հաճոյից կամ օգտի. և կամ վասն այլ ինչ իրաց վիճս բերեն բազմութեն. և խափանարար լինին միաբանութեն սիրոյ և զբօսանաց այլոց: զորօրինակ՝ Յորժամ հանդերձեալ իցեն համօրէն ընտանիք տանն նստիլ 'ի սեղան. չէ պարտ միում ումեք յայլ ինչ ըստ կամս պատաղիլ. և տալ բազմութեն սպասել. զի վայելուչ ևս է միում անսալ և հետևիլ բազմաց. քան բազմութեն լսել միում. զի և յիմաստնոց տգեղ համարեալ է մասն. որ ոչ համաձայնի բոլորին:

2. Ի հաւասար ընկերութեան կամ 'ի կենցաղավարութեան
ընդ այլս՝ չէ պարտ լինիլ կարի իմն գիրգ և փա-
փուկ. և խնդրել յամենայնի նախապատիւ լինիլ քան
զայլս. նսջել կամելով յազնիւ անկողնի և յընտիր
սենեկի. բազմիլ հանգստեամբ 'ի պատուաւոր տեղ-
ւոջ. և քան զայլս յառաջ և փոյթ սպասաւորիլ.
միանգամայն չհաճելով բնաւ ընդ իւր ինչ.
զանախորժ դէմս ցուցանել. որք են նշանակք
մեղկ բարուց և անըմբերելի տեսողաց. ընդ որս
կենակցութիւն ոչ համարի ընկերութիւն. այլ ստրկու-
թիւն: Քանզի գտանին ոմանք այնպէս գիրգք և
քնքուշք. ընդ որս վարիլն՝ է շրջիլ 'ի մէջ դիւր-
բեկ անօթոց. իբր զի երկնչին յոյժ 'ի թեթև հա-
ռածոյ և 'ի չնչին իրաց. մինչև կարծել վաղվաղա-
կի բեկանիլ: Աշտանան մեծապէս. թէ ոչ վաղ և
փոյթ ողջունեսցին յայլոց. կամ թէ չգնասցէ ոք
առ նոսա յայցելութիւն. կամ ոչ պատուեսցէ զնոսա
ըստ պարտն իցէ. կամ զի 'ի խօսակցիլն չասացա-
նմա՝ պարոն և ամիրայ. այլ տիրայր և եղբայր. և
կամ 'ի հարցանելն նորա. ոչ փութով պատասխա-
նեցին. կամ թէ զոր խնդրէրն՝ ոչ ընկալաւ: Որով
նմանին տղայածև ճիւաղ արձանաց. զորս չախոր-
ժէ ոք և տեսանել իսկ: Այս անկարգութիւն յառաջ
գայ 'ի հպարտութենէ և յաւելորդ սիրոյ անձնդիւ-
րութենէ. որով կամին. զի այլք ամենքին ծառայեսցեն.
և ըստ կամս նոցա վարեսցին. որ է բեռն անբառ-
նալի:

3. Ի համախմբութեամբ ընկերութեան մտերիմ սիրելեաց

ան

անվայելուչ է լինիլ կարի խիստ կշռուն անձանց. կամ խստութիւն առնել ընդ միմեանս քան առաւել և նուազ ազնուատոհմութե. կամ աղքատութեան. և այնպէս որոշել միմեանց տեղի կամ պաշտօն. կամ բաժին կերակրոյ՝ և այլն: Զի այսպիսի խստութիւնք ընդդէմ են վիճակի համամիտ և հաւասար ընկերութեան. մանաւանդ յուրախութե. վայրս և 'ի զբօսատեղիս. ուր մտերիմք և բարեկամք սովոր են խնդամիտ բերկրիլ: Բայց և զայն արժան համարիմ յուշ առնել. զի յայնպիսի տեղիս իւրաքանչիւրոք պարտի անձամբ անձին կշռել զ չափ իւր. և այնպէս տեղի տալ այլոց երիցագունից քան զինքն

զի այն է վայելուչ և պատշաճական:

4. Որք միանգամ վարին ընդ այլս. մանաւանդ ընդ բարեկամս. պարտին տարբերել յանձանց զ զայրացկոտ և զանընդել բարս. իբր զի՞ չէ արժան խռովիլ և զայրանալ ընդ այն ամ: որ անախորժ թուի հաճոյից կամ մտաց իւրեանց. ըստ որում և սովորութի է առնել ոմանց՝ գլխովին անկիրթ եղելոց. զորս և չէ հնար հաճել իւիք. կամ զիջուցանել 'ի բարկութե. զի դառն դիմօք և խիստ բանիւք վարին ընդ ամենին. որով և զընտանութի սիրոյն դառնու-

թբ իւրեանց խանդարեն և խռովեն:

5. Քաղցրահամբոյր միաբանութի 'ի կամս այլոյ՝ ախորժելի առնէ զկենցաղավարութի մարդոյ. ուստի և տմարդի բարուց է և այն, զոր առնեն ոմանք. իբր զի՞ յամ իւրս ջանան հակառակիլ կամաց այլոց. զինքեանս խնդրելով ընդ որ այլք ա-

խոր

խորժին. և 'ի խօսս ընդ դիմաբանելով և արհամարհելով զնմանին. յորմէ ծագի բազում անգամ կռուի և մեծամեծ խռովութիւն և թշնամութիւն։ Յայս ախտէ առաւելապէս նոքա պարտին զգուշանալ, որք վարին ընդ իշխանս և ընդ մեծամեծս, և որք փափաքին մտերմանալ և սիրելի լինիլ այլոց. զի այս ախտ զատելութիւն ծնանի, և ոչ զսէր բարեկամութեան։ Այսորոյ պատճառ է յաճախ ըստ նախակարգեալ 5. հանրական կանոնին, ուրանօր չիցէ մեղք կամ վնաս կամ ամօթ ինչ, զկամս այլոց՝ իւր առնել, և այնպէս վարիլ յամենայնի հաճոյս նոցա։ Եւ այս ո՛չ տխմարաբար իբր չինական ոք. և ո՛չ բռնի՝ որպէս զվարձաւոր. այլ ընտանի և մտերիմ սիրով։

6. Զիրք ազնուականութեան համարի զուարթամիտ բերկրութիւն դիմաց 'ի կենցաղավարութեան. վասն չէ պարտ լինել խոժոռահայեաց և կնճռադէմ. այլ արժան է զուարթութեամբ երեսաց՝ ցուցանել զքաղցրութիւն սրտին, մանաւանդ՝ եթէ գտցի ոք 'ի մէջ բազմութեան ընկերաց և բարեկամաց. ուր չէ պարտ լինիլ մելամաղձոտ, կամ կալ լռիկ և զատուցեալ յայլոց. զի այս եղանակ կենաց՝ 'ի նոսա և եթ լինի անմեղադրելի, որք ընդ երկար ժամանակս ուսան առանձնակեցութեամբ յընթերցմունս գրոց պարապիլ. որք և յոլովակի խորշին յընկերակցութենէ մարդկան։ Սակայն յայլս, որք յաճախ կենակցին ընդ մարդիկ, չէ առանց ստգտանաց։

7. Չէ օրէն ումեք դիւրապատրաստ գտանիլ

ուղ

ուղղելոյ զպակասութիւնս այլոց՝ և յա՛մի լինելն͞ց կարգադիր և կանոնաւոր . ասելով՝ թէ զայդ , զոր ասեսդ կամ առնես , մի այսպէս գործեր . կամ թէ այդ կերակուր և ըմպելի վնասակար է քեզ . և այլ այսպիսիք . զի այսօրինակ խրատ տուութիւնք են գործ վերնագունից . որ վարժապետաց , ծնողաց դաստիարակաց և բժշկաց : Այլ պարտ է իւրա– քանչիւր ումեք խնամ ունիլ սրբելոյ ՝ի փշոյ զիւր անդաստան . և ՝ի պակասութեանց այլոց առնուլ անձին խրատ ուղղութեան . զի մի այն ինչ՝ որ յայլս ստգտա նի , անձին իւրում իցէ առիթ մեղադրանաց : Վս͞ որոյ գեղեցիկս ասաց Թաղէս իմաստունն՝ ՝ի հարցա նել ցնա ումանց , թէ զի՛րդ հնար իցէ մարդոյ ան ստգիւտ կեանս վարել . Զոր ինչ յայլս ստգտա– նեմք , զայն մեք մի արասցուք :

8. Եթէ ոք ուղղադրեսցի յայլոց ՝ի բանս կամ ՝ի գործս իւր , և կամ ազդարարութիւն ընկալցի վասն սխալանաց ինչ , զոր գործեալ իցէ , չէ պարտ նմա դժուարիլ կամ ՝խոժոռ դէմս ցուցանել . այլ սի– րով և շնորհակալութ͞բ ընդունիլ արժան է . յիշելով զխրատ իմաստնոյն սոկրատայ , Առաւել մտերիմս և բարեկամս պարտ է համարիլ , ոչ որք զբանս մեր և զգործս գովեսցեն . այլ՝ որք զմեղանս յանդիմանեսցեն :

9. Նոյնպէս տգեղ է և անպատշանելի ՝ի մէջ ազնո– ւականաց զայրանալ և ցասնուլ՝ ՝ի լսելն յայլոց ըզ նախատինս կամ զարհամարհական բանս : Վս͞յ յայն պիսի դիպուածս , թէպէտ և կրեսցէ ոք ՝ի ներ

քուստ

քուսա, ոչ պարտի արտաքս երևեցուցանել զդժ-
ճարիլ իւր. այլ յուշ ինչ գրելով զլուծեալ բանն,
առանց ինչ այլայլութ. այնպէս պարտ է քաղաքա-
վարական սիրով վարիլ, ոպ թէ չէր ինչ հան-
դիպեալ։ Եւ զայս առեմք ըստ օրինաց մարդկա-
յին քաղաքավարութ, որ ՚ի գործ ածի ՚ի մէջ ազնուա-
կանաց. ապա թէ ոչ՝ ամօթ մեծ է քրիստոնէից
նեղացուցանել և դժուարիլ ընդ նախատինս և անարգա-
նս, զորս փոքր համբերեաց քն տէրն մեր կրել
և զնոյն ուսանդեաց հետևողաց իւրոց։

10. Չէ պարտ դիտելով հայիլ և զննել զբնական
պակասութիս այլոց, և հարցանել նց զպատճառ
այնր պակասութ. զորօրինակ՝ եթէ ոք միականի իցէ
կամ կարճատես և շլակն, կամ ունիցի արատ ինչ
՚ի դէմս. կամ իցէ կաղ և սապատողն, ևն։ Զի
զայն առնելն, է զպակասութի նր ՚ի դէմս հարկա-
նել. որ և լինի նման առիթ մեծապէս ամաչելոյ։

11. Չէ պարտ խնդալ կամ ծիծաղիլ ՚ի վր նելո-
թեց և կամ դժբախտ պատահարաց. որք դիպի
այլոց, թէպէտ և ըստ իրաց ինչ զուարճալի թուե-
ցի կամ ՚ի ծաղր շարժեսցէ. զի չէ պարտ այլում
առնել զայն ինչ։ ընդ որ ոչ ախորժի, թէ այլ
արասցէն նմա։ Աւստի յայնպիսի դիպուածս ար-
ժան է ըստ կարի վշտակից և ցաւակից լինիլ նց։

12. Չէ արժան ազնուականաց առ ՚ի ծաղր շար-
ժելոյ զայլս. առնել կատակերգութիս անվայել
վիճակի ազնուութե. զորօրինակ՝ թիւրել զաչս
և զբերանն. կամ յիմար ձևանալ. կամ պարել ևն

քանզի

քանզի չէ՛ օրէն սակս հաճելոյ զայլոց. անպատ-
տիւ առնել զանձն: Զայս կանոն իմա՛ ըստ արտա-
քին գործողութեանց. և ոչ ըստ բանից զուարճա-
խօսութեան. զոր հնար է և ազնուականաց երբեմն
ըստ տեղւոյն և ժամանակին վայելչապէս առնել.
որպ ա՛ւանդեցուք ('ի Գլ. 8. 5.)

13. Չէ՛ արժան ումեք ընդ խառնել զանձն 'ի
բանս և 'ի գործս այլոց. մանաւանդ յայնպիսի տե-
ղիս և 'ի տունս, ուր չունիցի ոք այնչափ համար-
ձակութիւն կամ ընտանութիւն. կամ' յայնպիսի իրս. որ
չիցէ առ ինքն պատշաճեալ. զի մի յոչ լինիլն ընդ-
ունելի. կրեսցէ զամօթ: Առաւելապէս պարտ է
զգուշանալ 'ի լինելոյ դատաւոր և օրէնսդիր 'ի
տան այլոց: Եւ և մտերիմ բարեկամաց. իբր ուղ-
ղել կամելով զոր ինչ միանգամ անպատշաճ կար-
ծեսցէ. յիշելով զխրատ ուրումն իմաստնոյ. թէ
Առաւել գիտէ տխմարն 'ի տան իւրում, քան իմաս-
տունն 'ի տան այլոց: Նոյնպէս և ոչ է՛ օրէն ումեք 'ի
մէջ օտար ազգի կամ քաղաքի անգոսնել և ծաղր
առնել զ'սովորութիւնս նց. թէ և իցեն խորթք
և տմարդիք. զի այնու հնա՛ր է, թէ ծագեսցին
թշնամութիւնք և ատելութիւնք: Թո՛ղ զայն. զի բազում
ինչ խորթ թուի ումեք. քզի չէ ինքն սովորեալ
'ի նոյն: Իսկ եթէ յիրաւի խորթ իցէ՛ և կշտամբե-
լոյ, պարտի զգուշանալ՝ զի մի և նոքա 'ի դէմ
բերցեն զանկարգութիւն ազգի և քաղաքի նորա.
ասելով՝ թէ երթ նախ բարեկարգեա՛ զքոյդ.
և ապա եկեսցես ուղղել զմերն. ըստ բանից ա-

ռակա

ւետարանին. Թէ Բժիշկ՝ բժշկեա՛ զանձն քո։
եւ Թէ Հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ա-
պա հայեսցես հանել զշիւղն յականէ եղբօր քո։
Մատթէոս .7. 5։

14. Չէ՛ պարտ լինիլ հետաքրքիր առ՚ի իմանալ
զծածուկս այլոց. կամ զհետ լինիլ գիտելոյ զայ-
պիսի իրս, որք ո՛չ պատշաճին ինքեան. կամ զոր
այլոք կամին ծածկել։ Ուստի չէ օրէն ունկն դը-
նել առանձին խօսակցութեան, որ լինի ՚ի ծածուկ
եւ եթէ ոք ըստ պատահման, կամ հետաքրքրութե-
կամ այլով օրինակաւ իրազեկ լեալ իցէ գաղտ-
նեաց ուրուք. չէ՛ պարտ յայտնել զայն այլում. ա-
պա թէ ոչ՝ մատնիչ եւ անհաւատարիմ համբաւի
այնպիսին. յորմէ խորշի ամենայն ոք։ ՚Ի կանոնէ աստ
յայտ է, թէ չէ՛ պարտ մերձ մատչիլ եւ առ նոսա
որք զնամակս ընթեռնուն կամ զողջունագիրս գը-
րեն. կամ դրամս հաշուեն. կամ որք առանձնա-
ցեալ իցեն ՚ի տեղւոջ ուրեք սակս գործոյ ինչ։
Ընդ կանոնիս արժան համարիմ յիշեցուցանել
ամենեցուն եւ զայն, զի թէ ուրուք իցէ գործ ինչ
առնելի ՚ի ծածուկ, պարտի առնել այնպիսի օրինա-
կաւ, որով ոչ տայցէ այլոց առիթ հետաքրքրի
լինելոյ։ Ուստի չէ՛ օրէն ՚ի մէջ բազմութեան՝ թո-
ղեալ զընկերսն նոցա, առանձինն ընթեռնուլ
թուղթս կամ խօսիլ յունկն ուրուք եւ կամ օտար
լեզուաւ խօսիլ ընդ ումեք։ Սակայն եթէ հարկ
ստիպեսցէ առնել, պա՛րտ է ներումն խնդրել
՚ի բազմելոցն։

15. Աչալրջութիւն ՚ի խօսս և ՚ի գործս պարտի լինիլ սեփական կատարելութեան ազնուականաց. ՚ի միջոցէ իւրէ զբաղմանս գուշակել, և ՚ի բազում անկերպարան իրաց զմի կատարեալ և անթերի ծանօթութեամբ բովանդակել. որով վայելուչ և անսադիւտ լինի կենակցութիւն ընդ այլս. (ըստ որում աւանդեցաք և ՚ի Գլ. 2. կան. 7: ) ՚ի կանոնէ աստի յայտ է, թէ զի՞րդ կառավարելի իցեն հետեեալ գործողութիւնք: Նախ՝ թէ չէ՛ օրէն անխորհուրդ խոստանալ ինչ ումեք, կամ ժամադիր լինիլ ընդ այլում. այլ կանխագոյն պա՛րտ է խոհեմութեամբ կշռել զչափ անձին, զվայելչութիւն խոստանալի իրին, և զդիպողութիւն ժամանակին և զայլ պարագայս. որով կարասցէ յետոյ ըստ պատշաճի կատարել զխոստացեալսն: Եւ եթէ ոք այսպիսի հասուն խորհրդով խոստացեալ իցէ ինչ ումեք, կամ ժամադիր եղեալ, պարտի անյապաղ կատարել. այլ թէ ոչ ստախօս համարի այնպիսին:

Երկրորդ՝ յոլովակի հանդիպի ՚ի կենցաղավարութիս, զի տեսանելով ոք զախորժական իրս ինչ առ ումեմն բարեկամի, գովէ յոյժ և ցուցանէ զհաճութիւն և զփափաք ստանալոյ զնմանն նորին: Յայսպիսի դիպուածս պարտ է խնամով գիտել, զի եթէ ՚ի մեծաց կամ յերախտաւորաց կամ ՚ի մտերիմ բարեկամաց ոք է, որ ցուցանէ զհաճութիւն ստանալոյ, քաղաքավարութեան համարի ընծայել նմա զախորժեալսն, թէպէտ և յայտնապէս չիցէ խնդրեալ բերանով: Սակայն ՚ի մատուցանելն անդ

չէ՛ պարտ ծանուցանել, թէ ընծայէ զայն վաս[ն]
խնդրելոյ նորա 'ի նմանէ. կամ թէ տայ նմա իբրև
պարգև ինչ. զի նուաստին չէ՛ անկ յուցանել նշա[ն]
մեծութեան առ վերնագոյն ոք: Ուստի վայելու[չ]
համարի այն եղանակ շնորհելոյ, որ 'ի գործ ած[ի]
յազնուականս. իբր զի գաղտ 'ի միմեանց առաքե[ն]
'ի տունս, առանց իմացումն առնելոյ, թէ յում.
մէ՞ իցէ առաքեալ: Ընդ այսորիկ յուշ առնել
արժան է և զայն առ 'ի զգուշութիւն. զի թէ ո[ք]
տեսցէ զախորժական ինչ առ ումեք, չէ՛ պար[տ]
գովել այնպիսի օրինակաւ, որով տայցէ առիթ
պարտաւորելոյ զնա յընծայումն իրին:

Երրորդ՝ ըստ նախաւանդեալ համրական կանոնի[ն]
(Գլ: 2. 2.) այն ինչ, որ անկ իցէ միայն վերն[ա]
գունի, զգուշալի է 'ի ստորնագունէ. զոր օրինակ
Հրաւիրել զոք 'ի տուն կամ 'ի ճաշ չէ՛ օրէն այ.
լում ումեք բայց 'ի տանուտնէն: Իսկ հրաւիրե.
լոյն ընաւ չէ՛ արժան զայլ ոք տանել ընդ իւր 'ի
սեղան, ուր ինքն առանձին իցէ կոչեցեալ: Ե[ւ]
և՝ եթէ մեծատուն կամ իշխանաւոր ոք հրաւ[ի]
րեսցէ զստորին ումն 'ի սեղան, չէ՛ պարտ նուա.
տին կարի իմն քաղաքավարական բանիւք յուցա.
նել, թէ հրաժարի. զի այսպիսի հրաժարմունք
ոչ յարմարին վիճակին նց, (թէ չկայցէ այլ բա.
նաւոր պատճառ հրաժարելոյ:) Կան և ինչ ին[չ]
անկարգութիք, որք չեն մեծ և յանդիմանելի, եթէ
տեսցին 'ի գիւղականս և 'ի ռամիկ ժողովուրդ.
սակայն յազնուականս են մեծ և ծանր տմարդու[թ]

որ[ք]

որք նուաստացուցանեն զճոխս կենցաղավարութեան, որպիսի են ցուցանել քաղց և զծարաւ, կամ հարցանել, թէ երբեւիցէ ժամ կերակրոյ. կամ ծանուցանել, թէ ծոմ կայ յայսչափ ժամուց հետէ. և կամ գնալ ՚ի խոհակերանոցն, առ ՚ի քննել և տեսանել զկերակուրս. կամ խօսիլ ընդ խոհարարին, թէ զի՞նչ պատրաստեալ իցէ. և այլ սոյին նմանք, զորս գտցես բովանդակեալ հետ ընդ հետէ ՚ի յաջորդ գլուխս։

## ԳԼՈՒԽ. Դ.

### Հեռանալոյ կոչոց առ կենցաղավարութիւն։

### Առաջին։

Պարտ չէ՛ բարեկրթաց անձանց աղտեղի երգս առնուլ ՚ի բերան՝ առանձինն, և մանաւանդ ՚ի մէջ բազմութեան։ Զգուշալի է ևս մռնչելով կամ սուլելով երգել և մատամբք նուագս հնչեցուցանելով շարժել զոտս կամ զձեռս։ Եւ ևս՝ եթէ ոք չունիցի ձայն ախորժալուր, անվայելուչ է նմա երգել ՚ի մէջ բազմութեան։ Սակայն եթէ թախանձանօք ստիպեսցի յայլոց, ջանդիցէ սակաւուք վճարել, խնդրելով զթողութի՛ ՚ի թախանձողացն, և պատճառելով զանբաւականութի անձին։

2. Չէ՛ պարտ խօսիլ անձամբ անձին ՚ի լինելն միայնակ առանձինն. պահելով զխրատ իմաստնոց, թէ չէ՛ արժան խօսիլ լեզուի, ուր չիցեն ականջք ՚ի լսել։ Քանզի այսպիսի սովորութիւն՝

բաց

քայ 'ի լինելոյ անհեթեթ գործողութեան եւ նշան թե-
թեւամտութեան, է եւս վտանգաւոր յոյժ. զի դիւրի
բազում անգամ յարթնութեան անզգաստութեամբ, եւ 'ի
գիշերի երազովք խօսիլ եւ պատմել զայնպիսիս,
զորս չկամիցի՝ թէ ոք գիտասցէ. յորմէ եւ կարէ
ծագիլ բազում վնաս եւ խռովութիւն, 'ի լսել այլոց
զբանս նորա:

3. Տգեղ է եւ անվայելուչ, զոր սովոր են ոմանք,
առնել ընդ ժամանակս ժամանակս, մանաւանդ 'ի
լինիլն զբաղեալ 'ի գործս ինչ առանձինն. այս է
թիւրել զբերանն, խփել կամ ամփոփել զաչս,
այտուցանել զծնօտս՝ կամ փչել, ժպտիլ, եւ եր-
բեմն՝ իբր ապուշ՝ բաց թողուլ զբերանն, կամ
'ի դուրս հանել զլեզուն, կամ խածանել զշրթու-
նս, եւ այլ ինչ բազում այսպիսի. որք համարին
տմարդութիւնք յառաջ եկեալք յանզգաստութենէ եւ յան-
մտադիր լինելոյ 'ի վերայ գործողութեանց անձին:

4. Չէ պարտ բարձրաձայն ծիծաղել, կամ յանյա-
մար տեղւոջ եւ անվայելուչ օրինակաւ, կամ 'ի
սովորութենէ եւ ոչ ինչ պիտելոյն: Եւ եւս ընդդէմ
ազնուականութեան համարի ծիծաղել 'ի վերայ աղտե-
ղի եւ անհամեստ իրաց եւ բանից, թէպէտ եւ
զուարճալի կարծեսցին. (զորմէ տես եւ 'ի Գլ. 3՝
II): Ընդ սոյին՝ պարտ է զգուշանալ 'ի հնչմանց
եւ 'ի ձայնից, որք խայթեն զլսելիս, եւ անախորժ
են ականջաց, որպիսի է կրճտել զատամունս,
քերել 'ի զուր զերկաթ, զպղինձ, զքար. կամ
յօրանջել, զզայուել եւ այլ այսպիսիք. զորոց տես

'ի

՚Ի յաջորդ գլուխդ։

5. Չէ՛ պարտ առաջի այլոց մատամբ խառնել զունչս կամ զականջս և կամ մաքրել զատամունս, որք զզուանս բերեն տեսողաց, Նոյնպէս տգեղ է և անվայելուչ մարդոյ զեղնգունս իւր թողուլ ը̄ երկար առանց հատանելոյ, Բայց ՚ի կամիլն հատանել, չէ՛ պարտ առնել զայն առաջի այլոց. այլ առանձինն։ Եւ՛ չէ՛ օրէն ատամամբք կտրել զայնս. այլ մկրատաւ և կամ զմելինաւ՞ որ հատարակօրէն սովորութ̄ի է առնել։

6. Պա՛րտ է մարդոյ զձեռս իւր մաքուր պահել. Նոյնպս զերեսս և զատամունս. առանց հեղգուե̄ լուանալով և մաքրելով զայնս որչափ ինչ հարկ լինիցի։ ՚Ի կանոնէ աստ չէ՛ պարտ զեղծանիլ և անկանիլ յաւելահոգութ̄ի, զի և այն խոտելի է յազնուականս։ ՚Ի մաքրելն անդ. զգուշալի է յոյժ թըքով սրբել զաղտս ձեռաց, երեսաց, հանդերձից, կօշկաց. Եւն̄. ը̄ որում սովորեն առնել ոմանք. մանաւանդ մանկունք։ Նոյնպս պա՛րտ է զգուշանալ ՚ի լուանալոյ զոտս առաջի այլոց. այլ առնելի է յառանձին տեղւոջ. ուր ո՛չ տեսցի յումեքէ։

7. Զզուելի է և անվայելուչ այն սովորութիւն. զոր ունին ոմանք յարհեստաւորաց իբր զի ՚ի ձեռնարկելն յաշխատութիւն կամ ՚ի գործ ինչ. թքանեն ՚ի մէջ ձեռաց և շփեն ը̄ միմեանս. որ է տեսանել ՚ի հողագործս. ՚ի հիւսունս, ՚ի թիակարշս. և այլն։ Որք թէպէտ և պատճառեն ըզդիւրութ̄ի գործոյն՞ այնպէս առնելովն. սակայն

կարէին

կարելին և այլով վայելուչ ճանապարհաւ գտանել զհնարս այնր դիւրութե։

8. Չէ պարտ հարկանել զոտս յերկիր առ ՚ի ջեռուցանել ՚ի ցրտոյ. կամ շփել զձեռս ը̄ միմեանս. կամ տանել զմատունս ՚ի բերան և շնչով ջեռուցանել. կամ ը̄ օրինի նաւավարաց և գիւղկանաց տարածեալ բազկօք հարկանել զձեռս զուսովք։

9. ՚Ի կալն առ հրով, և ՚ի ջեռնուլն՝ չէ պարտ ձեռօք խառնել զայն. կամ առնուլ զհուր ՚ի ձեռս. կամ վեր ՚ի վայր առնելով զմոխիր. նկարել ՚ի նմա զգիր և զձև։ Եւ ևս չէ օրէն կարի իմն հուպ մերձեցուցանել զձեռս ՚ի կրակն. և ստէպ ստէպ շփել ընդ միմեանս. կամ սարսռելով և շռնչելով ջեռնուլ կամ փչել ՚ի հուրն։ Որ առաւել ևս անվայելուչ է առաջի այլոց հանել զկօշիկս և վերացուցանել զոտս առ ՚ի ջեռուցանել. կամ դարձուցանել զթիկունս. կամ բանալ զկուրծս առաջի հրոյ. կամ չորացուցանել զգտակ և զթաշկինակ. և այլ այսպիսի խորթութիւնք. որք եղծանեն զշնորհս քաղաքավարութե։

10. Զզուելի իմն է. և գործ անկիրթ բարուց՝ ՚ի տեսանելն զաղտեղութիւն ինչ. կամ ՚ի կոխելն ը̄ պատահման ՚ի վերայ այնպիսի իրաց. ցուցանել զայն այլոց։ Եւ որ առաւել անվայելուչն է. մատուցանել յըռնգունս այլոց զգարշահոտ ինչ առ ՚ի հոտոտել. և ՚ի խորշիլն նոցա. թախանձանօք ըստիպել. ասելով. փու փ. հոտոտեցէք. և տեսէք

թէ

թէ զիա՛րդ գարշելի է. զոր յաճախ պարտ էին ծածկել. զի մի տեսցեն այլք և գարշեսցին:

II. Ընդ այսոսիկ արժան համարիմ յիշեցուցանել և զայն զգուշալի տմարդութիւն. որ է քօղով քաղաքավարական բանից տեսանի 'ի բազումս անխըրատս. իբր զի՛ կամելով ոմանց զանվայելուչս գործել կամ խօսիլ. ներումն խնդրեն 'ի մերձակայից. զի մի երևեսցին տգէտք քաղաքավարական կըրթուէց. և ապա տմարդութք ասեն կամ առնեն. զոր կամին: Սակայն այնու՝ առաւել և յայտնեն. թէ չեն տեղեակք քաղաքավարութեան. ապա թէ ոչ՝ պարտ էր նոցա յաճախ ընտրել զվայելչապէս առնելն. քան տմարդութեամբ պարսաւելի լինիլ: Թո՛ղ զայն. զի ներումն խնդրելով. որոց միանգամ չէին մտադիր գործոյն. յուշ առնեն՝ զի գիտասցեն. ուստի և նախատ լինին յայլոց:

## ԳԼՈՒԽ. Ե:

### Կանոնք առ բնական գործողութիւնս ինչ մարմնոյ:

Են ինչ ինչ մասնաւոր գործողութիւնք 'ի մարդիկ. որք հասարակօրէն դիպին 'ի կենցաղավարութ. և պատճառին իբր 'ի ստիպելոյ բնութեան. որպիսի է հազալն. փռնգալն. յօրանջելն հառաչել. ձգռտալ. զգայռել. թքանել. խնչել. թերթերիլ և քորել զմարմին. առ որս կարգին հետևեալ կանոնքս:

I. 'Ի հազալն. որպէս և 'ի փռնգալն՝ չէ պարտ մե-

ծաձայն աղաղակս բարձրացուցանել. այլ և կարի
մեղմով առնելի է. զի մի խայթեսցէ զունկն լսո-
ղաց։ Իսկ եթէ ոք անձեռընհաս իցէ զպահել
զանձն սակս տկարութե. պարտ է նմա զձեռն կամ
զթաշկինակ ըմբռնել 'ի վերայ բերանոյն. որ խա-
փանէ զսաստկութ ձայնին. և միանգամայն կարգի 'ի
վայելչութե տեսողաց։

2. 'Ի փռնգալն պարտ է 'ի մի կողմն դարձուցանել
զերեսս. զի մի ցայտմունք թքոյ սրսկեսցին 'ի
վերայ այլոց։ Բայց վայելուչ ևս է, վաղվաղակի
թաշկինակաւ արգելս դնել հանդէպ բերանոյն.
որով դիւրին լինի յետոյ սրբել վայելչապէս և
զսրսկմունս թքոյ. թէ կայցէ 'ի վերայ իւր։ 'Ի
փռնգալ ուրուք՝ պարտ է մերձ եղելոցն յառա-
նումնուագի և եթ՝ բարեմաղթել նմա զկենդա-
նութի. ըստ որում սովորութի է առնել գրե-
թէ յամենայն ազգս. ասելով Առողջութիւն։
Որում պարտի և փռնգայօղն յարգութե պատաս-
խանել. Շնորհակալ եմ. կամ շնորհընկալ եմ
Այս հնաւանդ սովորութի բարեմաղթութե երևի
սկիզբն առեալ անտի, զի որովհետև փռնգալն
պատճառի յաւելորդ հիւթոյ հաւաքելոյ 'ի
գլուխն կամ յուղեղն, որում կարէր վնասել. և-
թէ մնայր անդ 'ի ներքս. վսն և մարդիկ սովորեցան
խնդակից լինիլ միմեանց 'ի տեսանել անդ զնշանա-
կար հիւթն վարեալ արտաքս փռնգալով։ Կամ
ըստ ասելոյ ոմանց. այս սովորութ մուծաւ 'ի փռնգն
դահմայուէ նախնի հեթանոսաց. որով 'ի փռնգն-

գալոյ ուրուք գուշակելին ըստ ժամանակին։ զյաջողութիւն կամ զձախորդութիւն. յոյր սակս իսկ սահմանեցաւ ասել բարեմաղթութեամբ առողջութիւն, յոր միտս հայի եւ ասելն ուրեք ուրեք 'ի կողմանս Եւրոպիոյ.

Գոտ Եըլէ. այսինքն Ած պահեսցէ։

3. Յօրանջելն 'ի կենցաղավարութեան՝ համարի նշան ձանձրութեան եւ թուլութեան։ յորմէ պարտ է զգուշանալ քաղաքավարին։ Սակայն՝ եթէ դիպեսցի երբեմն յօրանջել. պարտ է զձեռն 'ի դէմ դնել բերանոյն. եւ ոչ անաստաբար կաղկանձել. կամ իշանման բերանաբաց զռնչել։ Զգուշալի է եւս մեծապէս. զի մի 'ի յօրանջելն ոք՝ միանգամայն եւ խօսեսցի. այլ 'ի խօսիլն. եթէ գայ յօրանջ. կամ պարտի բռնել զսպել. եւ կամ սակաւ մի լռել. մինչեւ անցցէ։ Զնոյն զգուշութիւն պարտէ ունիլ. յորժամ ունկնդրէ ոք խօսակցութեան այլոց. եւ նստեալ կայ 'ի մէջ բազմութեան. զի յօրանջելովն ցուցանէ՝ թէ ձանձրացեալ է յունկնդրութենէ նոցա։ Առ դիւրաւ կատարումն կանոնիս. պարտ է մարդոյ պահել զանձն միշտ 'ի զգաստութեան, եւ կրթել 'ի նոյն 'ի լինելն միայնակ. զի 'ի սովորել բնութեան, անաշխատ կարէ զսպել զինքն՝ եւս եւ յանզգաստութեան։

4. Հառաչանքն թէ լինիցի չափով 'ի պատշաճ ժամու կամ յառթի՝ վայելուչ է. ապա թէ ոչ՝ տմարդութիւն եւ յիմարութիւն համարի։ Այլ ոչ բարւոք գործեն, որք ըստ ժամանակս ժամանակս առանց ինչ պատճառի՝ վա՜յս եւ ախս գոչեն. յորմէ պարտէ զգուշանալ՝ մանաւանդ 'ի վերայ սեղանոյ, եւ 'ի հա-

սարակ

սարակ խօսակցութեան ։

5. Զգուշալն չէ յայնպիսի իրաց, որոյ գուցէ վայ ելուչ. կամ զոր հնար իցէ վայելչապէս գործել. զի գոլով շարժումն ինչ բռնական պատճառեալ յստամոքսէ, լինի ակամայ. ուստի այն է նորին վայելչութիւն. զի է սկսանիլն և խափանեսցի. որ կարէ լինիլ թուքս կուլ տալով. կամ սակաւ մի ջուր կաթիլ կաթիլ ըմպելով ։

6. Զգայուելն հասարակօրէն հանդիպի զկնի կերակրոյ. և է բուռնի ստիպումն ինչ բնութ. պատճառեալ 'ի ծանրութենէ ստամոքսին և յաւելորդ օդւոյ, զոր թոքն արտաքս ընէ ։ Առ վայելուչ գործելոյ զայս՝ չունիմք ինչ ասել. բայց եթէ՝ է կարի արժան է ջանալ առ 'ի զսպել զանձն կամ խափանել. զոր և հնար է առնել կրթութբ ։ Իսկ եթէ ումեք անկար իցէ խափանել. պարտի մեղմով և անձայն գործել. դարձուցանելով զերեսս 'ի մի կողմն, և դնելով զձեռն 'ի վր բերանոյն, զի մի շունչն, որ 'ի դուրս ելանէ՝ ծանուցեսցի յերեսս այլոց, և զզուեցուսցէ ։

7. 'Ի թքանելն՝ չէ պարտ բարձրաձայն խուխալ և արկանել զխորխս առաջի աչաց այլոց. այլ 'ի մի կողմն, ուր ոչ տեսցի յումեքէ ։ Եւ չէ պարտ յօժ հեռի թքանել. և կամ 'ի թիկունս կոյս. այլ ոտք առաջք, 'ի մի կողմն՝ սակաւ ինչ 'ի բացի ։ Դարձեալ՝ չէ օրէն թքանել 'ի հուր, կամ 'ի մոխիր կրակարանի. և ոչ է պատուհանն 'ի հասարակաց ճանապարհ՝ ուր երթևեկք անցաւորաց անպակաս իցեն

իցեն, առանց հայելոյ թէ իցէ ոք, որ անայանէ ընդ այն:

8. ՚Ի խնչելն և ՚ի սրբել զռունգս՝ պա՛րտ է ՚ի կիր առնուլ զթաշկինակ՝ և ոչ երբեք զմանկունս ձեռօք կամ թեւանեօք սրբել: Նոյնպէս զգուշալի է ձեռօք խնչել նախ ՚ի գետին, և ապա մաքրել զռունգն թաշկինակաւ, որպ սովոր են առնել գեղջուկք և ռամիկքն ՚ի մարդկանէ: Եւ ևս՝ յորում կողման թաշկինակին սկսաւ ոք զառաջինն խնչել, զնոյն՝ կողմն պարտի միշտ ՚ի գործածել և ոչ անխտիր ո՛ր կողմն և հանդիպեսցի. կամ որ տգեղ ևս է. յետ աղտեղելոյ միոյ կողման թաշկինակին, ըս կիզբն առնել միւսոյն, կամ յերկուս ծալելով՝ ՚ի գործածել: ՚Ի խնչելն՝ վայելուչ է միով ձեռամբ ըմբռնել զթաշկինակն. և չէ պարտ զռունգս երբեք զփող հնչեցուցանել. ըստ որում սովորութիւն է ոմանց, որք և առ սաստկութեն շարժեն զգլուխ: և զձեռս իւրեանց, և այսուցանեն զերեսս: Զկնի խնչելոյ կամ մաքրելոյ զռունգս, չէ օրէն ամենևին հայիլ կամ զննել զեղեալսն ՚ի թաշկինակին:

Ընդ այսմիկ պատշաճ համարիմ յիշեցուցանել ինչ ինչ և այնմ, որ ունի սովորութի քարշելոյ ըզքթախոտ: Նախ՝ ՚ի ձգելն քթախոտ, չէ պարտ ըմբռնել զտուփն ՚իներքոյ ռնգանց, պատճառանօք՝ զի մի արտաքս թափեսցի. բայց սակս զգուշութե առ ՚ի չվատնել ՚ի զուր զքթախոտն, լաւ ևս է սակաւ առնուլ և հանդարտ քարշել: Իսկ զկնի քարշելոյ չէ պարտ գեղջկօրէն ձեռօք սրբել

զռունգս

զունչս, այլ Թաշկինակաւ։ Երկրորդ՝ անվայելուչ և անկարգ սովորութիւն է, զոր ունին ոմանք փոյթ ընդ փոյթ և առանց հարկի ձգելոյ զքթախոտ. որով և համապազ աղտեղեալ ունին զունչս և զկուրծս հանդերձից իւրեանց 'ի պէճգանս տեսողաց. յորմէ պարտ է զգուշանալ։

9. Թեքթեքիլն կամ ձգձգիլն մարմնով. տարօծեալ ունելով զձեռս և զբազուկս՝ է գործ ամանդի բարուց, որ ոչ այնչափ յառաջ գայ 'ի բուննատխպելոյ բնութեան, որչափ 'ի հեղգութեան և 'ի թուլութէ. զոր պարտ է մարդոյ վտարել յանձնէ. ընկարի զսպելով զինքն և արիացուցանելով։

10. Ոչ է պարտ առաջի այլոց քորել զմարմին, և քթուխիլ. ըմբռնելով զլու կամ զոչիլ և ձեռօք ճմլել։ Սակայն եթէ ոք կարի խիստ նեղեսցի 'ի մամաջմանէ ( որ 'ի կեռայոյ. ) կարէ մեղմով խիստ քորել. բայց այնպէս, զի մի տեսցեն այլք։ Ուստի վայելուչ համարի ( թէ հնար իցէ, ) հեռանալ ուրեք առանձինն, և այնպէս առնել։

11. Աճարել զկարիս որովայնի՝ է հարկ ինչ բնական, զոր անհնար է խափանել առանց վնասու կենաց. այլ զի լիցի այն մարդկօրէն և ոչ անասնաբար պարտ է նկատել և զգուշանալ նախ՝ զի կատարեսցի ուրեք յառանձնական տեղւոջ. և այն՝ ոչ յորպիսի և իցէ առանձին տեղւոջ. այլ յայնպիսի, որ իցէ որոշեալ առ այն կարեաց։ Երկրորդ՝ զի յորժամ ոք հանդերձեալ է գնալ 'ի կարիս բնութեան, չէ պարտ յանդիմանն այլոց վեր առնուլ զհանդեր

ձս

ձրս, և պատրաստիլ 'ի նոյն. կամ բանիւք յայտնել թէ ստիպի 'ի հարկէ։ Երրորդ՝ յետ կատարելոյ զկարիսն, չէ՛ օրէն առաջի այլոց լուանալ զձեռս կամ վաղվաղակի երթալ և բազմիլ ընդ այլս. բայց եթէ փութացեալս վճարեալ իցէ զգործն։ Զի այսպիսի նախընթաց և հետևորդ գործողութիւնք՝ տեղւոյ յիշատակել տան զզուելիս, և զանուանս բերեն։

## ԳԼՈՒԽ. Զ։

### Կանոնք վասն Այցելութեան։

Քաղաքավարական պարտաւորութիւն է փոխարէն գնալ 'ի տեսութիւն այնոցիկ, որք միանգամ եկեալ իցեն ումեք յայցելութիւն։ Այլ մի՛շտ վայելուչ համարի նուաստին յառաջել քան զմեծն և 'ի տես գնալ, մինչչև իցէ մեծին եկեալ առ նա։

I. Յորժամ հանդերձեալ է ոք գնալ ուրեք յայցելութիւն, պա՛րտ է նմա զգենուլ հանդերձս մաքուրս և վայելուչս՝ ըստ պահանջելոյ ժամանակին և հանգամանաց անձինն, առ որ 'ի տես գնայ։ Եւ զի այս տեսութիւն գնալս լինի զանազան պատճառաւ, ըստ այնմ պարտի յարմարել և զհանդերձն զոր օրինակ՝ 'ի կամիլն գնալ 'ի սուգս մեռելոյ կամ 'ի տեսութիւն սգաւորի, օրէն է զգենուլ թխատեսակ հանդերձս. կամ ընդ հակառակն՝ թէ գնայ 'ի խնդակցութիւն

ուրուք

ուրուք, արժան է զգենուլ հանդերձս պայծառս

2. 'Ի գնալն 'ի տուն այլոց. չէ օրէն բնաւ մտանել 'ի սենեակ առ բարեկամն՝ նախ քան զազդելն նմա 'ի ձեռն ընտանեաց տանն կամ սպասաւորաց զգալուստ իւր: Եւ եթէ իցէ բարեկամն առանձնացեալ ուրեք կամ զբաղեալ 'ի գործս, և կամ 'ի քուն. պարտ է ցուցանել յառաջ զյօժարութի սպասելոյ քան անհանգիստ առնել զնա: Իսկ եթէ ընտանութի ուրուք համարձակեսցուք մտանել 'ի սենեակըն, ուր կայցէ բարեկամն. պարտէ նախ մեղմով իմն և առանց տագնապի բաղխել զդուռն սենեկին, (թէ փակ իցէ,) և կամ յայտնել ձայնիւ զգալուստն: Եւ իբրև ազդ լինի մտանիլ 'ի ներքս թէ փակ իցէ դուռն սենեկին, պարտ է մեղմով բանալ. (որպ և յելանելն արտաքս, զնոյն զգուշւորութի պիտոյ է ունիլ 'ի փակելն:) Եւ ևս 'ի մտանելն և յելանելն չէ օրէն բաց թողուլ զդուռըն, այլ փակել՝ որպ և եգիտն:

3. 'Ի տեսանել զբարեկամն, որում այց ելանէ ոք պատշաճ է ողջունիւ սիրոյ և բարեմաղթութեամ սկիզբն առնել իւրում այցելութեն. զորոյ զեղանակըն ուսուցէ սովորութին քաղաքաց ը որում աճա դեպաւ ('ի Գլ. 2. 4:) Եւ յետ ողջունի պարտ է յայտնել զպատճառ 'ի տես եկաւորութեանն. որ կարէ լինել այլ և այլ՝ ըստ բերելոյ առթին. զի եթէ 'ի խնդակցութի է, պարտի խնդամիտ բերկրանօք և զուարթութբ բանից վարիլ: Եթէ 'ի ցաւակցութի ազգ, (որ և ասի [illegible] գնալ.) պարտ է

է զպա՛տ սրտին անկեղծութ՟ ցուցանել. և մխիթարա-
կան բանիւք սփոփել։ Իսկ եթէ իցէ իբր փոխա-
րէն այցելութ՟. պիտոյ է վայելուչ օրինակաւ ծա-
նուցանել և զայն, պարտաւոր ցուցանելով զանձն
՚ի վճարել առ չնորհս նախկին այցելութե՟ նորա։
Եւ ապա՝ թէ իցեն անդ և այլ անձինք. պարտ է
զն՟ս ևս ողջունել խոնարհական բանիւ՟։ Յետ այ-
նորիկ չէ՛ օրէն եկելոյն վաղվաղակի նստիլ, մինչ-
չև իցէ հրաւիրեալ առ այն, և յորժամ հրաւիրես-
ցի՝ յանձն առցէ նստիլ առանց կրկնել տալոյ
զհրաւիրումն աւելի քան զերկու անգամ։ Սակայն
՚ի նստիլն անդ պարտ է վարիլ ըս՟տ կանոնին, զոր
ունիմք աւանդել ՚ի Գլուխ. II. I. 2։

4. Եթէ գալստեամբ ուրուք ընդհատի խօսակ-
ցութիւն այլոց, պարտ է եկելոյն աղաչել, զի մի՛
դադարեսցին ՚ի բանից իւրեանց. այլ առանց ցուցա-
նելոյ զհետաքրքրութի՟ իմանալոյ զայն, զորմէ է խօ-
սակցութի՟ն։ Եւ ևս չէ՛ օրէն վաղվաղակի ընդ-
խառնել զանձն ՚ի բանս ն՟ց. այլ պիտոյ է լռութե՟
միտ դնել, մինչև ծանուցեալ տեղեկասցի զիրացն
և եթէ հարցցի, յայնժամ պատասխանի տացէ։
Յայս կանոն առաւելագոյն պարտ է միտ դնել, յոր-
ժամ գնայ ոք ՚ի տես մեծի և իշխանաւորի ուրուք,
զի յետ տալոյ քաղաքավարական բանիւ՟ զպատ-
ճառ այցելութեան իւրոյ, չէ՛ օրէն յետ այնր նոր
զրոյց ՚ի մէջ առնուլ. այլ պիտոյ է սպասել, զի
նա ինքն վերնագոյնն սկսցի խօսիլ կամ հարցանել.
ապա և նմա ա՛նկ իցէ պատասխանի առնել։

5. ՚Ի տես գնալն առ այլս վասն քաղաքավարութեան և եթ, պա՛րտ է խոհական ընտրութեամբ վարիլ, մանաւանդ ընդ մեծամեծս և ընդ զբաղեալ անձինս. զի չէ՛ արժան կարի յամենալ առ նոսա, և խափանարար լինիլ գործոց նոցա։ Այլ եթէ ծանիցէ՛ ոք, զի անձն այն՝ որում ՚ի տես գնայցէ լիցէ, ցանկայ վաղվաղակի վճարել զընդունելութիւն այցելութեան, պարտ է եկելոյն փութով տալ զհրաժարական ողջոյնն, և մեկնիլ ՚ի նմանէ։

6. ՚Ի հրաժարելն յումեքէ առ ՚ի գնալ, պարտ է վերստին նորոգել զառաջին քաղաքավարական բանս իւր՝ հանդերձ խոնարհական բարեմաղթութեամբ ըստ հանգամանաց անձին։ Եւ եթէ կամեսցի տանուտէրն ընկերակցիլ ընդ նմա մինչև ՚ի դուռն, պարտ է հրաժարելոյն աղաչել, զի մի աշխատեսցի. ապա թէ՝ ոչ հաճեսցի նա լուել, յետ փոքր մի ընկերակցելոյ՝ միւսանգամ աղաչեսցէ. իսկ եթէ նա տակաւին յօժարեսցի գալ. պարտ է սիրով և խոնարհական բանիւ՛ շնորհակալ լինիլ զնմանէ և լռել մինչև ՚ի տեղին, ուստի ունի բաժանիլ ՚ի նմանէ. ուր միւսանգամ նորոգելի է հրաժարական ողջոյնն մնաս բարովի։

7. Յորժամ գնայ ոք ՚ի տես բարեկամի. չէ՛ օրէն հետաքրքրութեամբ լրտեսել զինչս նորա. կամ զննել զկահս տանն. և ձեռօք մերձենալ ՚ի նոսա. մանաւանդ ՚ի գրուածս և յողջունագիրս. բայց եթէ կարի ընտանութիւն զնոյն ներեսցէ առնել. թէպէտ չառնելն միշտ վայելուչ է. զի այս բայ ՚ի լինելոյ

ամար

տմարդութիւն, է եւ վշտացուցիչ եւ անախորժ այլոց ։
8. Յորժամ գնայ ոք 'ի տեսութիւն հիւանդի, թէ
պէտ եւ պարտի հարցանել զորպիսութիւն նորա 'ի նը-
ջանակ կարեկից լինելոյ, եւ ակնունելոյ լուր զբա-
րի նշան առողջութեան, սակայն չէ պարտ ընդերկար
կալ առ նմա, եւ առնել զընդունայն խօսակցութիւնս
որով վշտացի եւ ձանձրացի հիւանդն ։ Եւ եւս
չէ օրէն բարձրաձայն խօսիլ կամ ծիծաղիլ եւ եր-
գել. կամ պատմել զերկիւղալի իրս եւ զմահուա-
նէ. կամ յիշատակել զգուժելի իրս, որ նողկանս
բերեն հիւանդաց ։ Այլ եւ պարտէ զգուշանալ 'ի
բազում հարցմանց առնելոյ զորպիսութենէ նորա,
որով հասարակօրէն վշտանան հիւանդք. վասն որոյ
լաւ եւս է տեղեկանալ զայն յայլոց կամ յընտանեաց
տանն, զի մի տաղտկութիւն տայցէ հիւանդին ։ Դար-
ձեալ պարտէ մեծապէս զգուշանալ, զի մի 'ի գը-
նալն առ հիւանդս' վաղվաղակի արասցէ զգործ
բժշկի. կանոնելով դեղս եւ սահմանելով կերա-
կուրս վասն նորա ։ Եւ որ առաւել զգուշալին է. չէ
օրէն ամենեւին պախարակել զդեղս եւ զկարգադը-
րութիւնս բժշկին. զոր արարեալ իցէ նմա ։ Եւ եւս 'ի
գնալ ուրուք առ հիւանդս' չէ պարտ զանախորժ
դէմս ցուցանել սակս զզուելի հոտոյ, թէ կայցէ
'ի սենեակ հիւանդին. կամ խնուլ զունչս եւ վաղ-
վաղակի մեկնիլ անտի. ծանուցանելով' թէ վասն հո-
տոյն չկարէ ընդ երկար նստիլ առ նմա. զի այսօք
առաւել վշտանան հիւանդք եւ նեղասրտին ։ Սա
կայն եթէ կամեսցի փութով մեկնիլ, օրէն է քաղ-

ցրութ

ջուք պատճառել զհանգիստ հիւանդին. իբր զի
նորա առանձին առաւել հանգչին, քան ընկերակ-
ցութ՟ ընդ այլս. վս՟ մի լինի ինձ տալ ձեզ նեղու-
թի՟ աւելորդ պարտի ելանել արտաքս. հանդերձ
խնդրելով և բարեմաղթելով յոյ՟ զառողջութի՟
նորին: Իսկ եթէ հիւանդն ծանրացեալ լինի տկա-
րութբ՟, պարտ է քաջալերել և մխիթարել. ոչ միայն
հոգևոր աստուածայնովք՝ այլ և բնական հանճա-
րաւոր իմաստիւք, և զուարճալի բանիւք՝ի փարա-
տումն ցաւոյ նորա. այլ այս ամ՟ լինի չափով:
Այսչափ ինչ յաղագս ՚ի տես գնալոյ. ասասցուք և
վս՟ ընդունելոյ զեկեալն ՚ի տեսութի՟:

9. ՚Ի գնալ ուրուք առ այլս վս՟ այցելութե՟, չէ
պարտ ընդունողին սպասել տալ նմա առ դրան
կամ արտաքոյ սենեկին. այլ պիտոյ է վաղվաղակի
հրաւիրել զնա ՚ի ներքս: Իսկ եթէ նա, որում
անկ լինի ընդունել զեկեալն՝ գտանիցի անպատրաստ
կամ կիսահագուստ. կամ այնպիսի զգեստուք,
որով երեւելն առաջի այլոց անվայելուչ է. և կամ
՚ի կարևոր գործս ինչ զբաղեալ. զոր անհնար լինի
նմա թողուլ ՚ի ձեռաց, օրէն է յայնժամ քաղցրու-
թբ՟ ներումն խնդրել յեկելոյն, և աղաչել զի ան-
պարտ արասցէ զանձն ՚ի մեղադրանաց. որ չկարէ
փութով սպասաւորել սիրոյ այցելութե՟ նր՟:

10. Եթէ եկեալն լինի պատուաւոր ոք. պարտ է
ելանել ընդ առաջ նորա ՚ի սրահն արտաքին կամ ՚ի
գլուխ սանդղոյն. և երբեմն ևս մինչև ՚ի դուռն
տանն. ըստ պահանջելոյ արժանապատուութե՟ եկելոյն

Իսկ

Իսկ եթէ եկեալն հաւասարավիճակ իցէ ընդունողին. շատ է յառնելն՝ ի տեղւոջէն և գնալ ընդառաջ նորա՝ ի նմին սենեկի կամ՝ ի սրահի. ուր հանդիպի նմա։

11. Յետ բարևելոյ զեկեալն քաղաքավարական բանիւք. պարտ է վաղվաղակի հրաւիրել զնա առ՝ ի նստիլ. մատուցանելով նմա զպատուաւոր տեղին. և պարտի հրաւիրողն ևս մերձ նստիլ. այլ և վայելուչ բանիւք խօսակից լինիլ. զբօսանալով ամենևին. զի մի տայ կարծիս ինչ ձանձրութեան կամ տհաճութեան ընդ գալուստ և ընդ յամենալ նորա։

12. Եկեալն՝ ի տեսութիւն յորժամ կամեսցի գնալ. պարտ է ընդունողին յետ քաղաքավարութեան շնորհս մատուցանելոյ վասն գալստեան նորա. ընկերակցիլ ընդ նմա. բանալով զդուռն սենեկին. և գնալով մինչև յարտաքին սրահն. կամ՝ ի սանդուղսն։ Իսկ եթէ հիւրն՝ ի յոյժ պատուաւորաց իցէ. օրէն է ելանել ընդ նմա՝ ի փողոցն. և կալ անդ մինչ՝ ի մեկնիլ նորա անտի։

Այլ որ ինչ յաղագս ընդունելութեան ք̃ զխրախճանսն իցէ. զոր պարտ է առնել եկելոյն ուսուսցէ վայելուչ սովորութիւն իւրաքանչիւր քաղաքի և ազգի։

Գ. ԼՈՒԽ.

## ԳԼՈՒԽ. Է.

### Կանոնք՝ զորս պարտ է պահել 'ի ժողովսն.
### ( որ 'ի ժողովրդանոցի: )

Ի ժողովս ասի՝ յորժամ բազում մարդիկ 'ի միասին գումարին առ 'ի խորհիլ զիրաց ինչ:

Արդ առ 'ի լինել այնմ ըստ կարգի, պարտ է գումարելոյն 'ի նմա վարիլ խորհրդով և աշալուրջ զգօնութեամբ առաւել քան 'ի հասարակ կենցաղավարութեան. զի կարասցեն բարւոք և անխռով մտօք 'ի գլուխ տանել զիրսն. յոր սակս ժողովեալք իցեն:

1. Չէ պարտ ժողովելոյն լինել շահասէր կամ բարեկամ օգտի իւրեանց. և մի նախանձոտ կամ ատեցող ընկերս. կամ այլ կիրք ինչ զգածեալ որով թիւրեսցեն զիրաւունս. այլ լիցին ցանկացող օգտի և բարւոյ հասարակաց. այլև անտարբեր ընդ ամենեսին. զի թէ ըստ կամս նոցա ոչ վճարեսցին խորհուրդքն. մի կրեսցեն վիշտս և զանհանգստութիւն սրտի:

2. Զխորհուրդն առաջարկել 'ի ժողովսն՝ երիցագունից է, և կամ նոցա. որք որոշեալ իցեն վասն այնր: Սակս որոյ չէ պարտ այլում ումեք խօսիլ մինչչև իցէ հարցեալ. և չէ օրէն ասել զկարծիս յառաջ քան զնոսա, որք կարգաւ և հասակաւ երիցագոյնք իցեն, այլ պարտ է պահել կարգի:

3. Յասել ուրուք զկարծիս իւր՝ չէ պարտ լինել մտավոր 'ի պնդել զասացեալսն, մանաւանդ թէ կամելով

բանի

բունի հաւանեցուցանել զլսօղսն։ Ի՜նչ ևս պարտ է 'ի մէջ ժողովոյ խօսիլ որոշ և համառօտ, զի մի ձանձրութիւն տայց լսողաց

4. 'Ի դիմադրելն կարծեաց այլոց. պարտ է զգուշանալ 'ի կծողական բանից կամ յարհամարհանօք պատասխանելոյ։ Ե՜ւ չէ պարտ հատանել կամ խափանել զխօսս այլոց, իբր առ ոչինչ համարելով զասացեալսն. զի 'ի ժողովլի օրինօք թոյլատրեալ է ամենեցուն ասել համարձակ զիւրեանց կարծիս։

5. Չէ պարտ 'ի մէջ ժողովոյ ծաղր առնել զոք կամ ծիծաղել և անգոսնել զխորհուրդս այլոց՝ թէ պէտ և իցեն չնչինք և անտեղիք կամ անհիմն ասացեալքն նոցա։ Այլ օրէն է քաղցրութեամբ զանցանել զբանիւք նոցին, զի մի տմարդութեամբ արհամարհութիւն լիցի սիրոյ ընկերին։

6. Եթէ կարծիք բազմաց հակառակ իցեն միում ումեք, պարտ է նմա լռել. և ոչ յաւելուլ 'ի պնդել զիւր կարծիս, և անգոսնելով գորովել զայլս, իբր տգէտս և անիմաստս, որպէս թէ՝ ոչ իմանան զզօրութիւն բանից նորա. այլ մանաւանդ պարտի զկարծիս բազմաց ընտրելագոյն համարելով՝ անսալ նոցա. զի ըստ առածին՝ բազում ինչ տեսանեն աչք քան ակն։ Նոյնպէս ևս եթէ խորհուրդք կամ վճիռ ժողովոյն ոչ կատարեսցի ըստ կամս ուրուք, չէ պարտ նմա ցուցանել զտհաճութիւն կամ զանախորժ դէմս։ Ի՜նչ եթէ ոչ յաջողեսցին խորհուրդք ժողովոյն կամ ոչ 'ի գլուխ ելցեն գործքն, չէ օրէն ամենե-

ւին

ևչին ասել, թէ վ՟ս զի ոչ հետևեցան կարծեաց ի-
մոց, կամ արհամարհեցին զբանս իմ և ոչ անսացին,
վ՟ս այն ոչ յաջողեցան գործքն։ Զի այսպիսի բանք
ընդդէմ են սիրոյ, և են նշան հպարտութե՟. որք
զզուելի և ատելի առնեն զմարդ։

7. Յետ արձակելոյ ժողովոյն՝ պարտ է ժողովե-
լոյն՝ 'ի ծածուկ պահել զխորհուրդ իւրեանց. և
ոչ յայտնել ումեք՝ կամ խօսիլ զայնպիսի իրաց. զի
այս է պատճառ և առիթ խռովութե՟ և մեծամեծ
անկարգութեց, որք կարեն զհետ գալ այնմ։ Եւ և
նոքա՝ որք չիցեն մտեալ 'ի ժողովն, ոչ պարտին
հետաքրքրութե՟ հարցանել զայնմանէ. և կամիլ իմա-
նալ զխորհուրդս ժողովելոյն։ (ըստ որում աւա-
դեցաւ 'ի ԳՂ. 3։ կան. 14.

# ԳԼՈՒԽ. Ը։

## Կանոնք վասն խօսակցութեան։

Ի կենցաղավարութի՟ս մարդկան չիք՝ այնպիսի
ինչ, որ առաւել յայտնեսցէ զհանգամանս
անձին, և զյօժարութի՟ բնութե՟ նորա, քան զխօսս
և զլեզուն որ 'ի նմա. վ՟ս և առած է որ նախնի իմաս-
տասիրաց. որք ասէին՝ է՟ որս զառաջինն հան-
դերձեալ էին կենցաղավարիլ. եթէ խօսեաց, զի
ծանեայց զքեզ։ Քանզի արտաքին խօսակցութե՟
գոլով յայտնիչ ներքին որպիսութե՟ միտաց և յօժա-
րութե՟ սրտի, նոյնաւ Ճանաչի մարդ՝ թէ որպիսի ոք
է. ուստի և խօսք՝ առ գիտնականս համարեալ են

իբր

լիբր փորձաքար մարդոյ, որով ընտրի և որոշի իմաս-
տունն 'ի տգիտէն, և լաւն 'ի վատթարէն. քանզի
ըստ անսուտ բանին Քրիստոսի 'ի յաւելուածոյ սրտի խօսի
բերան. Մատթ. Գլ. 12. 34: Նմին իրի 'ի քաղաքավա-
րական կրթութիւնս մի 'ի կարևոր ուսմանց է և ընտիր
խօսակցութիւնն. որում պարտի մարդ ջանիւ զհետ
լինել, դիտելով 'ի նմա զքառեակ իրս. յորս են
և ի յաւէտ վայելչութիւն և տգեղութիւն խօսից:
Առաջինն է նիւթն. երկրորդ՝ կարգն. երրորդ՝
ոճն կամ եղանակ խօսից. չորրորդ՝ արտաքին
շարժմունք, որք լինին 'ի խօսիլն: Ըստ որոց ունիմք
առանձնել և զհետևեալ կանոնս:

## Առաջին Նիւթ խօսից:

Նախ նիւթք խօսակցութեանց ըստ կարի պարտին
լինել օգտակար, անմեղ և զուարճալի.
խորշելով յայնմանէ՝ որ ընդդէմ ելանէ սիրոյ՝
համեստութեան և բարի վարուց. կամ որ զզուումն և
ձանձրութիւն բերէ լսողաց. յիշելով զխրատ առաքե-
լոյն Պօղոսի. Ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձեր-
մէ մի ելցէ. այլ որ ինչ բարին է 'ի շինած պիտոյ-
ից, զի տացէ շնորհս այնոցիկ, որ լսենն: Եփես. 4.
29: Ո՞չ չէ պարտ խօսիլ զայնպիսի բանս, որ իցէ
ընդդէմ Աստուծոյ և սրբոց նորա կամ զվկայութիւնս սրբոց գրոց և
զվարս սրբոց ծաղրածութեամբ առնուլ 'ի բերան. զի է
մեղք ծանր, և անվայել քրիստոնէի: Նոյնպէս չէ
օրէն զաղտեղի իրաց բանս 'ի մէջ առնուլ՝ թէպէտ
և զուարճալի թուեսցի 'ի լսել. զի համեստակրօն

և

և քաղաքավար անձանց 'ի դէպ է համեստ բանիւք
ևեթ զբօսնուլ:

2. Չէ պարտ խօսիլ զայնպիսեաց, որք ոչ պատշաճին կամ անյարմար են խօսողին և լսողին. (Ըստ որում աւանդեցաւ 'ի Գլ. 2. կան. 2:) Այս 'ի խօսելն Քրիստոնեայ պարտէ խնամով դիտել, զի մի՛ նիւթն առաջարկեալ իցէ զչնչին և զանօգուտ իրաց, ընդ որ չախորժին նոքա: Նոյնս և 'ի խօսելն ընդ ռամիկս՝ չէ՛ արժան բանիւն լինել կարի՛ իմն նրբին և խորին, որով անօգուտ վաստակեն միտք բազմաց առ 'ի հասկանալ զայնս:

3. Չէ պարտ խօսիլ զայնպիսի իրաց, որք ո՛չ 'ի դէպ գան տեղւոյ և ժամանակի, թէպէտ և իցեն ընտիրք և վայելուչք. (որպէս ասացաք և 'ի Գլ. 2. կան. 3:) Վասն որոյ անյարմար է յուրախական հանդէսս, կամ 'ի սեղանի պատմել զտրտմականս կամ զերկիւղալիս. և կամ խօսիլ զվիրայ՝ զհիւանդութեանց և զմահուանէ. կամ առնել յիշատակութիւն զցաւալի իրաց: Եւ եթէ դիպուածով ըստ բերման առթին պատահեսցի ումեք զրուցաբանել զայսպիսեաց, օրէ՛ն է քաղցրութեամբ իմն փոխել զխօսնիւթ ուրախական արկանելով 'ի մէջ. զի հանգամանաց տեղւոյն և ժամանակին այն է վայելչական, իբր զի մարդիկ ոչ համախմբին յուրախութեան վայրս առ 'ի կոծել կամ ողբալ. այլ բերկրիլ և խնդալ բարեկարգ ցնծութեամբ. վասն որոյ լաւ ևս է լռել՝ քան զայսպիսեաց խօսիլ յայնպիսի տեղիս: Սոյնպէս և Քրիստոնեայն 'ի տրտմական տեղիս կամ

'ի

'ի սուգս մեռելոյ անվայելուչ է ծաղրածութիւն
զուարճականս պատմել:

4. Չէ պարտ յաճախ խօսիլ զայնսանի իրաց, որք խօսողին և եթ իցեն ախորժական, զի անմարթ է ումեք չափել զախորժս այլոց յիւրոց հաճոյից. քանզի ոչ ամենուն են հաճելի՝ հաճոյք իւրաքանչիւրոց: Վասն որոյ ո՛չ բարւոք գործեն նոքա, որք չունին զայլ ինչ 'ի բերանի՝ բայց զորդիս և զկինս իւրեանց. գովելով զնոսին և պատմելով զգործս նոցա. և ոչինչ բնաւ ա՛կնածեն, թէ թերևս անախորժ թուեսցի այլոց ընդ որս խօսին զայնպիսիս:

5. Չէ արժան մարդոյ 'ի խօսակցութիւն իւր գովել զանձն, կամ պարծիլ սակս ազնուականութեան և իշխանական մեծութեան. և մանաւանդ յաղագս իմաստութեան. զի գովեստ մարդոյ 'ի բերանի իւրում. նախատինք են անձին իւրոյ: որպէս ասաց ոմն: Այսպիսի պարծանք յառաջ գան 'ի չինական և 'ի տմարդի բարուց, որոյ չիցէ տեսեալ երբէք զփառս կամ զմեծութիւն: Զի առ իսկապէս ազնուականս փայլէ վեհանձնութիւն ընդ քաղցրահամբոյր խոնարհութեան. առ ոչինչ գրելով զփառս և զամ մեծութիւն. որով սիրելի և պանծալի լինին յաչս ամենեցուն: 'Ի սոյն հայի և այն խրատ, որով պա՛րտ է զգուշանալ 'ի խօսս կամ յասելոյ առաջի այլոց: Եթէ ես իշխան կամ դատաւո՛ր լինէի, այսպէս կամ այնպէս առնէի՝ և այլն: Որպէս թէ ո՛չ հաճելով ընդ գործս նոցա. կամիցի ուղղել զնոսին. որ է նշան հպարտութեան և յիմարութեան: Այսմ հակառակ՝

ոչ

տմ պարծիլն չէ՛ բարւոք. նոյնպէս և ս քան զչափ աւելի նուաստութեանն բանիւք զանձն՝ է ար համարհ և անգոսնելի. քանզի երևի լինիլ նշան կեղծաւորութեան և ծածուկ իմն հպարտութեան. որ ատելի առնէ զմարդ. (զօրմէ տես և ՚ի Գւ. 2. կան. 6:) Յաստատելոյս յայտ է. զի եթէ դէպ լիցի ումեք դովիլ առաջի այլոց. չէ պարտ նմա փքանալ կամ ընդ հակառակն նուաստանալ, յոյժ այլ զգովեստն ՚ի գովօղն դարձուցանելով՝ արժան է ասել քաղցրութը և խոնարհութը, թէ այդ լաւութի՛ որ յիմ տեսանի, ոչ է յինէն, այլ ՚ի բարութէ ձերմէ, որ զայլոց նուաստ գործս տայ ձեզ իբր ընտիր տեսանել. եզ

6. Չէ պարտ փառահամբաւել զոք, կամ ասել չար զումեքէ. կամ զպակասութի ուրուք պատմել առաջի այլոց բամբասանօք. կամ քսութիս և բանսարկութիս առնել ՚ի մէջ երկուց. զի է ախտ և մոլութի ատելի այ և խորշելի բարեխրատ անձանց: Իսկ որ առնէ զայսպիսիս, չմնայ անպատիժ յայ և ՚ի մարդկանէ. զի առ ժամն թէպէտև ախորժեսցին ընդ այն ունկնդիրք, հաճելով ընդ բանս մատնութեն, այլ գլխովին ատեն զմատնիչն. կասկածելով զնմանէ, թէ զո՛րօրինակ զայլս վատաբանէ առաջի նց, նոյնպէս և զանձանց իւրեանց զնոյն արասցէ առաջի այլոց:

Ընդ սոսին՝ մանաւանդ թէ առաւել ևս պա՛րտ է զգուշանալ ՚ի նախատելոյ զոք յերեսս, կամ յանիծանելոյ, ՚ի հայհոյելոյ և յասելոյ բանս կսկծեցուցիչս

ցինչս, որով քակտի սէր ընկերին, և ընծայի առ իթ
թշնամութե՝ և մեծամեծ անկարգութեց. զի ըստ առա-
ծին. Լեզու թէպէտև անոսկր է. այլ բազում ան-
գամ ոսկոր է և ոսկերս փշրել. քան զի բազում
են յոյժ անկեալք՝ի լեզուէ քան ՝ի սրոյ. ոպ ասաց
ոմն ։

Առաւելոյս զհետ գայ և այն, զի ՝ի գտանիլ ուրուք
՝ի մէջ բազմութե ընկերաց, թէ կայցէ ոք անդ, որ
ունիցի զընական պակասութի ինչ մարմնոյ, ոպ եթէ
կոյր իցէ. կամ կաղ, կամ սապատողն. չէ պարտ
խօսս ՝ի մէջ առնուլ զայնպիսի պակասութեց, ուս-
տի սովոր են նոքա ամաչել ։ ( ըստ որում ասացաք
և ՝ի Գլ. 3. 10. )

7. ՝Ի խօսակցութի զգուշալի է յոյժ մարդելու-
զութին. որով առ երեսս գովեստ ընծայի ումեք. զի
է ախտ զզուելի յաչս իմաստնոց մանաւանդ վեհա
բարոյ անձանց, զորս և յորդորակի ՝ի ցասումն շար-
ժեն այսպիսի բանք. քզի շողոքորթել զոք, է հա
մարիլ զնա տխմար և անիմաստ, ընդ որ չհանդուր
ժեն և տգէտքն իսկ ։

8. Գովելի է միշտ ՝ի քաղաքավարութի բարեաց
աւետաւոր լինիլ և ո՛չ բնաւ գուժաւոր. ուստի
խորշելի է ըստ կարի ՝ի գուժաբեր լրոյ. ոպ եօր-աբէր
ըւյ ։ Սակայն եթէ հարկն ստիպեսցէ ումեք
տալ գոյժ ինչ այլում, պարտ է խոհեմութ կըշ-
ռել զանձն, զժամանակն և զտեղին, զի ըստ այնմ
կարասցէ վայելչապէս տալ ոպ արժանն է ։

9. Որպէս զի բանք ուրուք ընդունելի լիցին առա

ջի

ջի այլոյ, պա՛րտ է միտ դնել, զի ասացեալքն իւր մի իցեն անհիմն, այլ զոր ինչ միանգամ խօսի ոք, պարտի ունել հաստատութիւն կամ 'ի հաւաստարիմ վկայից, և կամ 'ի նոյն իսկ 'ի լսողաց անտի. որոց միոքն բաւականասցին վկայել ճշմարտութեան խօսիցն: Ուստի չէ պարտ խօսել. և պնդել իբրև ստոյգ զայնպիսի իրս, զորս չգիտէ ոք հաւաստեաւ. և զոր ինչ լուեալ իցէ ոք ընդ տարակուսանօք, չէ արժան իբրև հաւաստի պատմել զայն այլում: Միանգամայն զգուշալի է խօսել և զայնպիսի իրս, որոց դժուարին հաւատս ընծայեն մարդիկ. վասնորոյ պա՛րտ է ըստ խրատու իմաստնոյն Թաղէսի, խօսել զհաւանականսն և եթ, և լռել զանհաւատալիսն: Սակայն և զայն արժան համարիմ յիշեցուցանել ունկնդրաց. զի 'ի լսել երբեմն զնորս ինչ անլուրս՝ չէ պարտ արհամարհել կամ ընդդիմանալ անհաւատալի համարելով զասացուած այնպիսի ուրուք, որ շրջեալ իցէ 'ի զանազան տեղիս. կամ ընթերցանութեամբ գրոց ուսեալ զի բազում ինչ հաւաստի զարմանալիք պատմին յիմաստնոց, որք տգիտաց դժուարահաւատալիք են:

10. Զգուշալի են յոյժ բարեխրատս անձանց. ը̃ ունայն և անօգուտ խօսակցութիւնք, յորոց քաղին պըտուղ և ոչ մի. որպիսի են երևակայեալ պատմութիւնք ջր Ճառուք. և երազք գիշերոյ: Սակայն՝ եթէ ըստ բերելոյ առթին դիպեսցի ումեք պատմել զայնպիսիս իբր 'ի պատճառս զուարճութեան ունկնդրաց. յայնժամ պա՛րտ է յօրինել սեթևեթ խօսիւք և

ընտիր իմաստուք, զի որք լսիցենն՝ յաւէտ յեղանակէ խօսից բերկրեսցին, քան յանգոյ ասացուածոց տաղտկասցին,

## Երկրորդ կարգ խօսից։

### Առաջին։

Մի՛ ՚ի կարևոր ձիրից մարդկային խօսակցութեան՝ է կարգն, զոր պարտի մարդս մեծապէս արժանութեամբ դիտել ՚ի խօսսն; որով անոյշ և շնորհալի ընծային բանքն ՚ի լսելիս ունկնդրաց։ Վասն որոյ պարտ է խղճամիտ մտադնել. զի ըստ կարգի յօրինեսցին ասացուածքն. առանց խառնելոյ զսկիզբն, զմէջ և զվերջ բանից, միանգամայն՝ յիշատակելի են և այնպիսի պարագայք և հետևութիւնք, որք սովորեն վայելչութիւն տալ խօսից։ Իսկ անպէտ և անօգուտ կրկնութիւնք կամ՝ աւելորդ պարագայք գլխովին տարագրելի են. զի առաւել չփոթեն՝ քան պարզեն զմիտս բանին։

2. Զոր ինչ հանդերձեալ իցէ ոք ասել առաջի այլոց, պարտ է զի կանխագոյն ամփոփեսցէ ՚ի միտս զբանն կամ զպատմութիւն. զի մի ՚ի խօսիլն անդ-զկայ առնուցու կամ դարձցի ՚ի սրբագրել, Եւ։ կամ յո՛չ ՚ի վերայ բերել զբանն՝ կակազեսցէ. տատանելով զձեռսն ասելով. այլ իմն բան Եւ. որք են ձանձրացուցիչք լսելեաց. և խանգարեն զշնորհ խօսից։ Առ ՚ի դիւրաւ պահել և կատարել զայս կանոն. պարտ է ըստ խրատու իմաստնոյն քի ընթեր՝ ու շադիր լինիլ. զի մի լեզուն յառաջեսցէ քան զմիտսն. այլ միտքն եղիցի առաջնորդ և կա-

ռա

ժամար լեզուին, որով և հնար է ուղղել զամենայն թերութիւնս նորա։

3. ՚Ի պատմելն կամ ՚ի խօսիլն զիրաց ինչ, եթէ անցողաբար Է առաջելցեն և այլ բանք՝ նման կամ աննման պատմելեացն, որք ոչ վերաբերին յառաջիկայ զրոյցն․ չէ պարտ ՚ի բաց թողուլ զբուն բանսն, և յայնս ձեռնարկել, կամ յաւելորդս խառնել ընդ խօսս․ այլ օրէն է զսկսեալն և եթ անընդհատ շարունակել առանց աւելորդաբանութեան՝ մինչև աւարտեսցի։

4. Եթէ դէպ լիցի ՚ի զրոյցս կանխաբանել կամ անմեղադրութիւն ինչ առնել անձին սակս չկարելոյ կամ անբաւականն լինելոյ որպէս պարտն իցէ խօսիլ, չէ օրէն կարի իմն երկայնաբանել ՚ի նոյն նաև ոչ իսկ արժան է անխտիր առնել զայն յո՛ և իցէ հասարակ զրոյցս․ այլ միայն ՚ի պիտանիս և ՚ի պատշաճաւոր տեղիս։

5. ՚Ի մէջ բազմութեան չէ պարտ ամենեցուն միանգամայն խօսող լինիլ․ այլ արժան է բազմաց միում խօսողի ունկն դնել․ և ըստ տեղւոյն պատասխանի առնել։ Եւ չէ պարտ ամենևին փոյթ ընդ փոյթ փոփոխել զնիւթ խօսից՝ թռչնանման ձիւղէ ՚ի ձիւղ ոստոստելով․ այլ զոր միանգամ սկսանի խօսիլ, ՚ի նոյն նիւթ պարտին տևել մինչև աւարտեսցի կամ ըստ բաւականին լնուլ ծանիցի։ Իսկ եթէ ՚ի խօսակցութեան ուրուք դիպեսցի այլում միջամտեալ բանիւ ինչ խօսիլ, նախընթաց խօսողն Է ունկնդրութեանն զոր առնէ, պարտի պահել ՚ի մտի և զբանն իւր՝ զմնա-

ցեալն

ցեալն Թերի, զի յառաջատիլ բանից միջանկեալ խօսողին, կարասցէ ինքնին սկսանիլ զբան իւր առանց յիշեցուցանելոյ միջնակայից զընդհատեալ տեղին խօսից։

6. Յետ խօսելոյ ուրուք ըստ բաւականին, կամ յառաջատել զխօսսն՝ պարտի լռել և տալ միջոց խօսելոյ և այլոց. որով ընկերութիւն բազմութեան ախորժելի լինիցի։ Ուստի անկարգ և տմարդի է այն սովորութիւն. զոր ունին ոմանք անհամբերք՝ ի խօսս. որոց՝ ի դէպ լինիլն զլուցաբանել, չգիտեն բնաւ զկայ տանուլ. այլ ըստ ասից կիկերոնի. որպէս թէ՝ ի ստացուած ժառանգութեան իւրեանց մտեալ՝ արտաքսեն զայլս. և իբր նաւք բռնի վարեալք՝ ի հողմոյ անընդհատ բարբառին. և յառաջատիլ նիւթոյ խօսից, կամ զնոյն բան վերստին կրկնեն, և կամ ընդունայն զբանախօսեն։ Առ որս՝ ի դէպ գայ ասել զբան իմաստնոյն զենոնի, թէ ականջք այսպիսեաց՝ ի լեզու են փոխարկեալ։ Եւ խօսին, ոչ եթէ ունելով կարողութիւն խօսելոյ, այլ զանկարութիւն լռելոյ որպէս ասաց դիմոկրատէս։

Իսկ որ ևս անվայելուչն է, զոր գործեն այսպիսիք զի եթէ այլ ոք սկիզբն արասցէ ասել ինչ, վաղվաղակի առանց ակնածութեան տմարդութեամբ ընդհատեն զխօսս նորա. զայլ ինչ՝ ի մէջ բերելով՝ կամ բարձրաձայն աղաղակաւ չփոթելով զխօսողն։ Այսպիսեաց պարտ է յիշել զկանոն իմաստնոյն սոկրատայ, թէ զչափ խօսելոյ ոչ է օրէն կշռել՝ ի կամաց ասողին. այլ՝ ի հաճութեան լսողին։ Յասացելոցս

յայտ

յայտ է զի յիմանալ ուրուք 'ի նշանաց թէ՝ ունկն-
դիրք ձանձրացեալ են 'ի լսելոյ կամ չախորժեն
սկսեալ խօսս ուրուք. պարտ է նմա փութով ա-
ւարտել զբանսն. և կամ փոխել զնիւթն. զի մի
տաղտկութիւն տայցէ լսողաց։

7. 'Ի խօսիլ ուրուք՝ զգուշալի է յոյժ ունկնդր-
րաց չխառնել նորա ինչ զրոյց նախ քան զաւարտել
բանից խօսողին։ Եւ չէ պարտ ամենևին հատանել
և կամ խափանել զխօսս այլոց. ըստ որում սովոր
են ոմանք յանխրատից. որոց անհամբեր գտեալ
յունկնդրութի. փութան 'ի պատասխանին՝ ասելով
տմարդութեամբ. թէ յսկզբնաւորութենէ բանիցդ իմացայ.
զոր կամիս ասել. ևայլն։ Որով խափանեն զխօսս և
չփոթեն զմիտս ունկնդրաց։ Յայս կանոն հայի և
այն զգուշութի. որով չէ օրէն ումեք 'ի խօսակցու-
թեն յառաջել քան զնոսա. ընդ որս խօսի. կամ յափշ-
տակել 'ի բերանոյ այլոց զխօսս նոցա. զի զոր
այլք սկսեալ էին պատմել. ինքն ասասցէ։ Եւ և
'ի պատմել ուրուք զլուեալ և զհռչակեալ պատ-
մութի ինչ՝ տմարդութի է խափանել զբանս նորա՝
գիտեմ կամ լուեալ եմ ասելով։ Այլ և դիտել
արժան է. զի 'ի խօսիլ ուրուք. չէ օրէն սրբագ-
րել զբանս նորա. կամ շարժմամբ գլխոյ՝ աչաց և
ձեռաց ցուցանել. թէ ըստ որում ինքն գիտէ՝
այնպէս պատմէ նա. և կամ ոչ։ Զի այսպիսի սրբա-
գրութիւնք անվայելուչք են. միանգամայն և դժուա-
րաբառնալիք առ որս լինին իսկ եթէ ոք 'ի խօսս
կամ 'ի պատմութիւնս այլոց կամիցի յաւելուածս ինչ

առնել

առնել. կամ հետեւութիւն ինչ յանկածոյս 'ի վերայ բերել. պարտի սպասել, զի աւարտեսցէ զայն յառաջ խօսից։

8. Եթէ ոք կամի յամր իցէ 'ի խօսիլն. չէ պարտ ունկնդրին կանխել. և զբառսն 'ի բերան նր̅ դնել. Յայս զգուշութի առաւելապէս միտ դնելի է 'ի վարելն ը̅ ծերոց և ը̅ գիտնական արանց. զի բնական է նոցա ծանր և հանդարտ խօսիլ։ Միանգամայն՝ 'ի խօսիլն ը̅ մեծամեծս և ընդ իմաստունս պարտ է խոհական արթնութ̅ միտ դնել բանիցն ասացելոց. և թէ յինչ իրաց սկիզբն եղև խօսից. և ո՞ւր տարածեցաւ զի կարող լիցի 'ի հարցանելն պատասխանել և կարգաւ յիշեցուցանել։

9. 'Ի խօսիլ ուրուք պարտ է ունկնդրին ամփոփել մտօք ուշադիր լինիլ բանիցն ասացելոց. զի մի յոչ իմանալն փոյթ ընդ փոյթ ասասցէ. Ո՛չ ծանեա [illegible]. որով և տայ խօսողին 'ի զուր կրկնել զբանսն։ Եւ զայս կանոն արժան է պահել մանաւանդ 'ի մէջ բազմութե. ուր ամենքին լռութ̅ ունկն դնեն խօսակցութե ուրուք. զի այսպիսի հարցմունք և կրկնութիւնք տաղտկալի են խօսողաց և լսողաց։ Սակայն եթէ ոք դիպուածով ինչ՝ ոչ իմասցի զինչ յասացելոց. կարող է հարցանել այլում ումեք 'ի մերձ եղելոց. կամ նշանիւ իսկ խօսողին խնդրելով 'ի նմանէ ներումն. զի կարասցէ համեմատ բանից նորա առնել պատասխանի։

10. Եթէ բազումք 'ի միում ժամանակի հարցցեն ումեք զմի և զայլ իրաց. պարտէ նմա նախ այնմ պատասխանել

խանել, որ երկդգոյնն է և առաւել պատուաւոր՝ ի նմա. և այլա այլոց մի ըստ միոջէ: Այլև զայն արժան է յիշեցուցանել ունկնդրաց. զի ՚ի խօսիլ ուրուք ընդ այլում. չէ օրէն ումեք հարցանել զնա. մինչ չև իցէ աւարտեալ զբան իւր:

## ԵՐՐՈՐԴ ՆՇԱՆԱԿ ԽՕՍԻՑ:

### ԱՌԱՋԻՆ:

ՈՋ կամ եղանակք խօսից են, որք տան ըզ համեղութիւն զրուցաց. որով իսկ և յարդարուն գործի խօսակցութիւն ՚ի մարդկային կենակցութեան: ՚Ի սոյն կրթութիւն յորդորիմք ՚ի սրբոյ գրոց. յառաքելոյն. Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք տեառն իբրև աղիւ համեմեալ լիցի. Կող. 4. 6: Զայս խրատ զգուշութեան ընծայէ մեզ և կիկերոն Գիրք. I. Յաղ: պաշտմ. Գլ. 37: յասելն. Եղիցի խօսքն մեղմ՝ և ոչ իւիք խիստ. իցէ ՚ի նմա համեղութիւն: Եւ նախ տեսցէ, թէ զո՞ր իրաց խօսեսցի. Եթէ զհաւաստի գիտելեաց. ուժգնութիւն ընծայեսցէ. եթէ զկատակելեաց. զհամեղաբանութիւն: Եւ առաւել քան զամենայն միտ դիցէ. զի խօսքն մի լիցին նշանակ ախտաւոր ինչ բարուց յանձին լինելոյ. որ յաւէտ յայնժամ հանդիպի. երբ յօժար գտանի ոք խօսիլ զբացակայից բամբասանաց աղագաւ՝ ծիծաղելով կամ դժնէութեամբ. անխծաբանութեամբ և նախատանօք:

2. Խօսակցութիւն զոր առնէ ոք, պարտի լինել մեկն և բացայայտ բառիւք: Միանգամայն գիտելի է. զի բառքն իցեն ընտիրք և վայելչահնչիւնք

և

և համեմատք բանին և իրայն․ զորմէ է խօսակցու-
թեն․ վասն զգուշալի է մեծապէս․ զի մի՛ 'ի խօսիլն
զվսեմական և զխորին իրաց․ որպիսի են աստուածայինք
և զրոյցք իմաստութեն․ 'ի կիր արկցին չնչին և անոտի
բառք և ոճք խօսից։ կամ ընդ հակառակն՝ 'ի անոտի
նիւթս վարել զայնպիսի ընտիր բառս․ զորս չէ
օրէն 'ի գործ ածել յայնոսիկ նիւթս։ Ընդդէմ կա-
նոնիս գործեն բազումք 'ի տգիտաց և 'ի տխմար եղ-
բարց․ որոց գումարեալ 'ի մի՝ նիւթ զրուցաց 'ի
մէջ առնուն զաստուածային խորհրդոց և զվեհմանց հա-
ւատոյ․ որով և բազում անգամ բայ 'ի յանհեթեթ
և 'ի ծաղրալուր բանից՝ զորս ասեն․ մոլորականս
ևս բարբառին։

3․ 'Ի մի և 'ի նոյն խօսակցութե չէ օրէն բազում
անգամ 'ի կիր առնուլ զնոյն ոճ կամ զեղանակ խօ-
սից․ և կամ յոլովակի կրկնել զնոյն բառ․ զոր մար-
թէ բացատրել այլովք եղերօք։ Սակայն և անոտի
պարտ է զգուշանալ՝ և չվարիլ երկդիմի բանիւք
կամ նմանութեբ․ այլ ընդ այլոյ զբառսն 'ի կիր առ-
նուլ, որ է ցոյց անոտի իմաստակութե, զոր և սոտէալ
տեսանեմք յանձնագով ներհունս․ որք յաչս ռամ-
կաց զանուն անարդիւն գիտնականի յանձինս կրեն
որոց և փառք թուի 'ի հասարակ զրոյցս այլ ինչ
ասել և այլազգ ինչ իմանալ՝ քան զոր չիք ասելի և
ծաղրական իմաստուն արանց։

4․ Չէ օրէն բարեխնդու և ազնուական անձանց 'ի
բերան առնուլ զանհամեստ և զաղտեղի բառս՝ բա-
ցայայտ կամ մերթին ընդ քողով այլաբանութե․ այլ ջանալ է ա

պար

պարտէ խնամով գիտել ՚ի հնչմունս, ՚ի ձայնս և ՚ի նշանակութիւն բառից. զի մի ունիցին ամենևին զհոտ անպարկեշտութեան։ Այլ զի գտանին անուանք ինչ, որք թէպէտ և չեն նշանակիչք անհամեստ իրաց. բայց մարթին յանհամեստից առնել լինել ՚ի տեղի նոցա։ Են և բառք որք եթէ փոքր մի այլազգ հնչեսցին կամ շեշտեսցին և բթեսցին, այլ ինչ տան նշանակել։ Արդ՝ այսպիսի գործածութիւնք բառից յառաջ գան ՚ի չարասիրտ և յաղտեղասէր բարուց յորոց ոչ միայն պարտ է խորշել ՚ի մաքուր կենցաղավարական զրոյցս, այլև զաղտեղիսն իսկ ՚ի սովորել հարկին, պարտ է համեստ բառիւք բացատրել։

5. Չէ պարտ խօսիլ ՚ի լեզու, զոր չգիտէ ոք ըստ բաւականին. զի այնպիսին բաց ՚ի նախատ լինելոյ յայլոց իբր տգէտ և անխոհեմ. առնէ և բազմադէմ վրիպակս՝ այլև այլոյ զբառսն վարելով, և ծաղրահնչիւն յօդելով։ Սակայն՝ եթէ ոք սովորեալ ՚ի ծանր հարկէ կամեսցի խօսիլ այնպիսի լեզուաւ պարտի վարիլ բազում զգուշութեամբ և զգաստութեամբ։ Եւ ևս ՚ի կենցաղավարութեան. յինչ լեզու ոք սկսանէ խօսիլ նովին լեզուաւ պարտի առաջարկել զբանսն. և ոչ որպէս տեսանեմք յոմանս որոց սկիզբն արարեալ խօսիլ զիւրայ ինչ հայերէն ուրեք յաւելուն խառնել զայլազգական բառ կամ զեղանակ խօսից. թերևս ՚ի տգիտութենէ կամ ՚ի նորասիրութենէ վարեալք։

6. Չէ պարտ ՚ի խօսս կամ մանաւանդ ՚ի պատմութիւնս զայնպիսի եղանակ զրուցաց ՚ի կիր առնուլ, որ չփո

թե

թէ զմիտս լսողոյ. զոր օրինակ՝ ՚ի պատմելն ըզ-
դիպուած ինչ. յորում յիշատակին բազում ան-
ձինք ՚ի միասին. չէ պարտ առանց տալոյ զանուանս
նոցա՝ ասել. սա ասէ, նա ասէ, և այն միւսն պատաս
խանի առնէ. զի այսպիսի բանք անորոշք ոչ տան
իմանալ զասացեալսն։ Իսկ եթէ պատմութիւն իցէ
զանծանօթ տեղւոյ, և զանանուն անձանց, առ ՚ի
դիւրալուր և ընտանի գործել լսողաց, մարթ է յար
մարել զանուն ինչ և զտեղի. բայց ծանուցանելով
նախ։ թէ զայն առնէ, զի դիւրին լիցի իմանալ։
Եւ ևս պարտէ քաղաքավարին խնամով միտ դնել.
զի եթէ ՚ի խօսակցութե, կամ ՚ի պատմելն զդիպո-
ւած ինչ՝ հարկ լիցի յիշել կամ թուել զանձն ը̄
այլոց, չէ պարտ նախ առաջին զինքն յիշատակել
և ապա զայլս. զոր օրինակ՝ չէ օրէն ասել. Ես և
պետրոսն կամ պօղոսն գնացինք. այլ պետրոսն կամ պօ-
ղոսն, և ես գնացինք. որով յաւէտ այլոց ընծայի յար
գութիւն, ք̄ թէ անձին։ Առ յեւս քեզ օրինակ զբան
տիրամօրն՝ գրեալ յաւետարանի, որ ՚ի խնդրել
և ՚ի գտանել զորդին մեր ՚ի տաճարին, ասաց առ նա
Ահաւասիկ հայր քո և ես տառապեալք և խնդրէ
աք զքեզ։ Ղուկ. Գլ. 2. 48։

7. ՚Ի խօսիլն ը̄ այլս՝ զգուշալի է մեծապէս առ ՚ի
չառնուլ ՚ի կիր զանհարթ և զտմարդի եղանակս
բանից. մանաւանդ յայնպիսի տեղիս և ՚ի յըն-
կերութիւնս, ուր ընդ ազնուականս կենակցի
ոք։ Վասնորոյ չէ օրէն ասել առ այլ ոք։ Ա-
[illegible] տղայոյ այսպիսեա չէ։ [illegible] ինչ չափ ասել.

կամ

Կամ թէ ՚ի հարցանել այլոց զորպիսութիւն և զգործ ուրուք չէ՛ պարտ պատասխանել. Ո՞ւ փեսաներս ըն որդիքս եմ, չեմ գինըն տանեմ։ Այլ փոխանակ այսոցիկ արժանէ ասել քաղցրութ. Կարելի է՝ տղաքս լինին որդիքս տանէսը։ կամ երևի ինչ որ տղաքս դիւանը լինել ներողութեան շնորհէք, ոչ չարտոյ, իմ բանս հասկացանել։ Նոյնպէս և հարցանողին զորպիսութիւն և զգործ ուրուք, պա՛րտ է անուշութեամբ ըստ հարցմանն պատասխանել. որով քաղցրալուր և ախորժ լինին ասացեալքն՝ առանց ինչ արհամարհութեան։ ՚Ի սոյն հայի և այն խրատ քաղաքավարական որով չէ՛ օրէն վարիլ ընդ ումեք երկրպագունի հրամայողական եղանակաւ, որպէս թէ ասելով. Ասա՛ն է՛ր շտապնէս. կամ տղայոցս ասա։ կամ ոտքովս գաս և հո՞ր էր բերես։ այլ պա՛րտ է միշտ խոնարհութ վարիլ՝ իբր աղաչելով, կամ՝ բազմաւորական դիմօք արտասանել զբանսն, զոր օրինակ ինդրեմ կամ աղաչեմ կամ շնորհս արարէք՝ եթէ հաճիք առնել զայս կամ զայն ևն։ Եւ զայս եղանակ խօսից պարտ և արժան է վարել նաև ընդ հաւասար անձինս, թո՛ղ թէ ընդ երկրպագոյնս։

8. ՚Ի ծագիլ իրիք խնդրոյ ՚ի մէջ բազմութեան, եթէ իցէ զայնպիսի իրաց, զորոյ զխելն գիտիցէ ոք, կամ զոր այլք ասէին ընդ դէմ իցէ կարծեաց նորա, չէ՛ պարտ վաղվաղակի ընդ դիմաբանել. այլ արժան է լռութեամբ միտ դնել և հայիլ ՚ի յարմարութիւն տեղւոյն, ժամանակին և անձանցն, զի եթէ հաւատն մտօք պատշաճ դատեսցէ զասելն, մա՛րթ է նմա խօսիլ

խօսիլ քաղցրութբ̄ և վայելչութբ̄։ Իսկ եթէ դէպ լինի ումեք ՚ի վէճ մտանել ը̄ այլում, պարտի հան դարտութբ̄ և անխռով մտօք առնել զայն. ոչինչ կիրս ցուցանելով յաղթական լինելոյ. և ո՛չ ան֊ պատճառ արհամարհել զբանս այլոց. կամ կամակօ րութբ̄ պնդել զիւր կարծիս. ուստի ծագին չփոթք և կռիւք։ Զգուշալի է ևս, զի մի՛ ՚ի վիճելն զորոց ինչ՝ առ սաստիկ հակառակութե̄ թողեալ զխնդ֊ դիրն, ը̄ եղանակս բանից միմեանց կամ ը̄ բառսն կապեսցին. որպ̄ սովո՛ր է լինիլ բազում անգամ. և ծագի այս յաճախ յանհասկացողութէ̄ և յանհան֊ դարտ բարուց. զի թէ ուշ դնէին ասացելոյն. ոչ վիճէին ընդ վայր։

Իսկ առաջիկայ եղելոյն ՚ի վիճաբանութիւն չէ՛ օրէն ամենևին կուսակից լինիլ միում ՚ի կողմանցն, կամ բանիւք նպաստել նմա. զի նովաւ ընծայի առիթ ա ռաւել խռովութե̄ և թշնամութե̄. այլ պարտ է ունկնդրաց կալ անտարբեր՝ ՚ի վիճաբանօղսն անդ֊ թողեալ զապարէզն. և խոհական մտօք ընտրել և զհետ երթալ հաստատուն և հաւանական կար ծեաց։

9. Չէ՛ պարտ ՚ի պատմելն զեղեալս ինչ՝ սուտ բա նիւք չքեղել, իբր հաճելի և ախորժական կա֊ մելով ընծայել լսողաց. զի թէպէտ առ ժամն ա֊ խորժեսցեն ընդ այն ունկնդիրք, այլ յետոյ իբր ստախօսի ոչ բնաւ հաւատասցեն նմա։ Ըստ այսմ և՛ս ՚ի խօսելն կամ ՚ի պատմելն զչնչին և զդուզնա քեայ իրս՝ չէ՛ օրէն կարի իմն մեծացուցանել, ը̄ որում։

որչափ ատելոր են ոմանք. մինչև զի առածին՝ Մըրջիւնն՝ 'ի ձեռանս նոցա փիղ տեսանի: Այսպիսի եղանակք խօսից թէպէտ և երբեմն յանմեղ և յանտարբեր իրս ոք և 'ի կատակս չէ յանդիմանելի, բայց զի ինքեան խորշելի է, մանաւանդ զի և յիրս ինչ, որք հային 'ի վնաս և յամբաստանութիւն այլոց, է չար և վնասակար:

10. 'Ի պատմելն զգործս այլոց՝ չէ պարտ եղծանել կամ նուաղեցուցանել զպատշաճաւոր գովեստն, որ կարէ անտի ընծայիլ նոցա. չարութեամբ լռելով զայնպիսի պարագայս կամ զպատուիթս յորս երևի մեծութիւն գործոյն. կամ թէ 'ի պատմելն անդ զերևելի գործսն, յաւելուլ 'ի նոյն և զանպիտանս. կամ բաղդատութիւն առնելով ընդ այլում, զայլոց առաւել գովելի ցուցանել քան զնա որ է գործ նախանձու և չարութեան:

11. Պարտ է աստընտագունից՝ և մանաւանդ մանկանց, 'ի խօսիլն ընդ մեծամեծս և ընդ երիցագոյնս վարիլ ամենայն խոնարհութեամբ և հպատակութեամբ բանից. զգուշանալով ամենևին, զի մի գտցի 'ի խօսս իրենց այնպիսի եղանակ համարձակութեան կամ լրբութեան, կամակորութեան և ըմբոստութեան, որով ատելի լինին յաչս նոցա. այլ պարտ է համեստութեամբ և ակնածութեամբ յաւէտ յօժարամիտ լինիլ 'ի լռութիւն, և յունկնդրութիւն բանից նոցա 'ի խօսակցութիւն: Եւ եթէ հարցցեն զիրաց ինչ, պարտ է յոտին կալով համբարտութեամբ պատասխանի առնել մեղմ և յստակ ձայնիւ առանց երկայնաբանութեան և աւելորդ խօսից: Նոյն

պէս

պէս եթէ կամեսցին հարցանել ինչ վերնագրու-
նոյ, պարտին առնել համեստութեամբ և պատ-
կառանօք:

## Դ. Ձայնք, արտասանութիւնք, շարժմունք ձեռաց, դիմաց եւ աչաց:

Ձայնն՝ որ և յարտասանութիւն երկու ինչ խըն-
դրին առաւելապէս, մի՝ զի իցէ յստակ,
և երկրորդ՝ ախորժելի. և թէպէտ այս
կատարելութիւնք ՚ի բնէ պահանջին, սակայն և կրթու-
թիւն ևս կարէ նպաստել մարդոյ: Այլ չէ պարտ ՚ի
խօսելն բարձրաբարբառ աղաղակել, կամ ալխա-
զուր և կոկորդալից ձայնիւ. կամ բեկբեկ յօդել
զխօսս. կամ թլուատաբար ասել. կամ շփոթելով
և կցկտուր բառիւք, կամ կակազելով. կամ առա-
ւել քան զչափն ծանր ծանր և մեղմաձայն. կամ ՚ի
կիսոյն ցած, և ըստ կիսոյն բարձր. այլ յստակ,
պարզ, վայելուչ և չափաւոր ձայնիւ: Զհակա-
նութիւն այսր կանոնի և խրատու թէպէտ ՚ի բազում
անձինս թուի անկարանալ սակս բնական պակասու-
թեան ինչ, որք երևին ՚ի նոսա, ոմն են թլուատք,
թոթովախօսք, կակազողք և որք միանգամ անհե-
թեթ ձայնիւ իցեն վիճակեալ ՚ի բնէ. այլ հնար
է և նոցա ուղղել, եթէ ՚ի կարի ջան դիւրեն զհետ
լինիլ վարժութեան. զի հանապազօր առած է իմաստ-
նոց, թէ Յորս պակասի բնութիւն, հնար. է կրթու-
թեան լնուլ զտեղի նորա. ՚ի որում և զփորձ առնել
իմաստնոց, սատուցեալ զայս: Սակայն եթէ ումեք
անկարելի իցէ և կրթութեամբ ուղղել. լաւ է այնպի-
սւոյն

ւոյն ՚ի մէջ բազմութեան լռել քան խօսիլ և ծաղր լինիլ:

2. Ի խօսիլն չէ պարտ կարի իմն բանալ զշրթունս, կամ ընդ հակառակն ամփոփել՝ իբր այն, որ խօսիցի ՚ի մէջ ատամանց: Եւ նա զգուշալի է ՚ի խօսակցութե, մանաւանդ ՚ի հասարակ զրոյցս՝ գթալից և ողորմագին, ձայնիւ կամ կանացի հնչմամբ արտասանել զբառս, որ ոչ վայելէ առն մարդոյ.

3. ՚Ի խօսիլն ընդ ումեք չէ պարտ կարի իմն հուպ մօտեւորիլ առ ունկնդիրն, մինչև շունչն ծաւալեսցի յերեսս նորա. զի բազումք են՝ որք չախորժեն առնուլ զշունչ այլոց. թէպէտև հոտ անախորժ ընդ նմին ոչ ՚ի դուրս բերիցի:: Եւ առաւել ևս պարտ է զգուշանալ ՚ի ցայտեցուցանելոյ և ՚ի արկանելոյ զշիթս թքոյ ՚ի վերայ այլոց. ընդ որս խօսին:

4. ՚Ի խօսիլն ընդ այլս չէ պարտ ձեռօք մերձենալ ՚ի նոսա. կամ բուռն հարկանել զզգեստուց նոցա կամ այնպէս երկայնել զձեռս ընդ երեսս. ոչ թէ կամիցի հանել զակն ուրուք. այլ պարտ է կալ հանգիստ և հանդարտ: Եւ նա չէ օրէն ՚ի խօսիլն խթել զայլս արմնկամբ կամ ոտիւք. որպէս սովոր են ոմանք յանխրատից. զի առ ամ խօսս. զոր ասեն խթանեն զայլս՝ ասելով. տա յիս նայեա, կամ լսէր ինձ, կամ տեսոյք չէ ասացեալ: Եւ. Առ ՚ի զգուշութի ՚ի ծանր տմարդութե ատոի. արժան է յիշատակել և զայն կանոն. որով բազումք զգուշացուցանեն՝ ՚ի խօսակցութե ոչ միայն չխթել զոք. այլև ոչ իսկ մատամբ

մատամբ ցուցանել ումեք զայլ ոք. մանաւանդ զազնուականս և զիշխանաւորս. Թէպէտև զայս ըստ տեղւոյն և ըստ առւթին մարթ է առնել վայելչապէս.

5. ՚Ի խօսելն կամ ՚ի լսելն և ՚ի տեսանել զզարմանալիս կամ զահարկուս և կամ զաղտեղիս՝ չէ պարտ չընչմամբ բերանոյ կամ թիւրելով զաչս և զդէմս. կամ հառաչելով ցուցանել առաջի այլոց զնշան զարմանալոյ՝ ասկալոյ և զզուելոյ. զի հնար է՝ թէ ՚ի լսողաց, որք միանգամ չիցեն զգածեալ նովին կրիւք, յարտաքին նշանաց անտի և խնքեանք զգածեսցին. կամ թէ իւր չիցէ այնչափ ըզգածեցուցիչ՝ դարձցին և զարմասցին լօղք ծիծաղելով ՚ի վերայ այնր. որ մեծ ինչ գրէ զայն: Այլ զայս ասելով մեր. իբր ոչ եթէ բառնալ կամիմք ՚ի մարդկանէ զայսոսիկ կիրս. զոր բնութիւն ադրէ և թելադրէ ըստ տեղւոյն. այլ զայն կանոնեմք. զի ըստ կարգի և վայելչապէս արասցէ. որ առնէն. ապա թէ ոչ՝ զորօրինակ գեղջկութիւն է զարմանալ. ուր չիցէ տեղի զարմանալոյ, նոյնպէս և տմարդութիւն է չզարմանալ. ուրանօր արժան իցէ:

6: Պարտ է խնամով միտ դնել յարտաքին շարժմունս մարմնոյ ՚ի ժամ խօսելոյ: Ունկնդրաց չէ օրէն ըստ բանիցն զոր լսեն. ցնցել կամ տարուբերել զգլուխն. կամ կըծկել զաչս և բանալ. կամ ՚ի վեր ամբառնալ զարտեւանունս և իջուցանել ՚ի խոնարհ կամ թիւրել զբերանն. կամ իբր ապուշ կկոցեալ աչօք բերանաբաց կալ. զի այսպիսի գործողութիւնք

՚ի

՚ի գեղջուկ բարուց յառաջ գան։

Իսկ խօսողին պարտ է զգուշանալ նախ զի մի՛ ՚ի պատմելն զխնդուած ինչ երեւելի շարժութեամբ ձեռաց. գլխոյ. աչաց ևն. կամ երթեւեկս առնելով արարողութեամբ ձեւացուցէ զայն իբրեւ հանդիսի թատրոնական խաղուց. այլ պարտի իբրեւ կարի բանիւք բացատրել։ Երկրորդ՝ պարտ է զգաստութեամբ միտ դնել շարժմանն ձեռաց եւ մարմնոյն. զի մի լիցեն մեղկք կամ լոյծք. եւ չգտցին ՚ի նոսա բեկբեկումն. լկտութիւն կամ խենեշութիւն. եւ մի ամենեւին ցոյցք ինչ սնափառութեան կամ արհեստի. որպէս եւ ընդ հակառակն խորշելի են բիրտք եւ անհարթ շարժմունք. մանաւանդ՝ եթէ գտցին եւ անհամաձայնք իրացն. զորոյ զրուցաբանէ։ Ըստ այսմ տգեղ է եւ խորթ տարածեալ բազկօք զերկուսին ձեռս միատեղ շարժել եւ այն՝ անհամաձայն միմեանց. կամ երագ եւ սաստիկ. կամ փոխանակ զձեռսն եւեթ շարժելոյ. զբազուկն ամբողջ շարժեսցէ։ Միանգամայն չէ օրէն տատանել զգլուխն ընդ բանից. կամ կարի իմն վերամբարձ ունիլ զայն եւ կամ ընդ հակառակըն սաստիկ կոր այլ չափաւոր՝ իբրեւ համաբնական դրից գլխոյն հայելով առ նոսա ընդ որս խօսի։ Ապաքէն զայսոսիկ ասելով, ոչ եթէ զշարժումն ՚ի խօսս գլխովին անգոսնեմք զի եւ այն տգեղ է եթէ ոք ՚ի խօսսին իբր արձան ամենեւին անշարժ կայցէ այլ յոյժ ազնուավայել եւ գովելի ցուցանեմք զչափաւորն եւ զհամեստն։ ՚Ի կանոնաց աստի որք միանգամ առանձնեցան ցայս վայր յաղագս խօսակ-

ցութեան

ցութեն, հնարէ մերձեցուցանել և առնուլ խրատ ուղղութեան ամ մասնաւոր դիպուածս. որք հան դիպին յայլ և այլ պարագայս խօսից զորս և թողումք ՚ի խոհական ընտրութիւն և ՚ի փոյթ քաղաքավարասիրաց ։

Հինգերորդ. Առանձին կանոնք ինչ վասն կատակի ։
( Ի ծաղրաբանութեան )

Որովհետև կատակն է խօսք ինչ կամ գործ զրուցխառն. որ լինի ՚ի պատճառս զուարճութեան, արժան է կարգել զայն ընդ խօսակցութեան սահմանելով կանոնս պիտանիս, որով պարտ իցէ առնել զնոյն ։

1. Նախ պարտ է կատակերգութեան լինել յանմեղ և յանտարբեր նիւթս և ՚ի խօսս, զգուշանալով յաղտեղի և յանպարկեշտ կամ ՚ի վնասակար բանից որք փոխան զուարճացուցանելոյ զայլս տաղտկացուցանեն, վնասեն և կամ տրտմեցուցանեն զնոսա։ Այլ չէ արժան ՚ի կատակերգութիւնս մատուցանել ՚ի մէջ զբնական և զերևելի պակասութիւնս ուրուք, զի որ դժուարի և կամ կրէ զամօթ ։ Այլ և չէ օրէն յիշատակել կամ ՚ի յայտ ածել զայնպիսի ինչ, յորմէ հնար է՝ թէ հասցէ ումեք վնաս. զի չէ պարտ ՚ի պատճառս անտեղի ուրախութեան քակել զսէր ընկերին ։

2. Երկրորդ՝ պարտ է հայիլ յեղանակն առնելոյ զի մի լիցի արհամարհանօք կամ նախատանօք և կամ կծողական բանիւք, որովք ոչ լինի կատակ

(Ի

(յն ծաղրածութիւն) այլ ծաղր (որ է ծանօթ) զոր չէ
պարտ առնել, և ոչ առ թշնամիս. Թո՛ղ թէ առ
բարեկամս: Միանգամայն զգուշալի է և ձեռօք
կատակաբանել ընդ ումեք. (յն ձեռնամոլութիւն ընել.) զի
ոչ միայն տգեղ է և անվայելուչ, այլև բազում
անգամ լինի առիթ մեծամեծ վնասուց և անկար-
գութեանց:

3. Երրորդ՝ պա՛րտ է մարդոյ գիտել և իմանալ յա-
ռաջագոյն զբնութիւն և զախորժ արանցն, ընդ որս և
առաջի, որոց համբերձեալ է առնել զկատակն.
որով կարասցէ ըստ պատշաճի առնել զայն. զի ոչ
ամենեքեան միօրինակ հաճոյ են և յարմար բանք
կատականաց: Այլ և գործ իմաստնոյ է կշռել
և համեմատել զբանս ընդ անձին, առ որ ունի ա-
սել զայնս: Ուստի զգուշալի է կատակս առնել
ընդ նոսա, որք դժուարին, կամ ոչ ախորժեն. որպէս
և չէ օրէն կատակաբանել ընդ այնպիսի անձանց,
ընդ որս չունիցի ոք մտերիմ ընտանութիւն և համարձա-
կութիւն, կամ թէ չիցէ ՚ի նոսա համասարութիւն վիճա-
կի. որպէս ստորնագունից ընդ իշխանաւորս, և մանկա-
գունից ընդ ծերագոյն հասակաւորս: Սակայն՝
եթէ դէպ լիցի երբեմն հաճութեամբ երիցագունից
առնել կատակս ընդ նոսա, պա՛րտ է ստորնագունին
վարիլ ՚ի բանս խոհական զգուշութեամբ՝ պահելով
յամենայնի զպատիւ նոցա, զի մի առաւել համարձա-
կութիւն շարժեսցէ զնոսին ՚ի սաստումն, որպէս ասէ ոք:
Այլ յաւելիմս ինչ՝ թէպէտև ունիցի ոք պատրաս-
տական պատասխանի առ բանս երիցագունից, այլ
թէ

թէ գիտիցէ՝ զի այնու ունին վշտանալ նոքա, ո՛չ պարտի առնել, այլ քաղցրութ̃բ փոխել զխօսս։ Բայց պա՛րտ է եւ այնմ, ը̃ որում լինի կատակն, սիրով եւ ախորժանօք ը̃ունիլ. գիտելով՝ թէ լինի այն 'ի պատճառս զուարճուե̃ եւ ոչ արհամարհուե̃։ Նոյնպէս թիւր է եւ անտանելի, զոր առնեն ոմանք, որք մտադիւր ախորժեն կատակս առնել ը̃ այլում, բայց չհաճին բնաւ, թէ եւ այլք զնոյն արասցեն ընդ նոսա։ Ա̃յ պա՛րտ է այսպիսեալ, զի կամ մի արասցեն եւ ինքեանք ը̃ այլս. եւ կամ 'ի բաց հեռասցին 'ի կենցաղավարութենէ

մարդկան։

4. Չորրորդ՝ 'ի կատակերգուե̃ս պա՛րտ է վարիլ չափով. զի չէ՛ օրէն 'ի վերայ մի եւ նոյն նիւթոյ բազում անգամ կատակաբանել. ապա թէ ոչ՝ փոխանակ զուարճութ̃ե եւ զբօսանայ՝ տաղտկութիւն

բերէ 'ի լսօղս։

Արդ՝ ո̃պ զի կատակն լիցի նիւթ զուարճութեան, պարտ է առնել զայն գեղեցիկ եւ անկարծելի խօսիւք, ընտիր՝ նուրբ եւ անվնաս իմաստիւք. վայելուչ եւ բարեկարգ շարժմամբ, եւ առանց ծիծաղելոյ կատակողին, որով շնորհալի եւ ախորժական ընծային բանքն 'ի լսելիս ունկնդրաց։ Սակայն եւ զայն խոստովանիլ պարտ է, թէ այսպիսի վայելուչ կատակ առնել՝ ո՛չ է ամենեցուն. զի առ այս բաց 'ի կրթութ̃է՝ պահանջի եւ բնատուր ձիրք յարմարութե̃, որով ը̃ կարգի եւ անոյշ ձեւացուսցէ զայն ըստ տեղւոյն, ըստ անձանց եւ ըստ այլոց հանգամանաց։

# ԳԼՈՒԽ. Թ։

## Կանոնք նամակագրութեան։

Զորօրինակ առ վայելուչ կենցաղավարութիւն պիտոյ է քաղաքավարին կանոնք վարուց 'ի խօսակցութեան, նոյնպէս օրէնք է առնել և 'ի նամակագրութիւս, որ է խօսակցութիւն գրաւոր։ Զոր թէպէտ և հնար է ուսանիլ 'ի բուն խակ գրոց անտի, սակայն յամբողջութիւն գործոյս 'ի քաղաքավարութեան, առանդեսցուք աստանօր կանոնս քանի մի, որք պիտին առ վայելչութիւն ներքին և արտաքին հանգամանաց գրութեան նամակի. որպիսի են կարգ և եղանակ գրելոյ, ծալելոյ և կնքելոյ ըղթուղթն։

I. Յամ նամակս նախ առաջին դնի վերնագիրն 'ի ճակատ կամ 'ի գլուխ թղթոյն. յորում նշանակին վերտառութիւնք պատուոյ՝ կամ յարգական յորջորջմունք՝ անձինն, առ որ գրի նամակն։ Արդ՝ առ 'ի լինիլ այսմ վայելուչ և ըստ կարգի, պարտ է նախ զի իցէ համառօտ, 'ի մի կամ յերկուս տողս բովանդակեալ։ Երկրորդ՝ զի վերտառութիւնքն ընծայեալք ումեք՝ իցեն պատշաճական և համեմատ վիճակի, հասակի պաշտօնի, և այլոց հանգամանաց նորա։ Այլ յաղագս վերտառութեանց մասնաւորաբար խօսեսցուք առանձինն 'ի վերջ գլխոյս։

Իսկ յիշատակութիւն անուան 'ի վերնագրին՝ թէպէտև առ արևմտեայս չէ այժմ 'ի գործածութեան, զի նոքա

հասա

հասարակօրէն լոկ վերտառութբ վարին։ Բայց կարեւոր երեւի դնել զանունն. որով իմացի՝ թէ առ ո՛ լիցի ուղղեալ նամակն. մանաւանդ յայնպիսիս, ուր վերտառութին չիցէ որոշ, կամ թէ անձն այն, առ որ գրի նամակն, չունիցի առանձին և յատուկ վերտառութի ինչ որով առանց անուան որոշեսցի նամակն, թէ առ ո՛վ լիցի։ Յայս սակս հնարեցաւ և յարեւմուտս իսկ՝ նշանակել երբեմն՝ յառաջին երես ՚ի ստորև թղթոյն զանուն անձինն,

առ որ ուղղի նամակն։

Ոմանք ՚ի սկզբան վերնագրին ՚ի նոյն տող՝ դնեն մեկուսի և զանուն քաղաքին, յորում գտանի անձն այն. առ որ առաքի նամակն։ Սակայն երեւի լինել աւելորդ ինչ՝ չունելով վերաբերութի և յարմարութի ընդ վերնագրին կամ ընդ սկզբնութեան գրոյն. շատ է նշանակել զայն՝ որպէս օրէն է ՚ի վերայ թղթոյն.

ուր. գրի հասցէն։

2. Զկնի վերնագրին առ սակաւ մի ՚ի խոնարհ գըրելի են բանք նամակին. թողլով միջոց պարապ ընդ վերնագիրն և ընդ բանն իբր զվեցերորդ մասն գըրելի թղթոյն վերուստ ՚ի վայր. ( եթէ թուղթն գրելի իցէ առ հաւասարս։ ) Իսկ լուսանցն յահեակ կուսէ թողլի է յայսպիսի նամակս՝ իբր ութերրորդ բաժինն նոյն թղթոյն ընդ լայնութի. ընդ կողմնէ ՚ի կողմն։ Իսկ եթէ նամակն գրելի իցէ առ մեծամեծս և առ յարգոյ անձինս. պարտ է աւելի թողուլ զպարապ միջոցսն. համեմատութբ պահելով զկանոնեալ խորատս. որով հնար է գտանել

զպատշաճաւոր չափն ըստ իւրաքանչիւր թէուն ան-
ձին, առ որս գրելի իցէ նամակն: Եւ թէպէտ
այս կանոնք կարեն երբեմն այլայլիլ ՚ի պատճառս
առաւելութեան կամ նուազութեան գրելի նիւթոյն. այլ
պարտ է նամակագրին այնպէս վարիլ յոճի, զի մի
օտարասցի ՚ի կանոնաց վայելչութեան եւ քաղաքավարու-
թեան, գործ ածելոյ յազգս եւ ՚ի քաղաքս:

3. ՚Ի գրութեան նիւթոյ կամ բանից նամակին պարտ է
դիտել ՚ի չորս կարեւոր իրս, յորոց կերպանայ մար-
մին նամակին: Առաջինն է սկսուածն, որով ըս-
կզբնաւորի թուղթն. եւ առ այս պահանջի, զի
ըստ նիւթոյն զոր հանդերձեալ է ոք գրել, սկիզբն
առասցէ այնպիսի բանիւ, որում ինքնին եւ վայելչա-
պէս զհետ եկեսցէ նիւթն գրելի. բայց պարտ է,
զի իցէ համառօտ՝ որովհետեւ սկսուածն համարի
իբր կանխաբանութիւն ինչ, չէ՛ օրէն այնմ առաւելուլ
քան զբուն իսկ բանս նամակին. որոյ վասն լինի ըս-
կըսուած: Սակայն ՚ի նիւթ կարեւոր, որպէս յիրս
առեւտրոյ՝ եւ յայլ հարկեցուցիչ դիպուածս, զոր
փութան մարդիկ ծանուցանել միմեանց, պարտ է
սկսանիլ անմիջապէս ՚ի նիւթոյ կամ ՚ի շարժառիթէ
նամակին:

Երկրորդ դիտելին է նիւթն, կամ շարժառիթն,
յորմէ շարժեալ ոք գրէ զնամակն: ՚Ի սմա պարտ
միտ դնել գրողին, նախ՝ զի եթէ իցեն բազում
նիւթք այլ եւ այլք ծանուցանելիք միով նամակաւ
թղթոյ պարտ է զայն նիւթ նախ գրել, որ առա-
ւել մեծն է եւ կարեւոր. եւ ապա զայլս մի ըստ միոջէ

այլ

այլ և 'ի գրելն զնոր նիւթ, օրէն է միշտ 'ի նոր տո-
ղէ սկսանիլ հանդերձ գլխագրով. զի մի խառ-
նեսցի ը՟ վերնոյն, և շփոթութիւն տայ ընթերցողին.
Երկրորդ՝ պարտ է հայիլ յեղանակ բացատրութեան
նիւթոյն, և այնպէս գրել, զի ընթերցօղն կարող
լինիցի անաշխատ իմանալ զմիտս նորա. ուստի և զոճ
շարադրութեան օրէն է յարմարել ոչ միայն նիւթոյն,
այլ և առաւել անձանցն, առ որս գրի նամակն:
Որոյ առ տգէտս և առ ռամիկս պարտ է գրել
պարզ և բացայայտ շարագրութեամբ. իսկ առ իմաստունս
հնար է գիտնօրէն և վսեմական ոճիւ գրել:
Երրորդ՝ պիտելին է հետևանքն, որ զհետ գայ
շարժառթին կամ նիւթոյ նամակին. և այս կարէ
լինել բազմապատիկ ըստ այլևայլութեան նիւթոյն. զոր
պարտ է գրողին զննել, և ըստ պահանջելոյ նիւթ
ոյն՝ վայելչապէս և յարմար հետևեցուցանել:
Չորրորդն է բարեմաղթութիւն՝ որ զհետ գայ հե
տևանաց, և երբեմն՝ շարժառթին, (թէ չգուցէ
հետևանք.) որով խնդրի կեանք և բարեյաջողութիւն
գործոց նորա, առ որս առաքի նամակն: Այլ յայ
սմ պարտ է գրողին հայիլ, զի ըստ իւրաքանչիւր
վիճակի և հասակի անձանց արասցէ համեմատ և
պատշաճական բարեմաղթութիւն:

4. Յետ բարեմաղթութեան կամ յառաջ նիւթոյ և
բանից նամակին, կարգին ողջոյնք կամ (բարևք,)
զորս օրէն է ուղղել առ ծանօթս և առ բարեկամս
մեր. և զկնի՝ միւսանգամ ընծայի վերատառութիւն ինչ
պատուոյ՝ի սեռականն հոլովի՝ այսպէս Յարգու-

Թեդ

Թեգ, կամ ազնուանեգ. առանց յիշատակելոյ զա-
նունն. և այս վերտառութիւն գրելի է յառաջին տողի
անդ անմիջապէս զկնի ողջունին կամ բարեմաղ-
թութեան, որում զհետ գայ վայելչապէս ստորագրու-
թիւն, 'ի ստորևայեզր թղթոյն յաջակողմն կոյս, ուր
դնի անուն գրողին խոնարհական բառիւք. կամ ըստ
որում սովորութիւն է ասել. Նուաստ ծառայ այս-
ոռուն ԱՁ: իսկ թուական տարւոյն և ամսոյն. միան-
գամայն և անուն քաղաքին, յորում գրեալ իցէ նա-
մակն, եթէ 'ի փոքուէ առ մեծ ոք գրեսցի, դնի 'ի
ստորև յաւարտ թղթոյն. ապա թէ ի հակառակն
ցի 'ի մեծէ առ փոքրն, կամ 'ի հաւասարէ առ
հաւասարն, հասարակօրէն դնի 'ի ներքոյ վերնա-
գրին նախ քան զսկզբնաւորութիւն բանից նամակին:
5. Աստանօր պատշաճ համարիմ յիշեցուցանել
և ինչ ինչ 'ի կարևոր խրատուց, զորս պարտ է
պահել 'ի գրութեան նամակի: Նախ՝ գիտելի է, զի
բանք թղթոյն և եղանակ գրութեան իցեն պատշաճա-
կան գրողին՝ և այնմ՝ առ որ գրի նամակն. ըստ հան-
րական կանոնին, զոր աւանդեցաք ('ի գլ. 2. 2:)
Երկրորդ՝ պարտէ նամակին լինել բացայայտ, միան-
գամայն և չափաւոր բանիւք՝ ոչ կարի իմն երկայն՝
և ոչ յոյժ համառօտ. բայց եթէ հարկն զնոյն
պապանջեսցէ: Զսոյն չափաւորութիւն պարտ է
դիտել և յարտաքին գիրս թղթոյն. զի մի յոյժ մեծ
իցէ. և մի կարի փոքր: Երրորդ՝ զգուշալի է 'ի նա-
մակի յաւելորդս խուսելոյ զնոյնանշան բառս. և
առաւել ևս 'ի կրկնութեան բանից, որ ձանձրոյթ

բերէ

բերէ ընթերցողին։ Չորրորդ՝ ի նամակս մեծապէս
զգուշալի է փախել զսաստիկ կամ զխիստ եղանա
կըս բանից և բառից, զի գիրն մնայուն գոլով, ա-
ռաւել ազդէ և վիրաւորէ զսիրտս քան լուր հնչման
ձայնի, որ փութով ցնդի յօդս։ Այլ պարտ է բա
նից նամակին լինել քաղցր և ախորժալուր. նոյնպէս
և եղանակ բացատրութեան կոկ և անմխաս։ Իսկ թէ
ուրեք երբեք հարկ լինի ևս գրել զբանս յանդիմա
նութեան, օրէն է առնել զայն խոհական մտօք և ընտ
րութեամբ. զի դառնութիւն բարեխառն գտցի ընդ քաղ-
ցրութեան. մեղմաբար խայթոցս արձակելով, և մա-
տակարարութեամբ անուշաճաշակ մեղու զսիրտսն զո-
ւարթացուցանելով։ Հինգերորդ՝ պարտի գրողն
ըստ կարի միտ դնել և ի մաքրութիւն գրոյն. զի որ
ընդունի զայն. կարօղ լինի անաշխատ ընթեռնուլ։
Վեցերորդ՝ պարտ է գրողին նախ քան զկնքել նա-
մակին ընթեռնուլ մտադրութեամբ՝ և ուղղել զսխալան
սն. եթէ վրիպակք ինչ բանի և տառի եղեալ
իցեն ի նմա։ Միանգամայն մաքրելի է և աւազն,
թէ իցէ ցանեալ ի գրութեան անդ։

## Կանոնք ծալելոյ և կնքելոյ նամակին։

### Առաջին

Ամենայն նամակք գրեալք առ մեծամեծս
և առ իշխանաւոր անձինս՝ պարտին
լինել լայնածալք. զորս և օրէն է միշտ դը-
նել ի պահարանի կազմեալ ի մաքուր թղթոյ.
յորոյ վերայ գրելի է հասցէն։ Իսկ հասարակ
թուղթք

Թուղթք գրեալք 'ի ստորընագունէ առ ստորինն՝ պարտին լինիլ միջակադիր ծալիւք. զոր և մարթ է դիւրին եղանակաւ առնել այսպէս։ Նախ պարտ է զլայնութիւն թղթոյն. այսինքն կողմնէ 'ի կողմն՝ կամ յաջ և յահեակ կուսէ, յերիս ծալել. այնպէս՝ զի երկոքին չորթունք կողմանց թղթոյն հասցեն առ միմեանս. և փոքր մի և ս անցցեն. և ապա զայն ընդ լայնութիւն ծալեալ թուղթն պարտ է նոյն օրինակ յերիս ծալել ըստ երկայնութեան. այսինքն վերուստ 'ի վայր, բայց ոչ հաւասարաչափ. այլ պարտի մին երկայն լինիլ քան զմիւսն իբր մատնաչափ առ 'ի դնել կամ ագուցանել զերկոսին ծայրսն 'ի մէջ միմեանց. զոր և արարեալ՝ 'ի միջին տեղւոջ այնր ագուցեալ մասին հարկանելի է կնիքն։

2. Եթէ նամակն առաքելի է 'ի ստորնագունէ առ մեծ ոք, պարտ է կնքոյն լինիլ փոքր. զի որովհետև մեծ կնիքն նշան իշխանութեան համարեալ լինի, չէ՛ օրէն ստորնագունին վարել առ մեծն զայն նշանակ։ Բայց իշխանաւորք առ միմեանս պարտին 'ի կիր առնուլ զմիջակադիր կնիքս, որ ոչ կարի մեծ իցէ, ոչ յոյժ փոքր։

3. Մոմն կնքոյ կամ կնքանիւթն հասարակօրէն պարտի լինիլ 'ի գունաւոր նշխարայ։ Իսկ 'ի գրելն առ մեծամեծս օրէն է 'ի կիր առնուլ զկարմիր զմոմն սպանիոյ, ( այսինքն չարմիր լաք։ ) Բայց 'ի սգալի թուղթս՝ սովորութիւն է կնքանիւթոյն լինիլ սևագոյն

4. Հասցէն պարտի գրիլ 'ի միւս երեսն, որ կայ 'ի թիկանց կուսէ կնքոյն, որպէս և յայտ է. յորում

և

և նշանակելի են անունն և մականունն անձին, առ
որ առաքի նամակն. Համդերձ վայելուչ, համա-
ռօտ և որոշեալ վերտառութ ինչ, որով դիւրին
իցէ ժամանել թղթոյն՝ի ձեռս նր։ Եւ ապա՝ի
ստորին ծայր թղթոյն յաջակողմն կոյս՝ դնի խոշո
րագիր և անուն քաղաքին յորում գտանի անձն այն
առ որ առաքի նամակն։ Այսչափ ինչ համառօ-
տիւ շատ լիցի յաղագս նամակագրութե. Այլ մեզ
արդ ասել սակաւուք և վասն վերտառութե, որ
՝ի բանս և ՝ի նամակս։

## Յաղագս Վերտառութե։

Վերտառութի կոչի անունն պատուոյ, որ
ընծայի ումեք սակս մեծութե, իշխանութե,
ազնուատոհմութե, իմաստութե, կամ վս
երևելի գործոյ, և նշանաւոր ծառայութե ար
ուեստի, ևն։ Նոյնպէս վերտառութիք, ասին և այն
յարգական բառք և անուանք, զորս վս սիրոյ և
բարեկամութե կամ քաղաքավարութե վարեն մարդիկ
առ միմեանս՝ի խօսիլն և ՝ի թղթակցիլն։ Արդ՝
առ՝ի լինիլ սոյս ըստ կարգի. պարտ է՝ զի այն յար-
գական անուանք ընծայեալք ումեք՝ իցեն պատշա-
ճականք և համեմատք վիճակի և թէութե նորա.
ապա թէ ոչ՝ փոխանակ պատուոյ նախատինք հա-
մարին նմա։ Զորօրինակ՝ եթէ ոք առ տգէտ և
ռամիկ բեռնակիր ոք ասասցէ. Մեծազօր իշխան.
կամ բազմահանճար իմաստուն։ կամ առ եկեղեցա
կան ոք Ամիրայ կամ պարոն. և այլ սոյին նմանք։

Զի այս վերտառութիւնք ոչ համեմատելով վիճակի
նոցա. չհամարին 'ի պատիւ: Այսո՛րոյ պարտ է խո
հական մտօք կշռել զվիճակ և զհանգամանս ան-
ձանց. ըստ որս ունի ոք կենցաղավարիլ կամ թըղթ
ակցիլ. զի ընդ այնմ կարասցէ պատշաճական անուանս
պատուոյ և յարգութեան վարել առ նոսա. զոր և
հնար է ուսանիլ 'ի սովորութենէ տեղեաց. և 'ի գործ
ածութենէ քաղաքավար անձանց: Միանգամայն պարտ
է նկատել. զի զո՛ր անուն պատուոյ միանգամ սկըս
եալ ոք վարել 'ի խօսս կամ 'ի նամակս ընդ ումեք. ըզ
նոյն պահեսցէ մինչև ցաւարտ բանին. քանզի չէ
օրէն փոփոխել կամ զայլ վերտառութիւն ընծայել.
բայց եթէ ունիցի զնոյն զօրութիւն: Յայս սակս 'ի
խօսիլն կամ 'ի գրելն առ եկեղեցական ոք. եթէ
սկսեալ ասել. Տեառնութիւն կամ վերապատուութիւն.
չէ՛ օրէն փոխել յետոյ և ասել, Ամենապատիւ
տէրութիւն. կամ իշխանութիւն: Նոյնպէս և առ աշ-
խարհական ոք՝ իւր հաւասար, եթէ սկսեալ իցէ
ասել. Ազնուութիւն. մտերմութիւն. չէ՛ պարտ փո-
խելով ասել. իշխանութիւն. բարձրութիւն. բայց եթէ
առիթն և ժամանակն զնոյն պահանջեսցէ: Եւ
ևս եթէ հարկ լիցի վարել դերանուն առ երկ-
րորդ դէմս. պա՛րտ է միշտ վարիլ յոգնականապէս
զոր օրինակ՝ Դուք. ձեր. ձեզ եւլն: և ո՛չ բնաւ եզա
կանապէս. Դու. քո. քեզ եւլն. բայց եթէ առ
փոքրահասակ մանկունս: Միանգամայն զգուշալի
է 'ի քաղաքավարական կենակցութիւնս. զի 'ի հարցա
նել ուրուք զիրաց ինչ. չէ՛ պարտ պատասխանել

լով

լոյն ստորադասական կամ բացասական բանին. Հա-կամ՝ չէ ։ այլ հրամայելոյ ասելոյ. կամ եղանակաւ պայմանի և. ընդ ստորադասութեան կամ բացասութեան յարելով և զպատ-շաճական վերտառութիւն համեմատ վիճակի հար-ցանողին ։

Յայսոսիկ կանոնս պատշաճ համարիմ յիշեցուցա-նել մեծամեծաց՝ և զայն խրատ կարևոր. որ՝ ի գոր-ծածի յազնուականս. զի եթէ ոք՝ ի նուաստից կամ յայլոց՝ առ տգիտութեան կամ դիպուածով ինչ ոչ տայցէ նոցա զանկանօր վերտառութիւն վիճակի իւրեանց. չէ պարտ դժուարիլ ընդ այն. կամ ծա-նուցանել և ազդել նոցա զսխալանսն. այլ ընդ հա-կառակն պարտ է սիրով կենակցիլ ընդ նոսա. և ջանալ ծածկել զմեծութիւն իւրեանց. զի մի ծանիցի. քանզի այս է տիրապէս ազնուականութիւն և վեհան-ձնութիւն. որ սիրելի և ախորժելի առնէ զմարդ ։

Ջորմէ տես և ՚ի Գլ. 3 ։ 2 ։

## ԳԼՈՒԽ. Ժ ։

### Կանոնք գրչութեան ։

Յայս գլուխս կանոնայս չեն մեզ կամք ու-սուցանել մարդոյ զգիր. զի ոչ հայի այն առ նպատակ գործոյս. որ է քաղաքավա-րութիւն. այլ է աւանդել կանոնս ինչ առ վայե-լուչ հանգամանս դրից մարդոյ. գլխոյ. ձեռաց. և ոտից. զորս արժան է քաղաքավարին պահել՝ ՚ի գրելն զգիր ։

1. Ի գրելն ուրուք. եթէ 'ի վերայ սեղանատախտա-
կի իցէ. և եթէ 'ի վերայ ծնգաց ըստ որում սովո-
րութիւն է առնել յարևելս. չէ պարտ մարմնոյ
գրողին կարի ինչ խոնարհիլ 'ի վերայ թղթոյ. այլ
այնչափ. զի գրչին գոնէ թզաւ միով վերամբարձ
կայցէ 'ի թղթոյն: Եւս և պարտ է դիտել. զի
գլուխն համեմատ մարմնոյն խոնարհեսցի. և ոչ
առաւել կամ նուազ. անհամեմատ նմին: Բայց
պարտ է. զի մարմինն հանդերձ գլխովն իցէ սա-
կաւիկ ինչ խոնարհեալ 'ի ձախակողմն, կոյս. ըստ
որում և հասարակօրէն սովոր է լինիլ 'ի գրելն:
Իսկ աչք գրողին պարտին միշտ հայիլ 'ի ծայր գրը-
չին. որ գրէ:

2. 'Ի գրելն 'ի վերայ սեղանատախտակի՝ պարտ է
ոտիցն կալ ուղիղ և առ միմեանս եդեալ վայելչա-
պէս. և ոչ բնաւ տարածեալ կամ ձգեալ ընդ եր-
կայն կամ շեղեալ առ 'ի կողմն՝ կամ զմիմեամբ պա-
տեալ. այլ այնպէս պարտին ոտիւք և դնել զոտս. զի
եթէ առանց շարժելոյ զայնս 'ի վեր կանգնեսցի.
կարասցէ ուղղորդ կալ առաջի սեղանատախտա-
կին: Աստի յայտ է. թէ և կրծոյն չէ պարտ յե-
նուլ 'ի սեղանատախտակն. յորոյ վերայ գրէ. այլ
լինելոյ է միջոյ հեռաւորութ̄ ը̄ սեղանն և ընդ
լանջն՝ գէթ երից կամ չորից մատանց: Իսկ 'ի գը-
րելն 'ի վերայ ծնգաց. պարտ է ոտիցն և զգեստուց
վայելչապէս ամփոփիլ. զի մի խորթ ինչ երևեսցի:

3. Զգրիչն պարտ է ունիլ աջու ձեռամբ. ոպ̄ և
յայտ է. բայց ըմբռնելն է այն ծայրիւք բթոյթ մա

տին

տին և ցուցամատին. միանգամայն յեցուցանելով 'ի վերին կողմն միջամատին. այլ այնպէս. զի մի ծայրք երկուցունց մատանց 'ի միում տեղւոջ գրչին ամփոփեսցին. այլ պարտ է բոյթ մատին այնպէս յենուլ 'ի գրիչն. զի մի յառաջեսցէ քան զ ցուցամատն. նոյնպէս և ցուցամատն քան զմիջամատն. որ 'ի ներքոյ գրչին: Իսկ միացեալ երկոքեան մատունքն. փո ձկոյթն' և որ առ նմա. պարտին թեքիլ առ 'ի ներքըս յափն կոյս. հեռանալով 'ի միջամատէն իբր մատնաչափ մի:

4. Պարտ է աջու ձեռայ հանգչիլ 'ի վ՜ր թղթոյ ձկոյթ մատամբ և եթ' առանց յեցուցանելոյ և տարածելոյ զբազուկն կամ զարմունկն 'ի վերայ սեղանատախտակին: Այլ եթէ ձեռք ուրուք իցեն դողդոջունք. կարէ վայելչապէս կողմնակի յեցուցանել զբազուկն յեզր սեղանատախտակին: Իսկ զահեակ թաթ ձեռին առ 'ի չեղ ունելով' պարտ է դնել 'ի վերայ թղթոյն. առանց տարածելոյ զբազուկն 'ի վերայ սեղանատախտակին: Ապա թէ ոք 'ի վերայ ծնգայ գրեսցէ. ձախու ձեռամբ պարտի ունիլ զթուղթն:

5. Յայտնի կանոնս յաւելուլ արժան է և զայն խրատ պիտանի. զոր օրէն է պահել ամենայն գրողաց. իբր զի պարտ է հոգտանիլ. զի կաղամարն իցէ միշտ մաքուր և յարդարուն. նոյնպէս և գրիչքըն վայելչապէս հատեալք. և ձեղքեալք ըստ կանոնի գրագրաց. զոր և հնար է ուսանիլ 'ի գրագէտ ուսուցչաց: Միանգամայն պարտ է զգու-

շանալ

ջանալ ՚ի մրոտելոյ զձեռս. որ լինի ըմբռնելով զգրիչն կարի իմն ՚ի ստորին ծայրէ։ Զգուշալի է եւ ՚ի մաքրելոյ զգրիչն կամ զմրոտեալ ձեռս ՚ի վերայ հանդերձից. կամ թղթոյ բերանոյ. այլ պիտոյ է ընդ կաղամարին պահել կտորակ մի կտաւոյ. յորոյ վերայ ըստ պահանջելոյ հարկին մաքրեսցէ զայնս վայելչապէս։

6. Առասմոր համառօտիւ յուշ առնեմք եւ մերձակայից. զի ՚ի գրել ուրուք զգիր. չէ պարտ ումեք յառաջ նմա եղելոյ՝ խօսիւք շփոթել զնա. կամ յենուլ եւ անկանիլ ՚ի վերայ սեղանատախտակին. կամ շարժել զայն. կամ մղել զձեռս գրողին. եւ կամ ընթեռնուլ զգրեալն. մանաւանդ. եթէ իցէ ողջունագիր։ Այլ պարտ է հեռի կալ ՚ի նմանէ. եւ եթէ հարկ ինչ լինիցի խօսելոյ կամ հարցանելոյ զնա. սակաւուք վճարելի է. զի մի լիցի նմա շփոթութիւն։

## ԳԼՈՒԽ. ԺԱ։

### Վասն ՚ի նստիլն, ՚ի կանգնիլն եւ ընթանալն ՚ի ճանապարհի։

### Առաջին.

Ի նստելն՝ ուրեք եւ ՚ի կալն ՚ի մէջ բազմութեան. պարտ է գիտել զի մի թիկունս առ այլս դարձուսցես։ Իսկ եթէ դիպուածով պատահեսցի. օրէն է քաղցրութեամբ սիրոյ ներումն խնդրել ՚ի նմանէ. որ գտաւ ՚ի թիկունս կոյս. եւ ապա տեղի տալ նմա։

2. Ի նստիլն պարտ է կալ ամփոփ և հանդարտ առանց կծկելոյ. վայելչապէս ժողովեալ զհանդերձս. զի մի երևեսցին ներքին զգեստքն ։ Տմարդութիւն է երկայնել զոտս առաջի այլոց. կամ 'ի մի կողմն անկանելով նստիլ. որպէս եթէ լինէր 'ի մահճի. կամ ստէպ ստէպ դառնալ կողմնէ 'ի կողմն կամ անկանիլ և յենուլ 'ի վերայ այլոց. ըստ որում սովորութիւն է մանկանց ։ Իսկ յորժամ նստիցի ոք 'ի վերայ աթոռոյ կամ բարձր նստարանի. չէ պարտ շարժել զոտս կամ զմիմեամբ պատել, կամ զմի ոտն 'ի վեր առնուլ 'ի վերայ միւսոյ ծնկան ։

3. Ի լինիլ ուրուք 'ի մէջ հաւասար ընկերաց, չէ օրէն զգնալ կամ ճեմել 'ի սենեկի, ուր այլք առհասարակ նստեալ իցեն. որպէս և ընդ հակառակն՝ անվայելուչ է նստիլ միում ումեք, ուր այլք բազումք յոտին կան և կամ զգնան. սակայն եթէ ոք վաստակեալ իցէ կամ ցաւագար, պարտ է նմա խոնարհութեամբ յայտնել զկարիս իւր, և ներումն խնդրելով նստիլ ։

Ասացի. 'ի մէջ հաւասար ընկերաց. զի մանկանց և ստորնագունից. չէ օրէն բնաւ նստիլ առաջի ծերոց և երիցագունից. բայց եթէ ակնարկութեամբ նոցա ։ Իսկ մեծամեծք, յորժամ են 'ի մէջ ստորնագունից, 'ի կամս նոցա է նստիլն կամ զգնալ. բայց յամի պահելով զկարգ վայելչութեան ։ Յայս կանոն դասելի է և այն, որ համարի տմարդութիւն մեծ. զի է՝ յառնել և կամ անպատճառ մեկնիլ 'ի տեղւոջէն. ուր այլք նստեալ խօսակցին. սակայն՝ եթէ հարկն

հարկն ստիպեսցէ սակս գործոյ ինչ, պա՛րտ է նախ ներքուստ հայցել 'ի բազմելոյն, զի մի կարծես-ցեն՝ թէ վս՟ չախորժելոյ ը՟ նմ՟, հեռանայ 'ի նո-յանէ ։

4. Չէ՛ օրէն ստորնադասից հրաւիրել զմեծա-գոյնս առ 'ի նստիլ, մանաւանդ եթէ իցէ անդ այլ ոք երիցագոյն, որում անկ իցէ առնել զայն հրա-ւիրումն. իսկ եթէ մոռասցի նա առնել, կարօղ է ստորինն մեղմով ազդ առնել նմա ։ Բայց սա-կայն՝ 'ի նստիլն, որպէս և 'ի յառնելն, չէ՛ պարտ նա ւաստին կանխել քան զմեծն. այլ պիտի սպասել և առնել զկնի նորա ։

5. Եթէ հրաւիրեսցի ստորին ոք 'ի նստիլ, պա՛րտ է նմա խոնարհութ՟ ցուցանել յարգութ՟ շնորհա-կալութ՟, և ապա ընտրելով զյետին տեղին նստիլ անդ 'ի ծունկս, կամ 'ի վերայ աթոռոյ՝ ո՟ ստորո-թ՟ տեղւոյն, յորս գտանի ոք. պահելով յա՟մ զպատշաճաւորութ՟ դիրք մարմնոյ, առանց հանգր-ձակութ՟ կամ լիրբ լկտութ՟, և տալոյ զթիկունս 'ի բարձ կամ 'ի յենարան աթոռոյ անվայելուչ օր-ինակաւ ։

6. Եթէ պատուաւոր ոք դիպեսցի գալ 'ի տե-ղին, կամ անցանել ը՟ այն, ուր ստորինք նստեալ իցեն, պա՛րտ է նոյն վաղվաղակի կանգնիլ 'ի վե-րայ ոտից՝ 'ի նշան խոնարհութ՟ և հպատակութ՟ իւր-եանց ։ Միանգամայն պա՛րտ է ժողովեալ անձամբ և ամփոփեալ զգեստուք հանդերձ պատկառանօք կալ պատրաստական առ ա՟մ ակնարկութիւն նորա ։

7. 'Ի կամիլն կանգնիլ 'ի վերայ ոտից, չէ՛ պարտ յենուլ ուրեք, կամ իբր զցուցագաւս և զծերս ըմբռնել զձեռս այլոց. այլ կանգնելի է ուղղորդ և հանդարտ. շարժմամբ առանց կորելոյ և կամ (ոլքալոյ) :

8. Յընթանալն պա՛րտ է զգոյշ կալ յերկուց ներհական ծայրից: Նախ՝ 'ի վազվազ կամ յարագ ընթանալոյ, և կամ 'ի վազելոյ:

Յայս կանոն առաւելապէս պարտին միտ դնել ազնուականք և իշխանաւորք, որք հասարակօրէն սովոր են ծառայիւք ելանել 'ի փողոց, զի մի առ սաստիկ երագութն ընթացից՝ նմանեսցին բրաւորաց որք 'ի խնդիր իցեն փախուցելոյ: Երկրորդ՝ պարտ է զգուշանալ 'ի կարի իմն ծանրաքայլութե. կամ ոչ սակի իբր տրամով յառնելոյ զքայլս ոտից: Այս եղանակ ընթանալոյ զգուշալի է մանաւանդ ծառայից, ևնց՝ որոց գործ և պաշտօն իցէ սպասաւորել այլոց. կամ որք միանգամ ստիպաւ կոչին յայլմէ: Այն մեծապէս յանդիմանելի են նոքա, որք 'ի կարևոր գործս, կամ յայլ ինչ հարկեցուցիչ դիպուածս ծանրութբ և անհոգութբ գնան. ուստի բազում անգամ սովոր է ծագիլ առիթ յոլով վնասուց:

9. Յընթանալն կամ 'ի քայլափոխելն անդ չէ՛ պարտ կարի իմն վերացուցանել զոտս յերկրէ. կամ ընդհակառակն քերելով զերկիր քարշելս ընթանալ իբրև զալևորս. կամ իբրև զբեռնակիրս ոտիւք հարկանել զերկիր, և կամ այնպէս թեքել զոտս,

մինչև

մինչև երևեսցին յատակք կօշկին ։

Միանգամայն զգուշալի է այնպիսի լայնաքայլ քայլս առնուլ, մինչև կարծել տեսողացն, թէ չափիցէ զերկիր․ կամ ը͞ն հակառակն անձուկ և արագ ։ Նոյնպէս չէ պարտ ը͞ն սաստ գնալ․ կամ 'ի վերայ մատանց ոտիցն, կամ աստ և անդ գեղևելով, և իբր կաքաւելով․ այլ հանդարտ, զգաստ և վայելուչ ։

10․ Անվայել և անպատշաճ է ազնուականաց բարձրագլուխ գոռոզութեամբ ընթանալ 'ի Ճանապարհի․ և սիգաճեմ գնայիւք երերիլ․ ո͞չ [illegible] քայլել մանկանց 'ի կախ ունելով զձեռս աստի և անտի ը͞ն որում առնեն ոմանք, որով և նմանին ը͞ն այից կիկեռնի՝ երկրագործի, որ սերմանիցէ զսերմն յագարակի ։ Պարտ է ևս զգուշանալ, զի մի ոք յամ քայլափոխս՝ որպէս զնաւ հողմակոծեալ կողմնէ 'ի կողմն շարժեսցի․ կամ ը͞ն ցանագնոտաց՝ յերեսս խոնարհեսցի և բարձրասցի․ այլ օրէն է ուղղորդ և արի ընթանալ առանց գոռոզութեան և թուլամորթութեան ։

11․ Չէ պարտ 'ի Ճանապարհի բերանաբաց ընթանալ․ կամ յառեալ աչօք պշնուլ յերեսս այլոց որպէս զափշեալ․ կամ յաճախ հայիլ յայսկոյս և յայնկոյս առանց նկատելոյ զտեղին, ուր հանդերձեալ է դնել զոտս, որով և բազում անգամ հանդիպի կոխել 'ի տիղմս, հարկանել զոտն զքարի, գթել և անկանիլ ։ Զգուշալի է ևս յընթանալն 'ի Ճանապարհի՝ իբր 'ի պատՃառս զբօսանաց կամ զբաղմանց կրել 'ի ձեռին թաշկինակ կամ զայլինչ խաղալիկ

կամ

կամ ընդ քարշ ածել զգաւազան. կամ հարկանել ոտիւք զքարինս և ձգել 'ի բացի. կամ ծամել ինչ բերանով և ուտել. կամ երգել, խօսել առանձին և ծիծաղել. կամ նշանաւ իւիք ցուցանել, թէ խորհի զիրաց ինչ, կամ հոգովք տաժանի: Զի այսպիսի գործք ոչ են պատուականաց, այլ յիմարաց և տղայոց:

12. Ի դիպելն ումեք 'ի ճանապարհի՝ չէ պարտ զկայ առնուլ 'ի փողոցամիջի անդ. խափան լինելով գնացից այլոց, և խօսել բարձրաձայն կամ վիճել զառևտրոց, կամ կատակս առնել և ծիծաղել անպատկառ. այլ պարտ է համառօտիւ վճարել զբանն և զխօսակցութիւն թէ ունիցի ընդ նմա: Իսկ եթէ վերաբերութիւն գործոյն ստիպեսցէ 'ի խօսս, օրէն է ընկերակցել միմեանց 'ի ճանապարհի, կամ առանձնանալ ուրեք, և անդ խօսակցել որպէս և կամիցին:

13. Եթէ դէպ լինի գնալ ընկերակցութեամբ ընդ այլում համատարի, չէ օրէն ումեք 'ի նոցանէ նախապատիւ առնել զանձն քան զընկերն, որ և լինի յառաջ ընթանալով կամ կալով 'ի պատուաւոր կողմն, այլ յաւէտ պարտին զմիմեանս մեծարել. և կամ գնալ անտարբեր առանց ինչ խտրութեան: Իսկ եթէ ընկերասցի ոք ընդ երիցագունի հասակաւ կամ պատուով, պարտ է միշտ զաջակողմն տալ նմա, կամ զտեղին առաւել պատուաւոր: Իսկ պատուաւոր տեղի՝ հասարակօրէն համարի լինել աջակողմն. բայց ուրեք ուրեք առաւել պատուաւոր

սա-

առի այն կողմն ճանապարհին, որ մերձ իցէ որմոյն զոր պարտ է քաղաքավարին դիտել. և ոչ այնմ առնել։ Այս կանոն պահելի է և ՚ի ճեմելն կամ յրզգնալն ընդ ումեք ՚ի տան և կամ ՚ի պարտիզի. զի պարտ է ստորնոյն կալ ՚ի ձախակողմն մեծին, բայց չէ օրէն յամենայն դարձս զնոյն առնել՝ անցանելով ՚ի միոյ կողմանէ ՚ի միւսն. այլ յառաջնում նուագի և եթ պարտ է դիտել և տալ վերնագունին զպատուաւոր տեղին. իսկ ՚ի դառնալն մնալ է ՚ի նոյն կողմն, ուր և գտանիցի։

14. ՚Ի ճեմելն կամ ՚ի գնալն ընդ պատուաւորի ումեք, չէ արժան ըստ ամենայնի հաւասար ընթանալ ընդ նմա, այլ առ փոքր մի յետս ՚ի կողմանէ, ՚այնչափ զի կարող իցէ պատուաւորն դիւրաւ խօսիլ ընդ նմա։ Միանգամայն զգուշալի է առանց ինչ հարկի ստէպ ստէպ զկայ առնուլ առ ՚ի խօսիլ. այլ պարտ է զխօսս ընդ ընթացս յարմարել։

15. Յընթանալ ուրուք ընդ այլում՝ մի կարի մերձ լիցի ընկերին յենլով ՚ի նա կամ կից ունելով զզգեստ առ զգեստ, կամ սեղմելով զանձն նորա, որով լինի բազում անգամ մղել կամ խթել այր զընկեր իւր։ Եւս առաւել չէ արժան զձեռն ՚ի վերայ ուսոյ ընկերին դնելով՝ կամ բազկաւ զպարանոցաւ նորին պատելով գնալ, որպէս առնեն մանկունք ՚ի փողոցի. ոչ և ձեռն ՚ի ձեռն տալով գնալ չէ ՚ի դէպ, բայց ՚ի տղայոց՝ որք պէտս ունին ձեռնտուութեան։

16. Յորժամ երեք կամ չորք ՚ի միասին ընթանան

և

և կամ ձմեռն, չէ պարտ ստորնադունին ՚ի նմա կալ ՚ի միջին տեղւոջ, այլ ՚ի ծայրն. զի մէջն առաւել պատուաւոր համարի։ Իսկ ՚ի դառնալն՝ պարտ է նոցա, որք կան ՚ի ծայրն՝ դարձուցանել զերեսս առ միջինն։ Եւ միջնոյն արժան է դարձուցանել զերեսն միանգամ յաջկոյս և միանգամ ՚ի ձախակոյս. սակայն եթէ մին ՚ի ծայրն եղելոց՝ իցէ առաւել պատուաւոր քան զմիւսն, պարտի համարձակօրէն դառնալ առ նա։ Եւ եթէ դէպ լիցի մտանել ընդ դուռն տան կամ սենեկի և կամ եկեղեցւոյ ընկերակցութ ընդ մեծի ուրուք, չէ պարտ ստորնոյն յառաջել քան զմեծն և նախ մտանել. այլ պարտի յարգութ տեղի տալ նմա, զի նախ նա մտցէ, և ապա ինքն զհետ նորա գնասցէ։

## ԳԼՈՒԽ. ԺԲ։

### Կանոնք ՚ի զգեստուց և յայլագանելեաց։

### Առաջին



Առ վայելչութիւն կենաց քաղաքավարին պատշաճի և բարեձևութիւն զգեստուն. վասնզի պարտ է ամ ումեք երևիլ առաջի այլոց վայելուչ և բարեյարդար զգեստուք ըստ աստիճանի՝ պատուոյ և հասակի անձին։ Յամի վարելով և զհետ երթալով սովորութե երկրին կամ գործածութեն, զոր ՚ի կիր առնուն պարկեշտագոյնք և առաւելագոյնքն ՚ի մարդկանէ. և չէ օրէն յայսմ ըստ հաճոյս զարտուղիլ ՚ի սովորութե հասարակաց. զի ըստ առածին կերիցես որպէս կամք են

քո

քո, այլ զգեցցիս իբրև զայլոյն։

2. Պա՛րտ է զգեստուն լինել բարեձև. ըստ վայելչապէս պատշաճեալ ըստ չափու և համեմատութեան անդամոց անձինն, որ զգենուցու զայն. քանզի անբարեձև հանդերձք՝ թէպէտև մեծագինք իցեն՝ արհամարհք են և խոտելիք յաչս ազնուականաց. և զի որ զգենուն զայն, զմի ինչ յերկուց աստի յայտ առնեն, ո՛չ թէ, կամ չգիտեն բնաւ զվայելուչն և զբարեյարդար. կամ զի չունին փոյթ զումեքէ, որով տան այլոց կարծիս ՚ի մտի դնել, թէ յոչինչ համարին զնոսա. վասն որոյ և լինին ատելի ամենեցուն իբրև տմարդիք և անխմաստք։

՚Ի կանոնէ աստի յայտ է և ա՛յս՝ թէ չէ՛ պա՛րտ զգեստուն լինել կարի իմն լայն և ընդարձակ. կամ ընդ հակառակն յոյժ նեղ և անձուկ՝ մինչև երևիլ ամենայն յօդուածոց մարմնոյն. այլ արժան է հետևիլ սովորութեան և գործածութեան բարեկիրթ և ազնուական անձանց։ Զնոյն պա՛րտ է առնել ՚ի գլխարկս և ՚ի կօշիկս։

3. Չէ՛ պարտ զգենուլ հանդերձս աղտեղիս և պատառատունս, այլ ըստ կարի օրէն է զհետ երթալ մաքրութեան և վայելչութեան։ Այսպէս պա՛րտ է յամենայն աւուր ընդ առաւօտս՝ նախ քան զելանելն ՚ի փողոց, հայել և մաքրել զագանելիսն մանաւանդ զվերարկու և զկօշիկս։ Սակայն առ ՚ի զգուշութիւն յաղտեղութենէ, պիտոյ է զգաստութեամբ վարիլ և գիտել յամենայն ՚ի նստիլն, յընթանալն և ՚ի յենուլն ուրեք զի մի իցէ փոշի կամ տիղմն, կամ այլ ինչ աղտե-

ղութի

զուն, որով հանդերձ աղտեղացեալն: Նոյնպէս զգուշալի է ազնուականաց մտանել ՚ի խոհակերանոյն կամ յայնպիսի տեղիս, ուր հասարակօրէն գործին նուաստ և (Ճենճերոտ) ծառայութիւնք, ուստի դիպի բազում անգամ աղտեղանալ զգեստուց:

4. Պարտ է ամ կարի հոգ տանիլ մաքրութեան անկողնոյ, սաւանի և այլոց իրաց՝ որք կարգին ՚ի պէտս գործածութեան գիշերոյ: Եւ ևս չէ պարտ կարի յամեցուցանել զփոխելն շապկի, զգուլպայ և զայլ ներքին զգեստս, մանաւանդ յամառնամիջի, և կամ յորժամ ատէպ քրտնի ոք, զի մի ՚ի հոտոյ քրտանց կամ յաղտոյ զզուանս տայցէ այլոց և վնասեսցի առողջութեան իւր:

5. Չէ արժան առն մարդոյ ՚ի կիր առնուլ զայնպիսի զարդ զգեստուց, որ սեփական է կանանց, կամ հատանէտ իբր կրել ընդ իւր. զի այսպիսի աւելորդութիւնք թէ ըստ չափ անցանիցեն և ՚ի կանայս իսկ չեն առանց ստգտանաց, թող թէ յարս: Միանգամայն պարտ է խորշիլ և ՚ի կարի փառաւորութեան զգեստուց, բայց եթէ վիճակ ուրուք և հանգամանք ժամանակի և տեղւոյ զնոյն պահանջեսցէ. Թէպէտ և առ ազնուականս միշտ գովելի է ընտիր պարզութիւն առանց աւելորդ չքեղութեան:

6. Արհամարհ և խոտելի համարի յազնուատոհմս կարի իմն լայնարձակ գօտիս ածել ընդ մէջ, կամ բազում աւելորդ իրօք լնուլ զծոց հանդերձին, որ սովոր են առնել ողորմելիք ոմանք: Նոյնպէս

ան

անվայելուչ է ՚ի վեր առնուլ զքղանցս հանդերձին կամ ՚ի գօտիս պնդել զայն, և այնպէս ժողովել. մինչև երևիլ ներքին զգեստուց: Ըստ այսմ գեղջկութիւն համարի զվերարկուն զանձամբ արկանել առանց զգենլոյ, և այնպէս ՚ի վերայ Թիկանց ունելով գնալ ՚ի ճանապարհի. կամ ամփոփեալ և ծալեալ կրել զայն ընդ անթով, և կամ արկանել ՚ի վերայ միոյ յուսոյն: Զգուշալի է ևս առն քաղաքավարի տնական զգեստուք ելանել ՚ի փողոց, և կամ գնալ ՚ի տունս մեծամեծաց. բայց եթէ հարկըն և հանգամանք ժամանակին զնոյն պահանջեսցէ:

7. ՚Ի զգենուլն կամ ՚ի հանել և ՚ի փոխել զհանդերձս, մանաւանդ զներքինսն, պարտ է զգուշանալ, զի մի տեսցի յումեքէ. այլ առնելն է յառանձին տեղւոջ ուրեք կամ ՚ի սենեկի. և չէ պարտ ցրուել զայնս կամ արկանել ուր և հանդիպեսցի, այլ վայելչապէս ամփոփելն է և դնել ի յորոշեալ ինչ տեղւոջ:

8. Յայտնիկ կանոն ՚ի դէպ է յաւելուլ և զայն խրատ կարևոր, որ կարգի յաւէտ ՚ի պէտս առողջութեան քան քաղաքավարութեան. իբր զի պարտէ մարդոյ ըստ պիտելոյն՝ և ըստ տանելոյ եղանակաց տարւոյն զգենուլ հանդերձս որչափ ինչ արժան իցէ ՚ի պահպանութիւն առողջութեան մարմնոյ. քանզի են ոմանք յունայնասէր և ՚ի թեթևամիտ անձանց, որք ՚ի ձմեռնամտին սակս քնքուշ և յարդարուն երևելոյ յաչս մարդկան, չախորժեն զգենուլ հան-

դերձս

դերձս բազումս կամ որչափ պիտոյն է, զի մի՛ թան
ձրամարմին երևեսցին. որով և հանապազ սար-
ուին 'ի չըրոյ. փոխանակելով զկենաց առողջութի
ը̄ չնչին բանս կարծեցեալ գովութե̄ մարդկան։

## ԳԼՈՒԽ. ԺԳ.

### Կանոնք 'ի սեղանի, կամ յուտելն շնչերանչուք։

Որպէս զի բարւոք իմասցին կանոնքս, զորս հանդերձեալ եմք աւանդել յայս գլուխ. արժան է նախ ընդ հանրապէս տալ ծանօթութի ինչ սակս այլևայլ սովորութե̄ և հանգամանաց սեղանոյ արևմտեան և արևելեան ազգաց. որում նախածանօթ գոլով ընթերցողաց. դիւրա՛ն մարթ ասցին որոշել զկանոնսն. թէ ո՛յք առ ո՛րս պատշաճին. և ըստ այնմ կարօղ լիցին ընտրել և առնել. որ ինքեանց անկ իցէ։

### Հանգամանք սեղանոյ արևմտեայց։

Որովհետև սովորութի է արևմտեան ազգաց ուտել զկերակուր բազմելով 'ի վե̄ր աթոռոյ. նմին իրի դնեն նախ սեղան տախտակ կամ տրապիզ բարձր. և ծածկեն զայն սփռոցովք կամ սպիտակ պաստառաւ. և շարեն յեզր սեղանոյն սկաւառակս ուղղերկն ըստ թուոյ. անձանցն. որք հանդերձեալ են նստիլ 'ի սեղան. և յայն սկաւառակսն դնին հասարակօրէն հացն՝ առանց հատանելոյ. և պաստառն վայելչապէս ծալեալ. զոր 'ի

բազ

բազմիլն ունին առնուլ ՚ի վեր։ Իսկ յաջակողմն սկաւառակին եդեալ լինի իւրաքանչիւրոց մի մի դանակ. դրգալ և պատառաքաղ որ է չանչալ. ընդ որս և ուրեք ուրեք՝ ատամնափորիչ մի փոքրիկ ՚ի փայտէ։ Այս դնեն ՚ի վերայ սեղանոյ աստ և անդ. փոքր սկաւառակս կամ պնակս քանի մի. յորոց վր զետեղին շիշք կամ անօթք ջրոյ և գինւոյ. և մի մի բաժակ ևս դնի առաջի ամենեցուն. զի իւրաքանչիւրոք առանձինն ըստ պիտելոյն երբ և կամեսցին արբցեն։ Այս պատրաստին աթոռք ըստ թուոյ անձանցն՝ եդեալք հանդէպ միոյ միոյ ՚ի սաղնէրին։ Նոյնպէս յառաջագոյն եդեալ լինին աղն և պղպեղ և այլ ինչ այսպիսի. զոր սովոր իցեն ՚ի գործածել։ Իսկ ՚ի տունս մեծամեծաց կամ ՚ի կոչունս զարդարի մէջ սեղանոյն զանազան ծաղկօք և ճարտարագործ մեքենայիւք արձանաց և շինուածոց առ ՚ի վայելչութիւն և եթ։ Բայց երբեմն այն զարդարանք լինին պէսպէս հանդերձանօք անուշեղինաց. զորս ուտեն յետ կերակրոց։

Իսկ ՚ի բազմիլն ՚ի սեղան բերեն զկերակուրն մեծ սկաւառակաւ կամ ափսէիւ՝ և դնեն ՚ի մէջ սեղանոյն մերձ առ կոչնատէրն. կամ առ նմա՝ որում անկ իցէ բաժանել զայն. և նա ձեռնարկեալ բաժանէ ամենեցուն փոքր փոքր սկաւառակօք. և առ մի մի կերակուր փոփոխին սկաւառակքն՝ մինչև յաւարտիլ սեղանոյն։ ՚Ի կողմանս ինչ եւրոպիոյ սովորութիւն է զամենայն կերակուրս միանգամայն դնել ՚ի սեղան, զի, իւրաքանչիւրոք զոր ինչ ախորժէ,

զայն

զայն նախ կերիցէ։

Հանգամանք տեղւոյ արեւելեայց։

Սովորութիւն արեւելեայց է ուտել զկերակուր նստելով 'ի ծունկս կամ բազմելով 'ի վերայ գետնոյ. վասն զի սեղան նոցա ոչ է յոյժ բարձր յերկրէ. զոր եւ յառաջ քան զնստելն սփռեն նախ 'ի վերայ գետնոյ պաստառս կտաւի. եւ ապա դնեն զսեղանն 'ի վերայ նորա։

Յետոյ հատանեն զհացն 'ի շերտս շերտս եւ շարեն պակաձեւ յեզր սեղանոյն. ապա շուրջ բոլորեն երկայն պաստառ մի սպիտակ կամ բազմագունի, զոր եւ 'ի բազմիլն ամենեքին առնուն 'ի վերայ ծնգաց իւրեանց։ Իսկ եթէ իցէ ոմանց սովորութիւն դանակ եւ պատառաքաղ 'ի գործ ածելոյ. դնեն եւ զայն. բայց դրգալն յայնժամ դնի. յորժամ պէտք լինիցի վասն կերակրոյ։ Եւ պատրաստի եւս յառաջագոյն 'ի վերայ սեղանոյ աղն եւ պղպեղ. միանգամայն ըստ ժամանակին զարդարի եւս անեփ բանջարեղենօք. զոր ուտեն ընդ կերակրոյ։ Իսկ անօթք կամ շիշք ջրոյ եւ գինւոյ ոչ դնին 'ի սեղանի. այլ պատրաստին արտաքոյ. ընդ մին եւ քանի մի բաժակք որով ըստ պիտոյից մատուցանէ ծառայն սպասաւորն կամ մի ումն 'ի բազմելոյ։ Իսկ զկերակուրն բերեն 'ի սեղան մեծ սկաւառակաւ. եւ անտի ուտեն ամենեքին համարձակօրէն առանց բաժանելոյ. թէպէտ 'ի տեղիս տեղիս սովորութիւն է եւ նոյն բաժանել յառանձին սկաւառակս։

Այս

Այս կարգ և համաձայնք սեղանոյ արևմտեայց և արևելեայց, զոր եդաք աստանօր. է մի հասարակ և հանրական գործածութեան՝ որ կայ՚ի նոսա. և թէ պէտ գտանին այլ մասնաւոր զարտուղութիւնք և սովորութիւնք ինչ յառանձին տեղիս և՚ի քաղաքս, ապա և յայլ և այլ տունս իսկ՚ի նմին քաղաքի. այլ զի ոչ համարին այնք հասարակաց, թողումք յիշատակել, իբր աւելորդ վարկուցեալ առաջիկայ գործոյս։

Կանոն Առաջին։

Յառաջ քան զբազմիլն՚ի սեղան՝ պարտ է երիցագունին օրհնել զայն գլխիբաց և յոտին կալով ամենեցուն. զի այս է յանկաւոր մարդոյ՝ մանաւանդ հաւատացելոյ, որ ճանաչէ զԱստուած և խոստովանի զնա լինել պարգևատու և խնամօղ արարածոց։

2. Չէ պարտ ստորնոյն բազմիլ՚ի սեղան՝ յառաջ քան զնստիլ վերնագունին։ Միանգամայն տմարդութիւն է յառաջել և բազմիլ՚ի պատուաւոր տեղւոջ այլ պարտ է սպասել և կալ՚ի բացի, մինչև այլք բազմեսցին, կամ տանուտէրն որոշեսցէ ուր արժան է նոյա նստիլ։ Իսկ եթէ կոչնատէրն մոռասցի, կամ ոչ որոշեսցէ ինչ, գովելի է միշտ զյետին տեղին ունիլ։

3. ՚Ի սեղանի՝ զառաջինն կոչնատեառն կամ պատուաւորին անկ է ձեռնարկել՚ի կերակուրն և ոչ բնաւ հրաւիրելոյն. բայց եթէ կոչնատէրն յանձնեսցէ ումեք բաժանել, մարթ է նմա սկիզբն առնել

առնելայնմ։ Այլ ՚ի բաժանելն զկերակուր, օրէն է նախ տալ պատուաւորաց՝ և ապա այլոց կարգաւ, և հուսկ յետոյ պարտ է առնուլ բաժանողին։ Եւ ևս չէ պարտ զամ կերակուրն միանգամայն բաժանել. այլ արժան է սակաւ ինչ թողուլ ՚ի հասարակաց սկաւառակն, զի յորժամ պէտք լինիցի ումեք միւսանգամ տայցի նմա։ Իսկ դըրգալն՝ դանակ և պատառաքաղ, որով բաժանի կերակուրն պարտին լինել առանձին և որոշեալ. զորս չէ օրէն ՚ի գործածել ումեք վասն ուտելոյ նոքօք։

4. ՚Ի բազմիլն յուտել, չէ պարտ կարի իմն մերձ նստիլ սեղանոյն, կամ ընդ հակառակն յոյժ հեռի. այլ այնպէս, զի իցէ չափաւոր միջոց ը̄ սեղանն և ընդ կուրծսն։ Եւ ևս պարտ է բազմիլ ուղղորդ դրիւք. և ոչ յենուլ ՚ի սեղանն լանջիւք կամ արմնկամբք, կամ տարածել զբազուկս ՚ի վե̄ր նորա։ Որպէս և չէ օրէն զթիկունս տալ ՚ի բարձրն կամ ՚ի յենարան աթոռոյն. և շարժել զոտս. այլ պիտոյ է բազմիլ հանգիստ և հանդարտ։

5. Յուտելն զկերակուր՝ չէ պարտ կարի իմն կորանալ ՚ի վերայ սեղանոյ. իսկ յորժամ հարկ լինիցի ՚ի դնել զպատառն ՚ի բերան, յետ փոքր մի խոնարհելոյ պարտ է միւսանգամ ուղղիլ և ՚ի վեր ունել զգլուխն։

6. Եթէ կայցէ ՚ի սեղանի առաջի իւրաքանչիւր առանձին դանակ, դրգալ և պատառաքաղ, պարտ է զայնս ամփոփ պահել յաջակողմն կոյս. և ոչ ցրուել աստ և անդ. իսկ զհացն սովորութիւն է դնել

՚ի

՚ի ձախակողմն ։

7. Զկերակուրն պա՛րտ է միշտ աջու ձեռամբ տանիլ ՚ի բերան. և չէ՛ արժան ամենևին թաթաւել զձեռսն կերակրովք. մանաւանդ յորժամ կայցէ պատառաքաղ և դրգալ. զորս հնար է ՚ի կիր առնուլ ՚ի պատշաճական իրս ։ Իսկ եթէ ուրեք չգտցէ գործածութիւն պատառաքաղի, յայնժամ ՚ի դէպ է ուտել ձեռօք վայելչապէս. առանց շաղախելոյ զամ մատունսն միանգամայն ։

8. Չէ՛ պարտ թուալից ուտել զկերակուրս. այլ այնչափ լնուլ զբերանն կերակրովք՝ մինչև այտնուլ երկոցունց կողմանց ծնօտիցն, և այնպէս լիաբերան ամ ատամամբք կամ բովանդակ ծամելեօք ծամկել. այլ պարտ է գնել ՚ի բերանն չափաւոր պատառ, և միով կողմամբ և եթ ծամել զայն ։ Իսկ ՚ի ծամելն անդ զկերակուր, չէ՛ պարտ փակեալ ունիլ զշրթունս, կամ ընդ հակառակն միշտ բաց այլ չափաւոր վայելչութեամբ արժան է բանալ փոքր մի ։

9. ՚Ի սեղանի չէ՛ պարտ ցուցանել զանյագութիւն, որ լինի արագ արագ ուտելով առանց միջահատութեան. և կամ երկոքումբք ձեռօք հետ զհետէ զկերակուրն ՚ի բերան տանելով ։ Այլ չէ՛ օրէն զայլ պատառ դնել ՚ի բերան՝ մինչև իցէ աւարտեալ միոյ պատառի. զի ՚ի կերակուրս և յըմպելիս պարտ է քաղաքավարին լինել չափաւոր և բարեկարգ ։ Ոչ ուտելով անխտիր յորում և իցէ տեղւոջ և ժամանակի կամ զեղխութեամբ և անկուշտութեամբ. այլ յամենայն

պա

պահելով զկարգ և զսահման. ուտելով որչափ ինչ պիտոյ իցէ առ պահպանութիւն կենաց. զի ըստ ասելոյ ուրուեմն իմաստնոյ, ոչ յայն սակս կեան մարդիկ, զի կերիցեն, այլ ուտեն, զի կեցցեն: Ուստի զգուշելի է միշտ և վայելուչ յոյժ կերակուրս Թողուլ սակաւիկ ինչ 'ի սկաւառակի, և ոչ ուտել զամենայնն, մանաւանդ 'ի լինիլն յայնպիսի սեղանս, ուր իցէ յոլովութիւն կերակրոյ:

10. Եթէ կարի ջերմ իցէ կերակուրն կամ ըմպելին, զոր ոք հանդերձեալ է ուտել կամ ըմպել. չէ պարտ փչել 'ի նա՝ զի զովասցի. այլ արժան է սակաւիկ մի համբերել. կամ դրգալով վայելչապէս խառնել և տարածել. բայց այնպէս, զի մի զզուանս պատճառեսցէ 'ի տեսօղս: Իսկ եթէ ոք ջերմաջերմ ախորժեսցէ ուտել կամ ըմպել, պարտի զգուշանալ. զի մի մեծաձայն շունչմամբ շըրթանց ձգեսցէ զկերակուրն և կամ զըմպելին 'ի բերանն, որով խրտեցուսցէ զականջս լսողաց:

11. 'Ի դնել զկերակուրն 'ի բերան, պարտ է զգուշանալ՝ զի մի Թափեսցի կամ կաթեսցէ 'ի մէջ սկաւառակին կամ 'ի վերայ պաստառին, զոր ունի 'ի վերայ իւր. որպէս սովոր է հանդիպիլ յուտելն զթան կամ զայլ ինչ ջրալի կերակուր: Այլ Թէ պէտ և ոմանք առ զերծանելոյ 'ի վտանգէ անտի, ձախու ձեռամբ ըմբռնեն 'ի ներքոյ դրգալին ըզպաստառ մի հացի. բայց որ յաւէտ վայելուչն է և անվտանգ. չէ պարտ կարի իմն լնուլ զդրգալն. զի Թափեսցի:

12.

12. Զի՛ ինչ վայելուչ ՚ի սեղանի մանաւանդ ա-
ռաջի ազնուականաց՝ բերել զ հացս ՚ի մէջ ապու-
րին. կամ զ պատառս հացի և մսոյ թանալ ՚ի ջուր
կերակրոյ. և այս յաւէտ ՚ի հասարակաց սկտեղ:
Այլ եթէ դէպ լինիցի առնել, պարտ է զգոյշ
լինել, զի մի զնոյն պատառ, զոր եթաց, ՚ի կիսոյն
խածանելով կերիցէ, և զմնացեալն միւսանգամ
թացցէ. այլ պարտ է առնել զայնպիսի չափաւոր
պատառ, զոր կարասցէ միանգամայն դնել ՚ի բե-
րան: Այլ և զգուշալի է մեծապէս ըմպել զմնա-
ցուածս ջրայնի մսանց կերակրոյ՝ տանելով զսկա-
ւառակն ՚ի բերան: իսկ եթէ կամիցի ոք, օրէն
է ըմպել դրգալով. և այն՝ ոչ եթէ զսկաւառակն
շրջելով ՚ի վ̅ր դրգալի. այլ զդրգալն զգուշութ̅ե
մխելով ՚ի սկաւառակն:

13. Յառնուլն զկերակուր կամ զպտուղ ՚ի հա-
սարակաց սկաւառակէ, չէ՛ պարտ խտրութիւն
առնել ՚ի մէջ մեծի և փոքու կամ լաւի և վատթա-
րի. կամ ընտրել զայն, զոր ինքն ախորժէ. այլ
պարտ է անխտիր առնուլ զայն, որ հանդիպի ա-
ռաջի իւր: Բայց գովելի՝ է միշտ զանարգն առ-
նուլ. այլ առանց յայտնի որոշելոյ: Եւ և՛ս ՚ի կե-
րակրոյ անտի, զոր ունի ոք առաջի իւր ՚ի սկաւա-
ռակի, ո՛չ թուի վայելուչ միւսանգամ յաւելուլ
՚ի վերայ, բայց եթէ՝ որ մատուցանէ զայն, իցէ
ինքն իսկ կոչնատէրն. զի հրաւիրելոյն բնաւ չէ՛
օրէն առնել զայն համարձակութ̅ի. ապա թէ ոչ
նախատինք ընծայինն կոչնատ̅ն. իբր զի չգիտաց
ող

ոյ պարտն է հիւրասիրել։ Իսկ եթէ ումեք մատուսցի ինչ ՝ի սեղանի, պարտ է քաղցրութ. և շնորհակալութ. ընդունիլ, թէպէտ և ոչ կերիցէ զայն. զի մի անարգօղ երևեսցի տուողին։

14. Ձէ պարտ ՝ի սեղանի ձեռօք հատանել զամբողջ հացն, այլ դանակաւ։ Բայց թէ հացն իցէ թարմ՝ և փոքրիկ, և չգուցէ սովորութ. դանակաւ կտրելոյ. (ըստ որում է տեսանել ՝ի կողմանս ինչ արևմտից և արևելից.) յայնժամ մարթ է ձեռօք առնել. սակայն զգուշալի է, զի մի հատցի միով ձեռամբ և եթ, յեցուցանելով զհացն ՝ի վերայ սեղանոյ կամ սկաւառակի. այլ ըստ պիտելոյն երկոքումբք ձեռօք առնելի է։ Եւ ևս անվայելուչ է զամբողջ հացն միանգամայն ջարդել ՝ի մասունս. այլ սակաւ առ սակաւ որչափ և պիտոյ լինիցի։

15. Եթէ ոք առ տկարութ. ատամանց չկարիցէ ուտել զկեղևանս հացի, չէ պարտ նմա զամբողջ հացն միանգամայն կեղևել, կամ զմիջուկ նորին քերելով հանել. այլ առ մի մի նուագ՝ յորժամ ըստ պիտելոյն հատանէ զմասն ինչ, զայն և եթ արժան է կեղևել. և յետ ուտելոյն ապա զայլսն հետզհետէ։ Զգուշալի է ևս ՝ի սեղանի զհացն թանալ ՝ի ջուր կամ ՝ի գինի, բայց եթէ վասն տկարութեան։

16. Ի պակասիլ հացին, որ եդեալ իցէ առաջի ուրուք, չէ պարտ առնուլ զհացն, որ կայցէ առաջի այլոյ. այլ պարտ է մեղմով խնդրել

ապա

ապաստանոյին, կամ այնմ՝ որում անկ իցէ տալ զայն։ Իսկ եթէ չունիցի ոք համարձակութիւն խնդրելոյ, պարտի համբերել մինչև այլոյ տեսանայեն նմա։ Զնոյն զգուշութիւն առաւելապէս պարտ է առնել 'ի պանդխտաց կերակրոյն, որ կայցէ առաջի ուրուք, զի չէ արժան ձեռն երկայնել 'ի հասարակաց սկաւառակն, և առնուլ անտի զոր ախորժէ։

17. Չէ պարտ շաղախել ձեռօք կամ դանակաւ հատանել զհաց՝ կամ զպտուղ, կամ առնուլ զաղ և կամ ըմբռնել զգաւաթ. այլ թէ պէտք լինիցի առնել ինչ յայսպիսեաց, օրէն է նախ մաքրել զձեռս կամ զդանակն 'ի սրբիչ՝ թէ կայցէ. իսկ եթէ չգուցէ սրբիչ կամ ջնջան 'ի սեղանի. (ըստ որում յարևմուտս չիք սովորութիւն դնել զայն. յայնժամ ըստ ասելոյ ոմանց՝ 'ի դէպ է վայելչապէս և 'ի ծածուկ մաքրել 'ի վերայ պատառի միոյ հացի. զոր և փութով պարտ է ուտել և ոչ թողուլ. թէպէտ ըստ այլոց չէ օրէն ուտել զայն պատառ, այլ դնել 'ի մի կողմն սկաւառակին, որ կայցէ առաջի նորա այլ և այս չէ. գովելի։

18. Եթէ դանակ կամ դրգալ ուրուք թաթաւեալ իցէ 'ի կերակուր ինչ, չէ պարտ դնել զայնս 'ի վերայ սփռոցի սեղանոյն. այլ յեցուցանելի է 'ի մի կողմն սկաւառակին եղելոյ առաջի նորա։ Եւս 'ի խնդրել ուրուք զդանակ յումեքէ, եթէ իցէ աղտեղեալ, պարտ է սրբել նախ, և ապա մատուցանել։

19. Զգուշալի է մեծապէս խածանելով ուտել

ըզ

զհացն կամ զմիս և կամ զպտուղ: այլ պարտ է հատանել դանակաւ և առնել չափաւոր պատառ, և այնպէս դնել 'ի բերան: Նաև ոչ է օրէն ամենևին 'ի սեղանի ծծել և կրծել զոսկերս. կամ հարկանել զայնս 'ի վերայ սեղանոյ և կամ 'ի վերայ հացի առ 'ի հանել զուղեղն. այլ ըստ կարի պարտ է հանել դանակաւ:

20. Յուտելն զկերակուր՝ եթէ դիպեսցի ինչ անճաքելի կամ զզուելի, զոր ըստ պատահման եդեալ իցէ 'ի բերանն, չէ պարտ փաղփաղակի զանելով 'ի դուրս թափել զայն առաջի այլոց. այլ օրէն է զգուշութեամբ առնուլ ձեռօք 'ի բերանոյն, թէ չիցէ հեղանիւթ. և դնել յեզր սկաւառակին առանց ինչ խօսելոյ և ցուցանելոյ զայն այլոց: Այլ թէ անհնար իցէ վայելչապէս 'ի դուրս հանել 'ի բերանոյն սակս հեղանիւթ լինելոյ. պարտէ ելանել 'ի սեղանոյն պատճառանօք ինչ, և երթեալ արտաքս թափել զայն առանց ուրուք տեսանելոյ: 'Ի սոյն կանոն դասելի է և այս. զի յուտելն զձուկըն կամ զպտուղ կորիզաւոր, չէ պարտ զփուշս և զկորիզս խոնարհեալ գլխով արտաքս ձգել 'ի բերանոյն 'ի մէջ սկաւառակին. այլ պիտի ձեռօք առնուլ և դնել 'ի մի կողմն սկաւառակին:

21. Չէ օրէն բնաւ ընկենուլ 'ի ներքոյ սեղանոյն զոսկերս մսոյ կամ զկեղևանս և զկորիզս պտղոյ և կամ զայլ ինչ: Իսկ եթէ դիպուածով անկցի ինչ 'ի սեղանոյն, որպէս հաց, դանակ եւն, չէ պարտ երկոքումբք ոտիւք իբր ունելեօք առնուլ

'ի

՚ի վեր. այլ պարտի խոնարհիլ և ձեռօք առնուլ. կամ սպասել՝ զի սպասաւորն տայցէ։

22. Չէ օրէն ունել ՚ի սեղանի պակասութի դնել կերակրոց. յորմէ առաւելապէս պարտին զգուշանալ հրաւիրեալքն ՚ի կոչունս. զի այնու անարգանք ընծային կոչնատեառն։ Այլ եթէ դիպի կերակուր ինչ ՚ի սեղանի, ընդ որ չախորժի ոք, ոչ պարտի յայտնել բանիւք կամ նշանօք, թէ չէ հաճեալ ընդ այն. և ՚ի հարցանելն ես՝ թէ ընդէ՞ր ոչ ճաշակէ, մարթ է սիրով և քաղցրութբ պատճառել զյագումն կամ զզգուշութիւն, զոր ունի սակս տկարութեան մարմնոյ, և կամ զայլ ինչ պատշաճական ըստ տեղւոյն։ Իսկ եթէ բռնադատեսցի ասել զճշմարիտն պարտի անուշութբ և առանց վշտանելոյ զզուումն կամ զզանումն, ասել. թէ չեմ սովոր այսպիսի կերակրոյ կամ ըմպելւոյ. և ոչ բնաւ անհարթ բանիւք ասել յայտնապէս, եթէ ոչ ախորժեցայ, կամ չէ բարւոք. ևայլն։ Միանգամայն զգուշալի է զչախորժեալ կերակուրն վեր ՚ի վայր շրջելով խառնել և այնպէս թողուլ. այլ կամ բնաւ չէ օրէն մերձենալ, և կամ ՚ի միոյ կողմանէ սկաւառակին պարտ է առնուլ զճաշակն և եթ, և ապա թողուլ։

Զնոյն զգուշութի պարտի ունել և կոչնատէրն, զի չէ արժան խտրութի առնելով ՚ի մէջ կերակրոյ և կերակրոյ՝ ասել առ այլ ոք, թող զայն և կեր զայս, որ բարւոք ևս է, քանզի հնար է, թէ զոր կոչնատէրն խոտան համարի, զայն յաւէտ ախորժեսցէ

հրա

հրաւիրեալն, որում և արգելցի յուտելոյ. այլ պարտ է թողուլ ի կամս ամենեցուն. զի ըստ ախորժանաց կերիցեն ուստի և կամեսցին: Զոր միանգամ ասեմք վս կերակրոյ, զնոյն պարտ է իմանալ և վս ըմպելեաց:

23. Զօրօրինակ անարգութիւն է պակասութիւն դնել կերակրոյ, նոյնպէս և հակառակն անվայելուչ է կարի իմն ախորժ կամ հաճութիւն ցուցանել ընդ այն. յորմէ պարտին զգուշանալ ոչ միայն հրաւիրեալքն այլ և նոյն իսկ կոչնատէրն, զի մի երևեսցի գովել զիւր խորտիկս: իսկ եթէ լինիցի ի բազմականաց գովեստ ինչ վս բարւոք ընդունելութեան և համդերձանաց կերակրոյ: պարտի խոնարհութեամբ շնորհակալ լինելով՝ զգովեստն ընծայել բարեկամութեան նոցա, որ զինքն իւր սիրով ընդունին: Միանգամայն վայելուչ է ներումն խնդրել ի հրաւիրելոյն, զի ոչ կարաց որպէս պարտն էր ըստ արժանւոյն պատուասիրել զնոսա:

24. Յուտելն զկերակուր՝ չէ պարտ ստէպ ստէպ նայիլ յերեսս այլոց. կամ ակնակառոյց լեալ դիտել զեղանակ ուտելոյ նց. և ի տեսանելն զպակասութիւն ինչ, կամ զխորթութիւն ի կերօղս, չէ օրէն ամենևին ծիծաղիլ կամ ակնարկի նշանաւ ցուցանել այլոց զայն. այլ պարտ է ամենեցուն համեստութեամբ հայիլ առաջի իւր. և միտ դնել յայն՝ զի մի ինքն արասցէ տմարդութիւն ինչ պարսաւելի:

25. Չէ պարտ ի սեղանի յաճախ հրաւիրել և ստիպել զոք առ ի ուտել զկերակուր. զի չէն գո-

վելի

վճռել այսպիսի սահման հրաւիրմունք. մանաւանդ առ մտերիմ բարեկամս, որք սովոր են առանց ինչ ակնածութեան կենակցիլ ընդ սիրելիս, զի սովոր տան ամաչեցուցանել զնոսա, և կարծեն եւս զձեռս ուտողացն. իբր զի՛ հնար է հրաւիրելոյն կարծել ՚ի մտի դնել, թէ կոչնականքն թըւէ զպատուանոցին, և այնպէս՝ առաւել եւս յետս կալ յուտելոյ։ Այս գովելի է միշտ և վայելուչ ՚ի սկզբան անդ, յորժամ բազմին ՚ի սեղան՝ յառաջ առնել նոցա և աղաչել, զի առանց նկատելոյ կերիցեն համարձակ՝ իբրև մտերիմք և ընտանիք տանն։

26. Չէ պարտ բռնադատել զոք յորբումն գինւոյ. քանզի չէ օրէն ազնուականաց կարի իմն յաձախել ՚ի գինի՝ մինչև յարբենալ. որում զհետ գայ խօսիլ անհեթեթս և անպատշաճս։ Իսկ եթէ ոք ստիպեսցի յայլոց յոյժ, կարօղ է անուշութեամբ պատճառել զտկարութիւն իւր, և զանսովորն լինել շատ ըմպելոյ. և այնպէս՝ շնորհակալութեամբ յետս դարձուցանել զբաժակն։ Սակայն՝ եթէ անհնար իցէ բանիւք հաւանեցուցանել, կարէ սակաւուք առնուլ և եթ զճաշակն ՚ի նշան սիրոյ, և ՚ի շնորհս տանիպողին, բայց և զայն պա՛րտ է դիտել ըմպօղին, զի եթէ բաժակն գինւոյ, որ մատուցանին նմա, իցէ այնչափ լցեալ, զոր չկարէ միանգամայն ըմպել. և անմարթ իցէ ևս առնուլ պահել զբաժակն, օրէ՛ն է սիրով յետս դարձուցանել զայն. և խնդրել, զի սակաւ լցուսցի. քզի անվայելուչ է զկէսն ըմպել. և զմնացեալն յետս տալ։ բայց եթէ կոչնականքն

այն

այնպէս սովորեցայց առնել ։ ՚ի կանոնէ ատոր յայտ է և այն, թէ չէ՛ պարտ յարբումն այլոց մատուցանել զայն բաժակ գինւոյ և ջրոյ, զորոյ զկէսն այլոք ճաշակեալ իցէ. բայց եթէ մտերիմ ընտանութիւն զնոյն ներեսցէ առնել. կամ սովորութիւն եգող ծածուկ բազմաց զնոյն վայելչացուսցէ. զորօրինակ տեսանեմք ՚ի կողմանս արևելից. զի անխտիր ըմպեն բազումք ՚ի մի և ՚ի նոյն սրուակէ ջրոյ ։ Զնոյն ըզգուշութիւն պարտ է ունիլ առ ՚ի չմատուցանել այլոց զխնձոր կամ զտանձ, և կամ զայլ ինչ, զորոյ զկէսն խածեալ իցէ ոք ատամամբք ։

27. Նախ քան զըմպելն զգինի, թէ կայցէ սովորութիւն քաղաքի և ազգի առնել բանս ինչ՝ իբր ՚ի կենդանութիւն կոչնատեառն, կամ ՚ի գովեստ բազմելոյն, պարտ է առնել զայն վայելչուչ օրինակաւ. համառօտ՝ այլ ընտիր բանիւք և գեղեցիկ իմաստիւք, յանկաւոր տեղւոյ և անձին, որում ընծայի այն գովեստ ։ Եւ զայս՝ պատշաճ երևի առնել յառաջնում նուագի և եթ ըմպելոյ. և ոչ յամ բաժակս ։ Այս սովորութիւն ՚ի կողմանս արևմտից չէ այժմ ՚ի յաճախ գործածութեան ։

28. Յըմպելն զջուր կամ զգինի՝ չէ՛ պարտ կարի իմն վերացուցանել զգլուխն և յածել զաչսն զառաստաղօք սենեկին. կամ հայիլ աստ և անդ յերես բազմականաց ։ Եւ չէ՛ պարտ կռթալ բերանով ըզ չռռոց չռռոց ըմպել. կամ յետ ըմպելոյն հառաչել ։ Այլև չէ՛ օրէն ծծել զգաւաթն մինչև ց՚յետին կաթիլ ըմպելւոյն ։ Եւ ևս անվայելուչ է կարի իմն

երագ

երագ ըմպել, որպէս թէ 'ի մի ումպ կլանել. կամ ընդ հակառակն՝ յոյժ յամր. իբրեւ թէ կաթիլ առ կաթիլ. բազում անգամ միջահատելով զնոյն գաւաթ. վասն զի եթէ չիցէ հնար միով շնչով կլանել. կարէ միանգամ եւ եթ տալ միջահատումն: Եւ եւս նախ քան զըմպելն, ոչ եւ յետ ըմպելոյ պարտ է սրբել զբերանն պատշաճաւ, զոր ունի 'ի վերայ իւր եւ ոչ բնաւ ձեռօք իւր զգեղջուկս. կամ ծծելով մաքրել զշրթունս. կամ թէ լեզուաւ սրբել զայն ըստ անասնոց: Այլեւ չէ պարտ ըմպել ջուր կամ գինի՝ մինչչեւ իցէ աւարտեալ պատառոյն, որ կայցէ 'ի բերանի:

29. Չէ պարտ երկոքումբք ձեռօք ըմբռնել զգաւաթն, բայց եթէ իցէ յոյժ մեծ եւ լայնատակ. Եւ չէ օրէն ունել կուռն իւր զատորոտ բաժակին. կամ ըստ հակառակն 'ի բերանոյն, ուստի սովոր են ըմպել մարդիկ. Զնոյն կանոն պարտ է պահել եւ յըմբռնելն զդդուալ կամ զպատառաքաղ, եւ կամ զդանակ:

30. Չէ պարտ 'ի սեղանի զունչս հուպ մերձեցուցանելով հոտոտել զգինի կամ զկերակուր. մանաւանդ՝ եթէ այլոք հանդերձեալ իցէ ըմպել կամ ուտել զայն. զի նողկանս տայ այլոց առիթ զզուելոյ: Քանզի հնարէ յռնգաց անտի վայրաբերել իրաց ինչ, յորմէ զզուի բնութիւն մարդոյ. թէպէտ եւ իրօք ոչ անկանիցի:

31. Չէ օրէն լնուլ զբաժակն մինչեւ ցբերանն մերձ 'ի զեղանել. զի վայելուչ եւս է մերձ ըստ մերձ

'ըրկին

կրկին ըմպել առանց վտանգի զեղծանելոյ՝ քան միանգամ լնուլ լինուլ զբաժակն, ուստի և յոլովակի դիպի արտաքս զեղանիլ. Թող զի է և նշան անյագութեան։ Բայց և ոչ անվայելուչ է ՚ի սեղանի և առաջի այլոց յօղել զբերանն գինւով կամ ջրով և կամ ջրով խակ. և յետոյ ըմպել զայն կամ թքանել արտաքս. զի կարէ զզուանս պատճառել ՚ի տեսողս։

32. Անվայելուչ է և գեղջկական յուտելն ըզխաղող՝ զամբողջ ողկոյզն կամ զճիւղ տանիլ ՚ի բերան, և շրթամբք ժողովել զհատս նորա. բայց եթէ հատք խաղողոյ իցեն կարի մանունք, զոր չէ հնար ձեռօք մի մի ժողովել և այնպէս ուտել. զի յայնժամ ճիւղ առ ճիւղ մարթ է ուտել։

33. Պարտ է կոչնատեառն միտ դնել, զի ՚ի սեղանի մի ինչ պակասեսցի ՚ի կարևորացն, որպէս է՝ հաց, ջուր, գինի, ևայլն։ Բայց ևս՝ եթէ պատառ ուրուք դիպուածով ինչ աղտեղասցի, պարտ է վաղվաղակի փոխել տալ զայն։ Միանգամայն արժան է հայիլ, զի եթէ ոք ՚ի հրաւիրելոյն անարտեալ իցէ զբաժին կերակրոյ իւրոյ, տացէ նմա այլ ևս փոքր մի ՚ի հասարակաց սկաւառակէ. և ոչ ընտանի ՚ի մեծամ կողմաց անտի, որ յանցելանայ ՚ի քերողայն։ Այլև ՚ի բաժանելն անդ զկերակուր, վայելուչ է հարցանել ցպատուականացն, թէ զո՞ր մասն ախորժէ և զայն դնել առաջի նորա։ Բայց եթէ նա ՚ի կամս բաժանողին թողցէ. (որպէս որում և արժան է առնել պատուականացն.) յայնժամ պարտի բաժանողն ՚ի լա

ագոյն

Հագոյն մասնէ մատուցանել նմա ։

34. Յետ յագենալոյ ուրուք ըստ բաւականին, իբ րև դադարի յուտելոյ, չէ պարտ նմա զանխըւայ ձեռս իւր դնել ՚ի ծոցի կամ ՚ի գրպանի, այլ կա յելչապէս օրէն է յեցուցանել յեզր սեղանոյն՝ ա ռանց տարածելոյ զբազուկս ։ Եւ ևս՝ չէ պարտ իբր ՚ի պատճառս զբաղելոյ՝ խաղալ դանակաւ կամ դդալով. կամ զոսկր բեկանել. և կամ կտտո րել զկորիզս պտղոյ. և հատանել զկեղևանս նց. այլ պարտի կալ հանդարտ և պարկեշտ, մինչև աւարտեսցեն այլք զուտելն ։

35. Չէ օրէն ումեք ելանել ՚ի սեղանոյ նախ քան զգոհանալն. բայց եթէ վս կարևոր հարկի և գոր ծոյ ։ Այլ յայնժամ պարտի ելանօղն եթէ ՚ի վեր նագունից իցէ, ներումն խնդրել ՚ի բազմելոցն զի մի ուրախութն նց լցի խափանարար ։ Իսկ եթէ ՚ի նուաստագունից ոք է պարտի խոնարհեցուցանելով զգլուխ՝ յարգութի տալ պատուաւորաց՝ առանց ինչ ասելոյ, և այնպէս դնալ ։ Միանգամայն պարտ է մեկնելոյն՝ ըստ կարի փութով վճարել զգործս, և դառնալ անդրէն ։

36. Զգուշալի է ՚ի սեղանի քորել զգլուխ և կամ զայլ ՚տեղիս ինչ մարմնոյ ։ Եւ ևս՝ ստէպ ստէպ հազալ, թքանել, խնչել, և ձգել քթախոտ ։ Սա կայն եթէ հարկն ստիպեսցէ, մարթ է առնել մեղմով և վայելուչ օրինակաւ, ըստ կանոնին՝ զոր աւանդեցաք (՚ի գլ. 5 ։

37. Չէ պարտ ՚ի սեղանի զաղտեղեալ ձեռսն մաք

րել

րել սփռոցով սեղանոյ կամ պաստառաւանն, զոր ունի ՚ի վերայ։ Եւ որ առաւել զգուշալին է, սր բել նոքօք զքրտունս երեսաց և կամ զունչս։ Եւ ևս չէ պարտ մաքրել զատամունս ծայրիւ դանակի կամ պատառաքաղի, և կամ մատամբք, զի որում սովոր են ամենք. այլ եթէ հարկ լինիցի, հնար է վայելչապէս ՚ի կիր առնուլ զատամնափորիչ, բայց դնելով հանդէպ բերանոյն զծայր պաստառակին, զոր ունի յիւր ձեռն։ Այլև յելանելն ՚ի սեղանոյն՝ չէ պարտ զատամնափորիչն կրել ՚ի բերանի, կամ մխել ՚ի հանդերձս յերևելի տեղւոջ։

38. Պարտ է տանուտէրն կամ վերակացունին ՚ի սեղանի հայիլ և դիտել, զի մի վաղվաղակի նախ քան զաւարտել այլոց զուտելն յարիցէ ի սեղանոյ և գոհութիւն տայցէ Այ. այլ օրէն է սպասել և խօսիւք զբաղեցուցանել զայլս, մինչև ամենքին կատարեսցեն զուտելն։ Բայց սակայն պարտ է և ամենուն նկատել զի մի այլք ՚ի պատճառս նորա սպասեսցեն ՚ի սեղանի վոյ եթէ բազումք ՚ի բազմականայն դադարեալ իցեն յուտելոյ, արժան է և այլոց փութով վերջացուցանել։

39. Յաւարտել ամենուն զուտելն՝ պարտ է երիցագունին ՚ի նոցանէ սկիզբն առնել զգոհութեան աղօթից՝ փառս տալով Այ, որ կերակրեաց և լիացոյց զնոսին պարգևօք ողորմութեան իւրոյ։ Որում և այլքն յոտին կալով պարտին լռելեայն ձայնակից լինել։

40. Ընդ յառնելն ՚ի սեղանոյ՝ օրէն է լռանալ

ըղ

զձեռս և զբերանն ջրով, այլ եթէ դէպ լինի լուանիլ առաւօտին բազմաւք, ոչ է պատշաճ լուանալ զբերանն, այլ միայն զշրթունսն արտաքուստ:

## ԳԼՈՒԽ. ԺԴ.

Կանոնք՝ յորժամ հանդերձեալ իցէ ոք ննջել: Եւ ՚ի զարթնուլն ՚ի քնոյ:

Զքունն տուեալ է ած մարդոյ ՚ի հանգիստ բնութեան նորա, այլ զի իցէ այն մարդկային՝ և ոչ անասնական, պարտ է լինիլ նախ՝ ՚ի դէպ ժամանակի. երկրորդ՝ ՚ի պատշաճ տեղւոջ. և երրորդ՝ վայելուչ օրինակաւ:

I. Նախ՝ պատշաճ ժամանակ քնոյ՝ է գիշերն, զոր կարգեալ է ած առ ՚ի առնուլ զհանգիստ յաշխատութենէ տուընջեան, իբր զի՝ մարդիկ զցերեկն ողջոյն վաստակեալ ՚ի գործս և ՚ի հոգս արտաքին զբաղմանց, ՚ի լինիլ երեկոյ՝ հանգիցեն և առցեն զօրութիւն, զոր և գեղեցիկս յայտ առնէ սբն Ներսէս շնորհալին յասելն առ ած. Որ արարեր զտիւ գործոյ, և զգիշեր ՚ի հանգիստ քնոյ. ՚ի շար՛՛:

Բայց հնար է երբեմն և արտաքոյ այսր գիշերային ժամու առնուլ հանգիստ քնով. այլ սակաւ յոյժ և ոչ իբրև զքուն գիշերոյ ը̃ երկար. զի բազում քուն ոչ եթէ տայ մարդոյ զօրութիւն և հանգուցանէ զնա, այլ յաւէտ տկարացուցանէ և թափէ յուժոյ, որպ տեսանեմք ՚ի քնէածս և ՚ի հեղգս, որք

տկարք

տկար և անզօր են ամենևին։

Այլ պա՛րտ է մարդոյ խնամ տանիլ, զի քուն իւր
լիցի նախ՝ բարեկարգ. կրթելով զանձն՝ զի մի ան
խտիր յորժամ և լիցի ժամանակի ննջեսցէ, մանա-
ւանդ անմիջապէս զկնի կերակրոյ. քանզի բաց ՚ի
լինելոյ նշան հեղգութե, է և վնասակար առող
ջութե մարմնոյ, այլ պա՛րտ է հետևիլ սովորութե
հասարակաց, ընտրելով զպատշաճ ժամանակն, ընդ
որում առնեն բազումք ՚ի մարդկանէ։ Երկրորդ՝
զի լիցի չափաւոր. զոր և մա՛րթ է ուսանիլ ՚ի գոր
ծածութե բազմաց։ Այլ կարծիք ներհուն բժշ-
կաց՝ զմիջոյ եօթն կամ առ առաւելն ութն ժա-
մուց բաւական ասացին լինիլ յառողջութի մարմնոյ։
2. Երկրորդ՝ յարմար և պատշաճական տեղի ննջ
ջելոյ՝ է անկողինն կամ առանձնական վայրն, ուր
պարտ է մարդոյ վայելչապէս ՚ի քուն մտանել. վասնզի
ընդ դէմ ազնուականութե գործեն. որք ՚ի ստիպել
քնոյն ննջեն համարձակ՝ ո՛ւր և հանդիպեսցի։ Նոյն
պէս տմարդի և հեղգ բարուց է ՚ի քուն մտանել
կամ ննջել ՚ի տեղւոջ, ուր բազումք ՚ի միասին
նստեալ խօսակցին. սակայն՝ եթէ ոք յայնպիսի
տեղիս կարի իմն ստիպեսցի ՚ի քնոյ, կարէ մեղմով
իմն խոյս տալ անտի. կամ ներքուստ խնդրելով ՚ի
բազմելոյն՝ գնալ առ ՚ի ննջել։ Եթէ ընդ երեկ
յետ ընթրեաց գնայ ոք յանկողին, ՚ի մեկնիլ իւ-
րում յայլոց պարտի առնել բարեմաղթութի ողջու
նելով. Գիշեր բարի։ Որում և այլք պարտին
պատասխանել։ Քեզ լոյս բարի։

3.

3. Երկրորդ՝ առ վայելչապէս ՚ի քում լինիլ մաք րոյ, մանաւանդ քրիստոնէի, պարտ և արժան է նախ ք զմտանելն յանկողինն՝ քննել զխիղճ մտաց իւրոց. և յաւելուլ ՚ի վերայ գործեալ մեղացն, զի մեւ առ ած աղօթիւք և ջերմեռանդն պաղատա-նօք. յանձն առնելով նմա զհոգի իւր, զի պա-հեսցէ անվրդով յամ արկածից և ՚ի փորձութեանց սա տանայի: Եւ ապա կնքելով զերեսս և զանկողինն նշանաւ սբ խաչին, պիտոյ է պատրաստել զինքն

առ ննջել:

Չէ պարտ մերկանալ առաջի այլոց առ ՚ի մտանել յանկողինն. զի այս՝ բայց ՚ի լինելոյ անվայելուչ և ընդդէմ քաղաքավարութն, կարգի ևս յարհամարհու թիւն տեսողաց, զի թուի իբր առ ոչինչ համարիլ

զնոսա:

Ի հանելն զհանդերձս՝ չէ պարտ ցրուել այսր և անդր. այլ դնելի է ամփոփ ՚ի մի տեղի զի յա-ռաւօտուն յելանելն յանկողնոյ՝ դիւրին լիցի գտա նել զամ և զգենուլ: (ըստ որում աւանդեցաւ և ՚ի գլ. 12. 7.) Եւ ևս պարտ է զգուշանալ մեծա-պէս, զի մի ննջեսցէ մերկ և առանց շապկի. այլ պատշաճապէս զգեցեալ ըստ տանելոյ եղանակաց տարւոյն. զի եթէ դէպ լիցի յանկարծ յառնել. կա րասցէ գտանիլ պատրաստ առ ամ պէտս: Յանդի մանելի՝ են և նոքա որք յաւէտ վասն հեզգութն քան վասն հարկի և ստիպելոյ քնոյն ննջեն առանց ըստ պատշաճի հանելոյ զզգեստս իւրեանց, և անկանին ՚ի մահիճս անյարդարաբար ամենևին. որ է ընդդէմ մարդ-կութն

կութե, թող թէ ազնուականութե։

Եթէ դէպ լինի բազում հաւասար ընկերացն ննջել 'ի միում սենեկի, չէ պարտ ումեք ընտրութ առնել տեղւոյ, անկողնոյ, սաւանի, եւ այլն. որպէս թէ կամելով զլաւագոյնն ունել. բայց եթէ վասն տկարութեան եւ բանաւոր հարկի, որ յայտնի իցէ ամենեցուն. ապա թէ ոչ՝ տմարդութի է եւ պատճառ դժտութե. (զորմէ տես եւ'ի գլ. 3. 2. 3։) Եւ եւս՝ եթէ ոք անհանդարտ իցէ 'ի ննջելն կամ հազացող կամ խորթացող՝ բարւոք է այնպիսւոյն յառանձին սենեկի 'ի քուն լինել, զի մի զայլս անհանգիստ արասցէ։ Նոյնպէս՝ եթէ ոք յանկողնի սովորութի ունիցի սաստիկ թքանելոյ, բարւոք է պահել թըքամանս կամ թաշկինակ, զի մի առանց տեսանելոյ թուքս արձակեսցէ այսր անդր, ուր չէ արժան. 'Ի մտանելն յանկողին՝ պարտ է համեստութ այնպէս զետեղել զմարմինն, զի ծածկեսցի յամ կողմանց։ Եւ չէ պարտ ննջել անկանելով 'ի վերայ երեսաց. կամ ընդ հակառակն 'ի վերայ թիկանց. կամ տարածեալ բազկօք. այլ հաւաքեալ, ամփոփ եւ հանդարտ 'ի մի կողմն մարմնոյ ընկողմնելով։

'Ի զարթնուլն 'ի քնոյ։

Առաջին.

Որչափ ոք պատրաստագոյն գնայ 'ի ննջել, այնչափ պարտի յօժարագոյն լինել 'ի յառնել, վասն 'ի լինելն առաւօտ՝ կամ յորժամ իցէ ժամանակ յառնելոյ յանկողնոյն, ընդ զարթնուլն 'ի քնոյ, պարտ է նախ քան զամ վերացուցանել զմի-

տըս

տրս առ Աստուած եւ գոհանալ զնմանէ. որ պահեաց զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերին յայնմիկ, եւ հասոյց 'ի ժամ առաւօտուն. միանգամայն խնդրելով 'ի նմանէ. զի եւ զտիւն առաջիկայ՝ նոյնօրինակ խաղաղութեամբ եւ առանց մեղաց տացէ անցուցանել: Եւ այս պարտ է անդանդաղ ելանել յանկողնոյն, առանց ընդ վայր կորուսանելոյ զժամանակն. Եւ որում սովոր են ոմանք, որք պէսպէս խրօք յամենայն յանկողնի, ձգելով զանձն, քորելով զգլուխ, յօրանջելով: (որոշտալով:) կամենէ 'ի կողմն դառնալով, թեքթեքելով եւ այլն, որք են նշան ծուլութեան:

2. Ցելանելն յանկողնոյ եւ 'ի փոխելն զշապիկ պարտ է զգուշանալ. զի մի երեւեսցի մերկ մարմնով առաջի այլոց. եւս եւ իւրոյ ընտանեաց. քանզի բայ 'ի լինելոյ այսմ՝ տմարդութեան պարսաւելի, է եւ ընդդէմ պարկեշտութեան:

3. Չէ պարտ նստելով յանկողնի զգենուլ զամենայն հանդերձս. այլ յետ ագանելոյ զպատշաճականն 'ի մահճի, պարտ է յառնել 'ի վերայ ոտից, եւ այնպէս զգեստաւորիլ: Եւ մինչեւ իցէ ոք եւ միայն զգեցեալ զամենայն հանդերձս, չէ օրէն ամենեւին գիշերային զգեստուք կամ կիսահագուստ եւ բոկոտն երեւիլ առաջի մարդկան, եւ կամ շրջիլ աստ եւ անդ: Իսկ 'ի զգենուլն զհանդերձս, արժան է հայիլ եւ մաքրել, զի մի իցեն տղմաշաղախք եւ կամ փոշելիցք: Այլ՝ յետ զգեստաւորելոյ պարտ է ծածկել զանկողինն, եւ ոչ թողուլ խառնիխուռն եւ անյարդար ամենեւին:

4.

4. Յամ առաւօտու նախ քան զելանելն արտաքս 'ի տանէ, պարտ է մարդոյ լուանալ զերեսս իւր, զի է օգտակար առողջութեան մարմնոյ, և կարգի ևս 'ի պէտս մաքրութեան։ Բայց 'ի լուանալն պարտէ վարիլ պարկեշտութեամբ՝ առանց ձայնի և խնչման։ Եւ չէ օրէն խնչել 'ի կոնքի յակներև տեղւոջ որ զզուանս բերէ տեսողաց. մանաւանդ յորժամ այլ ոք ևս հանդերձեալ իցէ լուանիլ 'ի նոյն կոնքի։

5. Ընդ առաւօտս վայելուչ է սանտրել զհերս գլխոյ. մանաւանդ նոցա, որք բազմամազ են, և ունին գնալ յեկեղեցի կամ 'ի տեղի ինչ, ուր հարկ է բանալ զգլուխ. զի մի երևեսցին հերքն խառնիխուռն գուգայեալք։ Իսկ 'ի սանտրելն պարտ է արկանել նախ պատատուս ինչ 'ի վերայ ուսոցն. զի մի աղտեղասցի հանդերձն։ Եւ չէ օրէն բնաւ սանտրել 'ի վերայ սեղանատախտակի, կամ 'ի վերայ թղթոյ և գրոց, ըստ որում սովորութիւն է առնել մանկանց։

## ԳԼՈՒԽ. ԺԵ.

Կանոնք յաղագս ծառայից։

Կարգ ծառայական՝ որովհետև է վիճակ ինչ կամաւոր, զոր մարդիկ ընտրեն կամօք իւրեանց, և պարտաւորեն զանձինս ընդ օրինօք հպատակ լինելոյ այլոց վասն վարձու. նմին իրի՝ պարտ է նոցա ըստ խրատու առաքելոյն, հնա-

զանդ

զանդ լինել և ծառայել տերանց իւրեանց երկիւղիւ. սիրով և միամտութեամբ սրտի. զի վարձքն՝ զոր ընդունին ՚ի ծառայութենէ, լիցին նոցա արդար և իրաւացի. և զի կարասցեն խաղաղութեամբ վարիլ ընդ ընտանիս տանն, յորում ծառայեն։

1. Պարտ է ծառայից ՚ի վեր քան զամ՝ լինել հեզ, խոնարհ, երկայնամիտ, համատարիմ, զգոյշ, արի և վաստակաւոր. զի միշտ նոցա հարկաւ պահանջէ զայսոսիկ առաքինութիւնս։ Այլ գլխովին տարագրելի՝ է ՚ի ծառայից հեղգութիւն, քնեածութիւն, փափկասիրութիւն, հպարտութիւն, բարկութիւն, դաւաճանութիւն, խարդախութիւն, գողութիւն, և որ ինչ միանգամ ընդդէմ եղանէ վիճակի նոցա։ Իսկ արագութիւն կամ շուտափութիւն ՚ի ծառայս անգին կատարելութիւն է, եթէ ընդ իւր կից ունիցի և զզգուշաւորն. ապա թէ ոչ՝ չիք քան զայն վնասակար ինչ և յանդգնանելի ՚ի ծառայս։

2. Պարտ է ծառայից լինել մաքրասէր. զի որովհետև պաշտօն և գործ նոցա է ՚ի մաքրութեան պահել զտունն, զկահ և զկարասիս նորա, հարկ է, զի լինիցին սիրօղք անկեղտութեան, որպէս զի կարասցեն ջինջ և յստակ պահել զամենայն։ Եւ զայս մաքրութիւն պարտին ցուցանել նախ՝ յանձին, ՚ի զգեստս, ՚ի ձեռս, յերեսս. և ապա ՚ի գործս իւրեանց, զոր գործեն։

3. Չէ օրէն ծառայից՝ հայելով ՚ի մարդասիրութիւն և ՚ի քաղցրութիւն տն իւրեանց, կարի իմն ընտանութեամբ և համարձակութեամբ վարել ընդ նոսա՝ իբր ընդ

հաւա

հաւատարմ ընկերի, այլ պարտ է յառաջ ընծայել նոյա զպատշաճականն պատիւ և զխոնարհ հպատակութիւն։ Այլ՝ եթէ ծառայն կոչեսցի 'ի տնէ իւրմէ առ 'ի խաղս խաղալ ընդ նմա, պարտ է ծառային մտադիր լինել, զի 'ի նոյն իսկ 'ի խաղսն անդ տայց նմա զպարտաւոր պատիւն և զյարգութի, որ անկ իցէ տն իւրում. և մի մարթասցի իբր ընդ հաւատարի՝ կատակաբանելով կամ ընդ դէմ դնելով և հակառակ կալով բանից նորա. այլ թէպէտ և իրաւունս ունիցի յիրս ինչ հակառակելոյ, տակաւին պարտ է նմա խոնարհիլ և անսալ, յօժարելով յաւէտ յաղթեալ երևիլ՝ քան յաղթօղ լինիլ։

4. Նոքա՝ որք միանգամ մտեալ իցեն ընդ ծառայութը այլ և այլ տեարց, պարտին զգոյշ լինիլ. զի մի գովեսցեն կամ պարսաւեսցեն զառաջին տեարս իւրեանց՝ մանաւանդ յանդիման նոցա, որոց կանն 'ի ծառայութի. զի ատելի է այս և անախորժ առ ամենեսին. յոր սակս իսկ տեսանեմք զյոլովս՝ ի պարոնաց. որք չկամին առնուլ իւրեանց 'ի ծառայ զայնոսիկ, որք երբեմն ծառայեալ իցեն այլում տն։ Այլ պարտ է նոցա մեծապէս զգուշանալ պահպանուն լեզուի՝ առ 'ի չյայտնել այլոց զծածուկս տերանց իւրեանց, կամ զեղեալսն 'ի տան, թէպէտև չնչինք և դուզնաքեայ իրք իցեն, զի այս՝ բաց 'ի լինելոյ անքաղաքավարութի պարսաւելի, է և մեղութի չար ընդ դէմ հաւատարմութե, իբր փողով հռչակ հարկանել զորս լսեն 'ի տան, յորմէ և սովոր են ծագիլ մեծամեծ անկարգութիք. և դիպի

բազում

բազում անգամ թշնամիս ստանալ նովաւ տերանց իւրեանց. Թող զի և ատելին գործով նոյն ինքն ծառայն համարի թշնամի տն իւրոյ. վնյ ստուգութեամբ ասայ՝ որ ասայն. Որչափ ծառայք, նոյնչափ թըշնամիք։

5. Չէ պարտ ծառայից ընդխառնել զանձինս յառանձին գործս տն իւրեանց՝ որ նոցա ոչ հրամայի. այլ պարտ է միտ դնել, զի զյանձնեալսն 'ի տնէ անյապաղ կատարեսցեն առանց ընդդիմաբանելոյ։ Եւ ևս՝ եթէ առաքեսցին 'ի տեղի ուրեք. պարտին փութալ և անդանդաղ կատարել առանց յամելոյ 'ի ճանապարհի, կամ յայլ ինչ գործս զբաղելոյ. զի մի հարկ լիցի զմիանգամ պատուիրեալսն միւս անգամ երկրորդել։ Իսկ 'ի հանապազօրեան գործս, զոր պարտաւորին առնել իբր 'ի պաշտօնէ, չէ օրէն սպասել հրամանի, այլ պարտ է ըստ կարի փութով վճարել և պատրաստել զամենայն ըստ ժամանակին։

6. Չէ արժան ծառայից ուրախանալ և երգել, յորժամ տեարք նոցա իցեն 'ի վիշտս ինչ և կամ յանյաջողութեան գործոց. զի մի երևեսցին բերկրել ընդ տառապանս նոցա։ Զայս կանոն պարտին պահել և որդիք 'ի վիշտս ծնողաց իւրեանց, որպէս և բարեկամք առ սիրելիս։

7. Եթէ ծառայ՝ սակս իրիք յանցանաց յանդիմանեսցի 'ի տնէ իւրմէ, չէ պարտ լրբութեամբ ընդ դէմ դառնալ, կամ ըմբոստանալով պատասխանի տանել. զի նովաւ ընծայէ առիթ առաւել ևս զայրանալոյ. այլ պիտոյ է լռել խոնարհութեամբ. Իսկ եթէ

իրա

խրատուս ունիցի արդարացուցանելոյ զանձն, օրէն է հեզութեամբ առաջի առնել. և ո՛չ արհամարհութեամբ կամ բարկութեամբ:

8. Պա՛րտ է ծառայից յամ 'ի գործս ցուցանել զվայելչութիւն ընդ աչալուրջ զգօնութեան. մանաւանդ 'ի կալն առաջի տեարց իւրեանց, և 'ի ծառայելն 'ի սեղանի. ըստ որոց ունիմք աւանդել զհետևեալ կանոնսդ:

9. Ծառայք՝ յորժամ յանդիման լինին տերանց իւրեանց, պարտին կալ միշտ յոտին, և ո՛չ բնաւ նստիլ և կամ յենուլ ուրեք: Եւ չէ՛ օրէն 'ի կախ թողուլ զձեռս կամ դնել 'ի ծոցի և 'ի գրպանի. կամ խաղալ ձեռօք և հայիլ այսր անդր. այլ պիտո՛յ է կանգնել պարկեշտութեամբ և ուղղորդ. ունելով զմիմեամբ մածեալ զձեռսն, և առ լանջօք եդեալ. միանգամայն պա՛րտ է լինիլ արթուն և պատրաստ առ ամենայն ակնարկութիւնս տերանց իւրեանց: Եւ եթէ հա՛րկ լիցի խօսելոյ, չէ՛ պարտ բազմաբանել առաջի նոցա, և ո՛չ ընդ խառնիլ 'ի զրոյցս, որ չէ՛ նոցա յանկաւոր. ուր և 'ի խօսիլ տեարց նոցա ընդ այլս՝ լռութեամբ միջամուխ լինիլ 'ի նոյն. այլ պարտին միայն ունկն դնել՝ և ո՛չ զրուցել: Ըստ այսմ չէ՛ օրէն յանդիման տերանց իւրեանց բարձրաձայն խօսիլ ընդ ծառայակիցս. իսկ եթէ հարկն ստիպեսցէ, հնա՛ր է առնել 'ի ծածուկ կամ մեղմաձայն: Նոյնպէս չէ՛ 'ի դէպ ձայնիւ ծիծաղիլ առաջի նոցա, թէպէտ և զուարճալուրս ինչ լուիցեն. այլ մա՛րթ է ժպտիլ և եթ վայելչապէս: Զնոյն

զգուշութ պարտ է ունիլ 'ի հաշալն, 'ի փոխնգալն 'ի խնչելն. յորս և վարելի է ըստ կանոնին, որ առանդյեալ ( 'ի գլ. 5 ։) Այլ ուտել կամ ըմպել խաղալ կամ ծխպամորճ առնուլ 'ի բերան առաջի տերանց և պատուաւորաց բնաւ չէ օրէն ։

Են և այլ ինչ ինչ մասնաւոր գործողութիք պատշաճեալք ծառայից ըստ զանազան տարբերութեց տեղեաց և քաղաքաց. զորս ուսուսցէ վայելուչ սովորութին իւրաքանչիւր քաղաքի և ազգի ։

10. Որք միանգամ հանդերձեալ են ծառայել սեղանոյ, պարտին նախ լուանալ և մաքրել զձեռս իւրեանց, զի մի երևեսցի 'ի նոսա աղտեղութի ինչ ։ 'Ի պատրաստելն զսեղան, դիտելի է, զի պատառքն և սկաւառակք. բաժակք և այլ ամ կահք սեղանոյն իցեն մաքուրք, նոյնպէս և հացն անմոխիր. և ամ ինչ ըստ կարգի յօրինեալ, որով մի պակասեսցի ինչ 'ի կարևորացն, և մի գտցի աւելորդ ինչ 'ի նմա ։

11. 'Ի սպասաւորելն սեղանոյ՝ պարտին զգաստութբ և զգուշաւոր հայեցուածով աչալուրջ լինել. զի ըստ պիտոյից փոփոխեսցեն զաղտեղեալ սկաւառակսն, և 'ի պակասիլ իրաց ինչ կամ յանկնարկել ուրուք ըստ պիտոյից՝ փութով կատարեսցեն. վայ և չէ պարտ նոցա առանց ինչ հարկի հեռանալ անտի, կամ մեկնիլ նախ քան զաւարտիլ սեղանոյն ։ Այլ այս զգուշաւոր հայեցուածով. զի չէ օրէն բնաւ 'ի սպասաւորս դիտելոյ՝ անթարթ աչօք և ուշադրութբ ամենակառոյց լեալ հայիլ 'ի կերօղսն,

որպէս

ոչ թէ կամելով կլանել զպատառ նոյա։ Եւ չէ՛ օրէն խօսիլ ընդ բազմականս, բայց եթէ յորժամ հարցցին ՚ի նոյանէ։ և այն սակաւ բանիւք վճարելի է։ Իսկ ՚ի կանգնիլն առ ընթեր բազմելոյն՝ չէ օրէն յենուլ յաթոռս նոյա։ կամ կարի հուպ մօտեւորիլ՝ մինչև մղել զնոսին։ որ հասարակօրէն սովորէ դիպիլ ՚ի դնելն ինչ ՚ի սեղան, կամ ՚ի բառնալն անտի։ յորս պարտ է զգուշութ՛ վարիլ զի մի թափեսցի կերակուրն ՚ի վերայ նստողաց, կամ ընդ հարկանիցի յուս և ՚ի բազուկ այլոց։ մանաւանդ յուտել նոցա զկերակուր և յըմպելն զջուր։

Եւս պարտ և զգուշանալ ընդ կարի՝ առ ՚ի զապելոյ զանձինս ՚ի հազալոյ, ՚ի թքանելոյ, ՚ի փռնգալոյ, և այլն։ մանաւանդ ՚ի բերելն զկերակուր ՚ի սեղան կամ ՚ի մատուցանելն ինչ ումեք բաժակաւ։ Քանզի այսպիսի իրք թէպէտև բազում զգուշութբ լինիցին։ սակայն և այնպէս՝ սովոր են կածանս ծնանիլ ՚ի միտս բազմականաց։ ոչ թէ սրսկեալ իցեն ցայտմունք թքոյ ՚ի կերակուրն։ իսկ կասկածն առաւել զզուեցուցանէ՝ քանթէ իրօք լինէր։ ուստի պարտ է ծառայից զգուշանալ ՚ի տալոյ այլոց առիթ զզուելոյ։ Միանգամայն զգուշալի է զի մի ՚ի սկաւառակն կերակրոյ, զոր տանին և բերեն ՚ի սեղան, մխեսցեն զմատունս իւրեանց, կամ թաթաւեսցեն զձեռս։

12. Ի բերելն զկերակուր ՚ի սեղան, եթէ սկաւառակն մեծ իցէ, օրէն է ըմբռնել երկոքումբք ձեռօք։ իսկ եթէ փոքր՝ պարտ է միով ձեռամբ տանիլ

տանիլ և բերել ։ Միանգամայն՝ եթէ սկաւառա կըն լցեալ կերակրով՝ կարի ջերմ իցէ, մինչև այրել զձեռս ըմբռնողայ, վայելուչ է դնել 'ի ներքոյ նո այլ սկաւառակ, և ոչ ըմբռնել զայն կտաւով կամ աղտեղի ջնջանաւ ։ Եւ չէ պարտ առ մի նուագ տանիլ 'ի վերայ ձեռաց զբազում սկաւառակս համադերձ կերակրովք. այլ երկու և եթ յերկոսին ձեռսն կրել արժանէ ։ Նոյնպէս և 'ի բառնալն 'ի սեղանոյ զդատարկ անօթս թաթաւեալս կերակրովք. չէ պարտ առաջի բազմականաց զբազումս 'ի միմեանց վերայ դնելով բառնալ, կամ որ առաւել զզուելին է՝ զմնացորդս կերակրոյ անօթոյ յանօթ լնուլ. այլ պարտ է բառնալ մի առ մի ։ Եւ չէ օրէն ամենևին 'ի կերակրոյ անտի, զոր բերեն 'ի սեղան, կամ յաւելորդացն, զոր բառնան, ուտել զծանապարհայն ։

13. Չէ արժան 'ի բաց առնուլ զկերակուրն յառաջոյ ուրուք. մինչ տակաւին ուտէ նա. այլ պարտ է համբերել մինչև աւարտեսցի. կամ տացի նշան բառնալոյ ։ Եւ եթէ պակասեսցի ումեք ինչ 'ի սեղանին, վայելուչ է բերել ափսէիւ կամ տափարակ սկաւառակօք, և առաջի մատուցանել ում պիտոյ իցէ, զի նա ինքն առցէ զայն ։ Նոյնպէս եթէ խնձոր՝ կամ տանձ՝ կամ խորովեալ հաւ ունիցի մատուցանել 'ի սեղան, օրէն է նախ մաքրել և կեղևել առանձինն, և ապա դնել 'ի ջինջ սկաւառակի, և այնպէս բերել ։ Բայց 'ի մաքրելն անոյ՝ զգուշալի է ձեռօք մերձենալ կամ փչելով

մաքրել

մաքրել, այլ՝ դանակաւ։ Զնոյն զգուշութ՛ պարտ է ունիլ 'ի ջուր և 'ի գինի, եթէ անկեալ իցէ ինչ 'ի նմա. զի չէ արժան ձեռօք առնուլ, կամ փչելով արտաքս ընկենուլ։

14. 'Ի մատուռակելն ումեք գինի կամ ջուր բաժակաւ՝ պարտ է զգուշանալ, զի մի 'ի մնացուածս գինւոյ և ջրոյ, որ յաւելեալ իցէ յայլոյ ըմպողաց 'ի մէջ բաժակին. լցեալ միւսանգամ 'ի վերայ այնր մատուցէ այլում, այլ պիտի զայն մնացուած, եթէ սակաւ իցէ թափել, իսկ եթէ բազում. հեղուլ յայլ անօթ. և ապա լնուլ և տալ ում տալի իցէ։ Եւ ևս չէ պարտ լնուլ զբաժակն մինչև ցբերանն մերձ 'ի զեղանիլ. կամ ըստ հակառակն՝ կարի իմն պակաս լնուլ ք՟ զոր օրէն է. բայց եթէ այնպէս կամեսցի կամ տայցէ՝ որ ըմպելոցն է։ Այլ հասարակօրէն վայելուչ համարի լնուլն իբր կէս մասնաչափ պակաս։ Իսկ 'ի մատուցանելն 'ի ձեռս այլոց, պարտ է կարկառել աջու ձեռամբ. զձախն մածեալ ունելով առ լանջօք։ Եւ չէ օրէն ըմբռնել 'ի բերանոյ բաժակին կամ գորակին, ուստի տալոց են մարդիկ ըմպել. այլ 'ի ստորոտէ, զի դիւրին լիցի առնողին ըմբռնել 'ի միջոյն։ Բայց վայելուչ ևս է, որպէս ասացաք 'ի վերագոյնդ, դնել զբաժակն 'ի վերայ ափսէի կամ փոքր սկաւառակի՝ և այնպէս մատուցանել։ Ըստ այսմ պարտ է առնել, և 'ի մատուցանելն առ այլս դանակ դըգալ, պատառաքաղ, զորս չէ օրէն ըմբռնել 'ի ծայրեսն. այլ 'ի միջոյն. զունելին ուղղելով առ-

նա

նա, որում մատուցանէ։

15. Եթէ դէպ լինիցի հատանել զծայր վառեալ Ճրագի, չէ պարտ առնել զայն ձեռօք, այլ պիտի 'ի կիր առնուլ զմկրատ. որում և օրէն է լինել միշտ պատրաստ 'ի վերայ աշտանակի։ Եւ յետ հատանելոյ զայն պարտ է հայիլ զի մի ելցէ ծուխ նր՟։ Իսկ 'ի շիջուցանելն զգուշալի է փչելով մաքրել, այլ մկրատաւ, կամ փակեղօք Ճրագարանի, որով խափանի ծուխ նր՟։

16. Եթէ լինիցի հեղուկս ինչ իւղոյ կամ մեղու կամ ձիթոյ լնուլ անօթոյ յանօթ, և մնասցեն կաթիլք 'ի շրթունս անօթոյն, չէ պարտ լեզուաւ կամ ձեռօք սրբել զայն, և յետոյ լիզուլ զմատունս, ըստ որում առնեն շինականք. այլ օրէն է մաքրել ջնջանօք, կամ այլ ինչ իրօք. զի մի շաղախեսցին ձեռք։

17. Յաճախ սեղանոյն 'ի յառնել բազմականաց պարտ է ժողովել զայն կարգաւ և ոչ խառնիխուռն. ոչ զիարդ հանդիպեսցի ձեռաց. այլ օրէն է յառաջագոյն բառնալ զսկաւառակսն կերակրոյ. ապա զբաժակսն և զայլ անօթս ջրոյ և գինւոյ, և յետոյ զայլսն մի ըստ միոջէ. բայց յա՟մի պահելով զմաքրութի՟ և զվայելչութի՟։ Իսկ զյաւելեալսն հացի՝ օրէն է ժողովել յառանձին սկաւառակ ինչ կամ 'ի փոքր կողով, և ոչ բնաւ հաւաքել կամ լնուլ 'ի գրպանս և 'ի ձեռս՝ յեցուցանելով զայն 'ի կուրծս։ Նոյնպէս չէ պարտ բառնալ միանգամայն զբազում բաժակս ապակիս 'ի մէջ

մի

մինեանց դնելով՝ վասն վտանգին դիւրաբեկ լինելոյ. այլ առ սակաւ սակաւ: Եւ յետ ժողովելոյ զամ, եթէ պիտոյ իցէ առնել ածել տեղւոյն՝ ուր եղած սեղանն, պարտ է առնել զայն ամենայն վայելչութեամբ եւ զգուշութեամբ. մանաւանդ՝ յորժամ բազմականք տակաւին նըստեալ իցեն 'ի տեղւոջն. (ըստ որում սովորութիւն է յարեւելս. (զի մի փոշին յօդս տարածեալ՝ սփռեսցի 'ի վերայ բազմելոյն:

18. Զկնի սեղանոյ՝ թէ կամեսցին բազմականքն լուանալ զձեռս, պարտ է ծառային տանիլ ջուր եւ կոնք. եւ մատուցանել նախ առ պատուաւորն, կամ առ տանուտէրն. եւ ապա առ այլ կարգաւ: Բայց 'ի մատչիլն առաջի նոցա, պարտ է նախ արկանել սփռոց 'ի ծունկս նոցին. եւ յետոյ ծունր դնել 'ի գետին միով ծնկամբ եւեթ, եւ պարտի լնուլ զջուրն աջ ձեռամբ. դնելով միշտ՝ զի միակերպ եւ չափաւոր հեղուցու. եւ ոչ երբեմն յորդ՝ եւ երբեմն նուազ. եւ մի շրջեցուսցէ. զջուրն ըստ շարժման ձեռաց լուացողին այլ դնելոյ միշտ զմէջ կոնքին. ուր պարտի հեղուլ:

Իսկ զսրբիչն ձեռաց՝ եթէ գուցէ այլ ծառայ, նմա է անկ մատուցանել 'ի ձեռս լուացելոյն. ապա թէ չիցէ, նա՝ որ զջուրն եհեղ, թողեալ 'ի ձեռաց զանօթ ջրոյն, երկոքումբք ձեռօք մատուսցէ զսրբիչն, զոր եւ պարտի ունիլ 'ի պատրաստի, եդեալ 'ի վերայ ձախու բազկին: Եւ եւս՝ եթէ բազումք իցեն, որք լուանան զձեռս, պարտ է ըստ այնմ յառաջագոյն պատրաստել քանի մի սրբիչս,

զի

զի 'ի կարի տամկանալ միոյն, մատուսցի միւսն ։ Իսկ առ մեծամեծս վայելուչ քաղաքավարութիւն համարի իւրաքանչիւր անձանց առանձին սրբիչ մատուցանել 'ի ձեռս ։

## ԳԼՈՒԽ. ԺԶ։

### Կանոնք յաղագս տերանց ։

Յետ աւանդելոյ կանոնս յաղագս ծառայից 'ի դէպ է կարգել ինչ ինչ և վասն տերանց՝ առ 'ի գիտել նոցա, թէ զի՞րդ պարտ իցէ վարիլ ընդ ծառայս զի ո՛չ փոքր է դժուարութիւն 'ի բարւոք հրամայելն՝ քան 'ի բարւոք հնազանդիլն. մանաւանդ թէ՝ ըստ ասելոյ ուրումն իմաստնոյ. առ բարւոք և վայելուչ սպասաւորելոյ ծառային, պարտ է տեառն գիտել զըստպատշաճն հրամայելն. զի երկոքին սոքա յարակից են միմեանց ։

I. Պարտ է տերանց՝ 'ի վարիլն ընդ ծառայս, խորշիլ յերկուց ներհակաց ծայրից. այսինքն 'ի կարի ընտանութենէ, և 'ի սաստիկ խստութենէ ։ Քանզի են ոմանք 'ի տերանց՝ այնպէս քաղցրաբարոյք և մարդասէրք. որոց մոռացեալ զվիճակ և զպատիւ իւրեանց, նուաստանան յոյժ. և այնպիսի օրինակաւ վարին ընդ ծառայս, որպէս եթէ լինէին համավիճակ ընդ նոսա. մինչև խաղս խաղալ և կատակս առնել, որով և լինին անարգանելի յաչս ծառայից. զի ըստ ասից իմաստնոյ

ւնոյ: Կարի ընտանութին ծնանի զտաղտկութի. և տաղտկութի զարհամարհութի. որում՝ի վախճանի զհետ գայ ատելութի: Այսմ հակառակ՝ գտանին և այլք որք այնպիսի սաստկութբ և իշխանութբ վարին ը ծառայս. որք թէ իցեն արծաթագին գերիքնց. կամ բեռնակիր անասունք. զի բնաւ իսկ չախորժեն խօսիլ և հայիլ ը նոսա քաղցրութբ. այլ հանապազ անէծք և յիշոյատութի. են՝ի բերանս նոցին. որ և համարի անգութ բռնաւորութի քան ազնուականութիւն:

2. Պարտ է տերանց գիտակ լինել որպիսութեան բարուց և բնութե ծառային, զոր վարեն՝ի սպասաւորութի. զի ը այնմ կարասցեն կարգել զնա՝ի պատշաճական գործս ծառայութե. զոր և պարտ է սահմանել և որոշել, այլ առանց բռնաւորելոյ աւելի քան զչափն և զկարողութի ծառային. զի մի անխոհեմութբ պատճառ տայցի նմա տրտնջելոյ և դանդաղելոյ: Միանգամայն օրէն է ընտրութի առնել՝ի մէջ ծառայից և գործոց. զոր հրամայեն նց. զի չէ արժան. դնել զայնպիսի գործ այնպիսում ծառայի. որ չկարէ՝ի գլուխ տանիլ. այլ յանձնելի է այլում առաւել յարմարագունի. զի այս կարգի յօգուտ տն. և՝ի հաստատիմ ընտանութի ծառայի: Այն սխալին նոքա. որք զնուաստ պաշտօնս տան գործել ազնուական և աչալուրջ ծառայից. իսկ զընտիր գործս ծառայութե՝ նուաստագունից և անվարժից:

3. Պարտ է տերանց ուշադիր լինել. զի մի յանձն

եսցեն

եայեն այլում զայն գործ. զոր միանգամ յանձնեալ իցեն միտ ծառայի հանապազորդ գործել. բայց եթէ յորժամ չիցէ նա ձեռնհաս գործելոյ սակս այլոց գործառնութեց և անպարապ լինելոյ. զի ան- տի բազում անգամ տկլոր է ծագիլ խռովութ՟ ՚ի մէջ ծառայից. և թշնամութ՟ առ տեարս իւրեանց։ Եւ ևս պարտ է խոհեմութ՟ միտ դնել և զգուշա- նալ. զի մի առաւել ք՟ զարժանն տաղտկութիւն տայցեն ծառայից իւրեանց ՚ի գործ սպասաւորութ՟. զի թէպէտ և վարձուք ծառայեն. բայց և յայն պարտ է հայիլ. զի մի վիճակ նոցա առաւելա- ցին քան զվարձսն։ Եւ չէ օրէն առանց ընտրողու- թ՟ զբազում գործս միանգամայն դնել ՚ի վ՟ր նոցա առ ՚ի կատարել զամ՟ն փութով. զի դժուարին է տանիլ այնմ համբերութ՟. և թէ արասցեն ևս՝ ան հնար է բարւոք գործել զամ՟ն։

4. Չէ պարտ տերանց վ՟ն դոյզն և չնչին յանցա- նորութ՟ ծառայից. զոր ակամայ և վրիպանօք իցեն գործեալ. սաստիկս նեղատել և կշտամբել ըզ- նոսա. զի նոքա տան առիթ արհամարհելոյ զան- ձինս իւրեանց։ Այլ թէ ՚ի ծանունս յանցանիցեն. և հարկն ստիպեսցէ խրատել և յանդիմանել. չէ պարտ առնել զայն հրապարակաւ առաջի բազմու- թ՟ կամ թշնամանօք. անարգանօք և գանակոծ ա- ռնելով. կամ վնաս ինչ հասուցանելով. և կամ հատանելով զվարձս աշխատութ՟ նոցին։ Այլ պիտոյ է սիրով և քաղցրութ՟ ազդել. և ՚ի ծածուկ յանդիմանել. որով յաւէտ ազդու լինին բանքն ՚ի

լսե

լսելիս նոցա. քան զա͞մ խոստումն և սաստկութիւն նախատական խօսից և հարուածոց։ Զի ը͞ս ասելոյ ս͞բյն Ներսիսի Շնորհալւոյ. Հակառակասէր է բնութիւն մարդկան. զոր ոչ այնքան բռնութիւն. որչափ խոնարհութիւն և սէրն ձգէ 'ի հրամայողին կատարումն. Թղ͞թ. առ Կոյսս։ Այս կանոն՝ թէպէտև առ ոմանս յազնուականաց ծաղրալուր թուի. սակս անփորձ լինելոյ ն͞ց այսպիսի վարմանց. այլ որք միանգամ զայսր զ չափ առեալ իցեն՝ վկայեն ասացելոյս թէ քանի՜ օգտակար են ծառայից. և վայելչական տերանց այս եղանակ վարելոյ։

5. Պարտ է տերանց հայրաբար կարեկից լինիլ 'ի տկարութիւնս ծառայից իւրեանց. զի եթէ հիւանդասցին կամ 'ի վիշտս ինչ անկցին. չէ պարտ թողուլ անխնամ. այլ հոգտանիլ և դարմանել արժան է. ցուցանելով առ նոսա զգութ բնական և քրիստոնէական սիրոյ՝ մինչև առողջասցին կամ ազատեսցին 'ի վշտաց իւրեանց. նմանելով յայսմ գթած հարիւրապետին. որ անձամբ իւրով եկեալ առ Յ͞ս աղաչէր վ͞ս հիւանդ ծառային. ը͞ս որում գրի յաւետարանի. զորոյ և զբժշկութիւնն առեալ թախանձանօք ընկալաւ 'ի ք͞սէ։ ( Ղուկ. 7. 2։ )

6. Պարտ է տերանց ճանաչել զաշխատութիւնս ծառայից իւրեանց, և ը͞ս այնմ սիրով հայիլ 'ի նոսա օր. ը͞ս օրէ տալով ն͞ց զպատշաճական կերակուրն 'ի պահպանութիւն կենաց, վարելով ը͞ն նոսա իբրև ընդ համաբնութենակիցս. և մի ո͞ք անմանոյ խնամարկել ն͞ց. ջամբելով զյուղն 'ի կերակրոց

րոց և զվատթարն յըմպելեաց․ որով և տալ նց առիթս անհաւատարիմ լինելոյ․ վնյ պարտ է զմըտաւ ածել զայն բան իմաստնոյ, թէ խաղաղութ և հանգստութ տերանց՝ է 'ի բարեկենդանութե ծառայից․ քանզի գոհ և հաճեալ պահելն զծառայս, է խաղաղ և հանգիստ պահել զանձինս իւրեանց։ Թող զայն․ զի ծառայք համարեալ են քարոզ լաւութե և վատութե տն իւրեանց․ և կարեն գովել և պարսաւել զնոսա առաջի այլոց, ըստ ընդունելութեն, զոր ընդունին 'ի նոցանէ։

Այսչափ ինչ կամիմք առ տեառս յաղագս ուղիղ և ըստ կարգի վարելոյ նոցա ընդ ծառայս․ իսկ զորս վերաբերին առ նոյին վիճակ և յազնուական բընութե և 'ի կենակցութ, մարթ է ուսանիլ 'ի նախակարգեալ կանոնաց քաղաքավարութե։

## ԳԼՈՒԽ. ԺԵ։

### Առանձին կանոնադրութիւնք 'ի կենցաղավարութե ըստ այլևայլ վիճակի մարդկան։

Զի՞նչ պարտք իցէ Աշխարհականաց ծնողաց։

ռաջին և գլխաւոր պարտք, զոր ունին մարդիկ յաշխարհի աստ՝ զկնի այ, է առ ծնողս իւրեանց զորս պարտին սիրել, պատուել և մեծարել։ Եւ առ այս ստիպին՝ ոչ միայն 'ի բնութե, որ թելադրէ զնոյն, այլև յաստուածային օրինաց․ յասելն այ 'ի տասնաբանեան պատուիրանին

երանան. եթէ Պատուեա զհայր քո և զմայր քո, զի քեզ բարի լինիցի. Ելից 20. 12։ Արդ զի ծնօղք լինելով պատճառ կենաց զաւակացն, են 'ի վիճակ այնպիսի, որով արժանաւոր համարին մեծ պատուոյ և յարգութեան։

Թող զայն. զի 'ի խնամել և 'ի սնուցանել զորդիսն, ծանր. վիշտս և տառապագին աշխատութեա կրեն վս̃ նոցա. զոր դիտելով մարդոյ՝ մանաւանդ մանկանց պարտին այնպէս սիրել և պատուել զծնողս իւրեանց, մինչև յետ այ̃ չիցէ նոցա առաւել յարգոյ ինչ և պատուական քան զծնողսն։

Երկրորդ՝ պարտ է որդւոյ երախտագէտ լինել՝ առ շնորհս բարերարութեանց, զորս ընկալեալ են 'ի ծնողաց. և առանց մոռանալոյ զայնս՝ ջանալ և ջգնիլ առ 'ի հատուցանել մս̃ կարի զփոխարէնն այնոցիկ երախտեաց, որ լինի՝ պատուելով, ծառայելով, 'ի թիկունս հասանելով կարօտութեան նոցա. և զգուշանալով յամէն, որովք հնար է նոցա վշտանալ. Յիշելով զխրատ իմաստնոյն Թաղէսի. Զոր ինչ առնես ծնողացդ, զնոյն ակնկալցիս ընդունել յորդւոցդ, յորժամ ծերասցիս։ Երրորդ՝ պա́րտ է որդւոյ ունել մտադիւր հպատակութիւն առ նոսա և յօժարակամ հնազանդութիւն. զի որովհետև ծնօղք պարտաւորեալ են 'ի բարւոք խնամս սնուցեան զաւակաց, չէ՛ օրէն ոչ̃ դիմադարձ գտանիլ առ կառավարութեան ծնողացն, որ կարգի յօգուտ նոցին։ Այլ որոյ պա́րտ է որդւոյ յօժարամիտ անսալ խրատուց և ազդարարութեանց նոցա. և սիրով կատարել, որ

որ ինչ՝ ի նոցանէ հրամայի. միանգամայն օրէն է խոնարհութեան եւ անմռունչ համբերել պատժոց եւ յանդիմանութեանց, զորս տայցեն առ օգուտ եւ յուղղութիւն զաւակաց։ Յիշելով զխրատ սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ։ Աննախանձ կամս ունին ծնօղք առ մանկունսն, եւ կատարեալ սէր. յորմէ եւ յառաջ գայ ուղիղ խրատն եւ օգտակարն եւ ՝ի դէպ է սոցա (այսինքն զաւակաց։) հնազանդիլն. իսկ նոցին (այսինքն ծնողաց) վայելուչ օրինադրելն։ Մեկն՝՝ Առակաց. Գլ. I։

---

Ընդ եղբարս եւ ընդ ազգականս։

Պարտ է եղբարց սիրել զմիմեանս ճշմարիտ եւ անկեղծ սիրով. եւ փութալ ժամանել միմեանց յօգնութիւն ՝ի կարօտութիւն եւ յայլ ամենայն պէտս ձեռնտուութեան. փափաքելով առնել նոցա զայն ամենայն բարիս, զոր ինչ միանգամ ցանկայ ոք անձին իւրում, յիշելով զպատուիրանն Աստուծոյ. եթէ Սիրեսցես զընկեր քո, իբրեւ զանձն քո. Ղեւտ. 19. 18։ Քանզի եւ նախախնամութիւն Աստուծոյ տայ միոյ որովայնի բազում ծնունդս, զի ՝ի վշտակցութիւն իւրերաց անքակ լինիցին. որպէս ասէ սուրբն Ներսէս Լամբրոնացի. Մեկն առակաց. 17. 17։ Թող զայն, զի զոր ինչ բարիս ոք առնէ եղբօրն, անձին իւրում առնէ. քանզի նովաւ ստանայ զխրատ եղբօրն եւ պարտաւոր կացուցանէ զնա ՝ի փոխարինել այնմ. Այսու սիրով պարտ է նոցա՝ յամենայնի պահել զմիաբանութիւն. խաղաղութեամբ բնակելով առ միմեանս

առանց

տուանց նախանձու և թշնամութեան, իւրաքանչիւրոք զբարիս եղբօրն՝ իւր համարելով. որով լինին մի իմաստնոյն բանի. Եղբայր յեղբօրէ օգնեալ, իբրև քաղաք ամուր : Առակ. Գլ. 18. 19 : Եւ եթէ դիպեսցի ևս իւիք իրօք վշտանալ յիրերաց. արժան է քաղցրութեամբ սիրոյ ներողամիտ լինել. քանզի չիք ինչ յաշխարհի առաւել վատթար և գայթակղական քան զատելութիւն և զթշնամութիւն եղբարց : Այլ ըստ խրատու առաքելոյն. Լերուք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք. շնորհել միմեանց, որպէս և Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ : Եփես. Գլ. 4. 32 :

Զայս օրինակ սէր և զմիաբանութիւն պարտ է ունել և ընդ ամենայն ազգականս և արենակիցս :

---

Ընդ դաստիարակս :

Զոր ինչ միանգամ պարտական են որդիք առ ծնողս, զնոյն պարտին և առ դաստիարակս և վարժապետս իւրեանց, որք տքնին և աշխատին ի կրթել և յուսուցանել զնոսա. մանաւանդ զի՝ ըստ ասելոյ Արիստոտելի, Առաւել երախտապարտեմք առ դաստիարակս մեր՝ քան առ ծնողս. զի սոքա տան մեզ զլինելն, իսկ նոքա՝ զբարւոք լինելն : Այլ պարտ է ունել առ նոսա զճշմարիտ սէր, և զերախտագիտութիւն ընդ միամիտ հնազանդութեամբ և մեծարանաց. ջանալով ըստ կարի փոխարինել վաստակոյն. զոր կրեցին վասն նոցա :

Ընդ

Ընդ Երախտաւորս։

Առ նոսա ամենեսին, որք իւիք իրօք բարերարեալ իցեն ումեք, նոյնպէս պարտ է ունիլ զսէր և զերախտագիտութիւն. անմոռաց պահելով 'ի մտի զյիշատակ բարերարութեն նոցա. միանգամայն և ըստ առթին բերելոյ՝ և ըստ չափու ձեռնհասութեն ջանալ և փութալ առ 'ի վճար փոխարէն հատուցման. որ լինի շնորհակալութբ, և բարիս խօսելով, կամ ծառայութբ և ընծայատուութբ. քանզի չիք առաւել պժգալի ախտ առ մարդիկ, քան զապերախտութիւն։ Այսպէս պարտ է վարիլ ըստ խրատու իմաստնոյն Կիկռոնի, որ ասէ. Եթէ բարերարես ումեք՝ մի բնաւ յիշատակեր. իսկ եթէ բարիս ընկալցիս՝ յիշեա հանապազ։

---

Ընդ Երիցագոյնս, և ընդ Իշխանաւորս։

Ընդ նոսա՝ որք երէց են հասակաւ՝ կամ վիճակաւ՝ կամ պատուով, պարտ է վարիլ ամենայն յարգութեամբ, և կալ առաջի նոցա պարկեշտութբ և խօսիլ խոնարհութբ և հպատակութբ։ Յիշելով զխրատ իմաստնոյն Կիկերոնի՝ յասելն. Պարտ է մանկանց և երիտասարդաց ակնածութիւն ունիլ առ ծերս, մանաւանդ առ զարգացեալսն 'ի նոցանէ իմաստութբ և խոհականութբ, և վարիլ ըստ կարգի օրինադրութեն նց. և նոքօք ուղղել զընթացս կենաց իւրեանց. զի անհըմտութի կանխածաղիկ հասակի նոցա, կրթեսցի և ու-

ուղղեցոյց խոհականութեամբ և իմաստութեամբ ծերոց.

Յառակս Սողոմ." Գիր. I։

Զնոյն պատիւ ակնածութեան հանդերձ հպատակու-
թեամբ պարտ է ցուցանել և առ այնոսիկ, որք իշխա-
նութեամբ վերադոյնք իցեն, և ունիցին իրաւունս հրա-
մայելոյ. որպէս են՝ առաջնորդք, իշխանք և դատա-
ւորք. յոյր սակս իսկ օրէնք է մտադիւր սիրով հպա-
տակութիւն ցուցանել և կատարել զամենայն հրամանս նոցա։

Ընդ Բարեկամս։

Առաջին

Նախ քան զաւանդելըն կանոնս կենակցութեան ընդ
բարեկամս, ՚ի դէպ է ասել ինչ յաղագս
հանգամանաց ճշմարիտ բարեկամի. և թէ ընդ որ-
պիսումբք արժան իցէ առնել բարեկամութիւն։
Արդ՝ ոչ յայտ է ամենուն, ճշմարիտ և ընտանի բա-
րեկամութիւն լինի միայն ՚ի բարեսէր անձինս. ընդ որս
և եթ հնար է ունել համարձակ կենցաղավարու-
թիւն. վասն և չէ պարտ անխորշէր և անխորհուրդ-
բարեկամանալ ընդ ում և իցէ. յիշելով զխրատ իմաս-
տնոյն Սողոմոնի. Մի փաղփաղակի ստացցիս բարե-
կամս, և զորս ստացար, մի թողցես փութով։
Քանզի ոչ լաւութիւն բարեկամաց առաւել է քան
զամենայն մեծութիւն աշխարհի, նոյնպէս և ընդ հակա-
ռակն անարգ և վատթար բարեկամն չար է քան զամենայն
ատելի թշնամիս։ Զայսոսիկ գիտելով, պարտ է
նախ՝ ընդ այնպիսի անձանց և եթ ստանալ զբա-
րեկամութիւն, որք իցեն բարեպաշտք և երկիւղած

յԱյ

յոյժ, համեստք և ազնուականք. զի ընտանի կենակցութեան սեփական գոլով հաւատարմութեան բարուց, լաւութեան կամ վատութեան միմեանց այնպէս փոխանցին յիրեարս մինչև առ իմաստունս բանական նշան համարիլ ՚ի բարեկամաց ուրուք՝ ճանաչել զորպիսութիւն նորա. վասն որոյ և նախնին ասած է հասարակաց, եթէ Ասա դու ինձ ընդ որում կենակցիս, և ես ասացից քեզ, թէ ով ոք իցես։ Սակայն չէ օրէն ամենևին բարեկամութիւն առնել ընդ այնպիսիս, որոց անունն վատահամբաւեալ իցէ. կամ որք ծառայեն ախտի և մոլութեան իմիք. և կարեն թելադրիլ լինել մարդոյ ՚ի չարիս։

2. Երկրորդ՝ պարտ է զգուշանալ ՚ի բարեկամութենէ անխոհեմ և անհմուտ անձանց, որք յոլովակի անմտադրութեամբ և առանց ինչ չարութեան կարեն լինել մատնիչ թագուն խորհրդոյ, և պատճառ բազմապատիկ վնասուց։ Այս պարտ է զայնպիսիս ընտրել ՚ի բարեկամս, որք ո՛չ միայն գիտիցեն պահել զգաղտնիս, այլ և ՚ի դիպուածս կարօտութեան կարասցեն տալ բարի խորհուրդս, և հասանիլ ՚ի թիկունս։ Յայս սակս յիրաւի ասաց, որ ասացն, թէ ընտրելի է իմաստուն թշնամին՝ քան զանիմաստ բարեկամ։

3. Երրորդ՝ պարտ է խորշիլ յանհանդարտ և ՚ի բարկասիրտ անձանց. ընդ որս չէ հնար բարեկամութեան տևել ընդ երկար. այլ խնդրելի են այնպիսիք որք կարասցեն տանիլ պակասութեանց ընկերին, և զի լիցին քաղցր և հեզ։ Միանգամայն զգուշալի

է

է ՚ի շահասէր անձանց, որք չհային յաւելուլ, բայց եթէ յառանձնական օգուտ իւրեանց. այլ ընտրելի են նոքա, որք փափաքին օգտի բարեկամաց, և յառիթս առիթս գիտեն նպաստել նոցա։ Ըստ այսոցիկ հանգամանաց ՚ի գտանել ուրուք զբարեկամ, կարօղ է վստահութեամբ վարիլ ընդ նմա՝ իբր ընդ մտերիմ ընտանւոյ և սրտակցի. զի այնպիսի բարեկամն որպէս ասից Արիստոտելի համարի լինիլ մի հոգի յերկուս անձինս բնակեալ։

Կանոնք։

Առաջին պարտք, զոր ունի ոք առ բարեկամ իւր այն է, զի որպէս կարի և ըստ ձեռնհաս գոլոյ արասցէ նմա բարիս. ՚ի թիկունս հասանելով ՚ի պէտս կարօտութեան նորա. ՚ի տարակուսանս և ՚ի պաշարմունս մտային խորհրդատու լինելով, և զգուշացուցանելով զնա յայնպիսի իրաց, որք կարեն վնասել բարեկամին։ Միանգամայն և յանձնական պակասութիւնս նորին բարի խրատուք և ընտանի սիրով ջանալ ուղղել զնա. զի որպէս ասից Կիկերոնի, Բարեկամութիւն տուեալ է ՚ի բնութենէ առ ՚ի օգնական լինել միմեանց յառաքինութիւնս. և ոչ սատար ՚ի մոլութիւնս։

Երկրորդ՝ պարտէ վարիլ ընդ բարեկամին ամ(ենայն) հաւատարմութեամբ. և խոհեմութեամբ. զգուշանալով ամենևին՝ զի մի յայտնեսցէ այլում զգաղտնիս նո(րա). կամ մատնիչ լինիցի նմա՝ չարութեամբ և կամ անմտածութեամբ։ Յոր հայի և բարոյական խրատ իմաստնոյն Թա

ղէսի

ղէտս, յաւէլն. Մի՛ ելցէ ինչ բան 'ի բերանոյդ, որ զքեզ կասկածելի արասցէ յաչս մտերիմ սիրելւոյդ.

Երրորդ՝ պարտ է տանիլ պակասութեանց բարեկամին. զի զորօրինակ ամենայն ոք ունի իւր անձնական պակասութիւն ինչ, և կամի՝ զի այլք համբերեսցեն այնմ. նոյնպէս և ինքն պարտի համբերել պակասութեանց այլոց: Բայց պարտ է և որոշումն առնել 'ի մէջ պակասութեանց. զի եթէ իցեն ախտաւոր մոլութիւնք ինչ, կամ ընդդէմ համեստութեան. կամ յառաջ եկեալ 'ի չարութենէ և 'ի թիւր սկզբանց. յայնժամ պարտ է զատանիլ 'ի բարեկամութենէ նոյին. զի չէ՛ օրէն ընտանութիւն առնել ընդ այնպիսիս, յորոց ծագի վնաս հոգևոր. յիշելով զխրատ տեառն: Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա, և ընկեա 'ի քէն. Մտթ. Գլ. 5. 29: Իսկ եթէ այն պակասութիւնք իցեն յառաջ եկեալ 'ի թեթևամտութենէ կամ յեռանդնոտ բարուց, և զի իցեն վիշտ բարեկամին և եթ. յայնժամ պարտ է սիրով ազդ առնել նմա, և խրատել յուղղութիւն: Ապա թէ և այնու ո՛չ ուղղեսցին. սակայն՝ թէ կայցէ 'ի նմա կատարելութիւն յանկաւոր բարեկամութեան, արժան է համբերութեամբ տանիլ նեղութեան նորա, և ո՛չ որոշիլ. քանզի դժուարին է գտանել զոք 'ի մարդիկ, որ իցէ ամենայնիւ կատարեալ:

Ուստի քեզ օրինակ զմեղուն, զոր չատէ ոք վասն խայթոցին, այլ սիրէ վասն քաղցրութեան գործոյն. նոյնպէս զբարեկամն չէ՛ օրէն ատել վասն դոյզն պակասութեան. այլ սիրելի է վասն մտերիմ ընտանութեան:

# ՅԱՒԵԼՈՒԱԾ։

## Յաղագս քաղաքավարութեն ընդ Այ։

Զվայելչական վարմունս մարդկային կենակցութեց անպէտ և անօգուտ վարկանիմք, մանաւանդ թէ՝ և պարսաւելի իսկ, եթէ չիցէ զօդեալ ընդ Ածային ընտիր քաղաքավարութեն, որ յաւէտ պիտանին է մարդոյս, յոր և կարգի գլխաւոր փախճան առաջադրեալ գործոյս։ Վասնորոյ և մեք յեռանեալ և անդուլնելի լինեմք եթէ զմարդկան ինչ միտս և եթ կամելով հաճել 'ի վայելուչ և 'ի կարևոր կրթութէ սորի ընդ Այ քաղաքավարութեն՝ անմասն առնեմք զընթերցօղս։ Զի եթէ պարտ համարիմք զվայելուչ ուսումն ընդ մարդկան կենակցութեն, քանիօ՞ն առաւել պարտ և արժան է զնոյն քարոզել յաղագս Ածային կենցաղավարութեն, քան զոր չիք պիտանի և ազնուագոյն 'ի կեանս մարդկան. զի և ըստ բանից առաքելոյն, Մարմնոյ կրթութի՝ առ սակաւ ինչ օգտակար է. իսկ Ածպաշտութի առ ամ ինչ օգտակար է. և զաւետիս կենաց ունի. զարդիս և զհանդերձելոյն. I. Տիմ. 4. 8։ Նմին իրի յետ աւանդելոյ կանոնս 'ի կենցաղավարութի ընդ մարդկան, պատշաճ է կարգել ինչ և յաղագս քաղաքավարութեն ընդ Այ. զորմէ կամելով խօսիլ սակաւուք, տեսցուք նախ՝ թէ զինչ իցէ այն, և որպէս լինիցի։

Արդ՝ քաղաքավարութին ընդ Այ ո՞չ այլ ինչ է, բայց

եթէ

եթէ ցանկալի կենակցութիւն մարդոյ ընդ Աստուծոյ, որովք իւր ընդ հարազատութեան և ընդ միակ սիրելւոյ վարի ընդ արարչին իւրում. և կոչի սա տիրապէս Աստուածպաշտութիւն. զի լինի վայելչական պաշտամամբ և արժանաւոր ծառայութեամբ, զոր առնէ մարդն Աստուծոյ: Եւ թէպէտ այս կենակցութիւն կարէ լինել բազմապատիկ օրինակաւ ըստ պէսպէս և զանազան գործոց բարեաց և հոգևորական կրթութեանց, որք կարգին առ Աստուած. այլ մեք աստանօր խօսեսցուք՚ի վերայ երից միայն, յորոց մարթին բարեպաշտք քաղել անձանց պտուղ հոգևորական: Առաջինն է աղօթքն, որով մարդ խօսակից լինի ընդ Աստուծոյ: Երկրորդն է ունկնդրութիւն Աստուածային բանից, որով Աստուած իւր խօսակից լինի ընդ մարդոյ: Երրորդն է փափաք Աստուածպաշտութեան և առաքինական գործոց. որովք Աստուած պաշտի և փառաւորի՚ի մարդկանէ: Զորս մի առ մի բացայայտեսցուք յառաջիկայ գլուխսդ. աւանդելով կանոնս պիտանիս, թէ զի՞արդ պարտ իցէ քրիստոնէին՚ի գործ դնել զայնոսիկ:

## Գլուխ առաջին:

### Թէ որպէս արժան իցէ կալ յաղօթս առ Աստուած:

Աղօթքն է խօսակցութիւն ընդ Աստուծոյ. որով խնդրին՚ի նմանէ կարևորքն առ ծառայութիւն նորա, և առ փրկութիւն հոգւոյ մերոյ Արդ՝ որպէս զի բարւոք և ըստ կարգի լինիցի այս խօսակցութիւն ընդ Աստուծոյ, պարտ է մարդոյ յերրես իւրա

առաւ

առաւելապէս միտ դնել. նախ՝ ի բանս աղօթից. երկրորդ՝ յերկնային առնելոյն. երրորդ՝ ի ժամանակին և ՚ի տեղին, ուր արժան իցէ աղօթել:

1. Բանքն աղօթից յայնժամ համարին բարւոք և հաճոյ այ, յորժամ խնդրէ ոք զհարկաւորս առ ծառայութիւն այ և առ փրկութիւն իւր: Նմին իրի գլխաւոր վախճան և նպատակ աղօթից քրիստոնէին պարտի լինել խնդրելն նախ զփառս այ, և ապա զկատարումն կամաց նորա՝ ի մեզ, որ է փրկութիւն մեր. ըստ որում և քրիստոս. ուսոյց մաղթել՝ ի տէրունական աղօթսն, զոր ամենայն աշակերտաց իւրոց: Արդ այս վախճան խնդրելի են յայ շնորհք. առաքինութիւնք և այլ հոգևոր բարիք, որք կարդին և ձեռնտու լինին առ բարւոք ծառայութիւն այ, և ՚ի ստանալ զփրկութիւն հոգւոյ: Իսկ արտաքին և մարմնաւոր բարիք խնդրելի են սոսկապէս ըստ այնմ ըստ որում կարեն նպաստել գլխաւոր վախճանին մերոյ. այսինքն. է՝ փառաց այ և փրկութեան հոգւոյ մերոյ. ըստ բանին քրիստոսի, թէ խնդրեցէք նախ զարքայութիւն այ և զարդարութիւն նորա, և այդ ամ յաւելցի ձեզ: Մատ. 6. 33: Յայս սակս թիւր գործեն նոքա, որք յաղօթս խնդրեն յայ զմեծութիւն, զինչս, զստացուածս, զյաջողութիւն գործոց, զառողջութիւն կենաց և զայլ մարմնաւոր բարիս ևեթ, որք յոլով վասի արգելք են և խափանարարք փրկութեան հոգւոյ վխանորոյ և անընդունելիք. առ որս է և բան երանելոյն յակոբայ, յասելն. թէ խնդրէք և ոչ առնուք. վասն զի չարաչար խնդրէք: (4. 3:)

2.

2. Իսկ եղանակ բարւոք աղօթելոյ՝ այն է. զի յորժ
ժամ հանդերձեալ իցէ ոք աղօթել. պարտի նախ
ճանաչելով զկարօտութի և զտկարութի իւր, խո
նարհիլ և տարածել զանձն առաջի այ՟, որ տեսօղ
է այն և քննօղ գաղտնեաց. և ասել ընդ մարգա
րէին. Տէր առաջի քո է ամ՟ ցանկութի իմ, և հեծու
թիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ: Սաղմ. 37. Միան
գամայն պարտի խնդրել զլոյս և զօգնութի շնորհաց
հոգւոյն սբյ՟, որոյ է ուսուցանել մարդոյ զբանս
աղօթից. որով կարասցէ աղօթել ոպ՟ արժանն է:
Եւ՟ ևս ՚ի կամիլն աղօթել՝ պարտ է մարդոյ թօ-
թափել ՚ի մտաց զամ՟ խորհուրդս արտաքին զբաղ
մանց. ՚ի բաց հրաժարեցուցանելով զմիտն յամ՟
երկրաւոր և աշխարհային հոգոց. և որպէս թէ
փակելով զդուռն սրտի իւրոյ ընդ դէմ այլ. որ
ոչ թողու զմարդ խաղալական մտօք կալ յաղօթս
առ ած. զի ոպ՟ ասէ շնորհալին. Անկար է մինչ
դեռ միտք մեր յաշխարհական պատաղմունք փա
րակին՝ աղօթել ոպ՟ պարտն է:
Իսկ յաղօթելն անդ պարտ է մտադրութի ունիլ ՚ի
բանս աղօթից. զի զոր ինչ ասէ ոք բերանով զնոյն
պարտի խնդրել և սրտիւ. քանզի ած՝ որ զբանսն
լսէ, տեսանէ և զսիրտն. նմին իրի պիտոյ է բաղ
ձանաց սրտին համաձայն լինիլ բանից բերանոյն.
ոպ՟ զի տացէ զխնդրեալսն ՚ի նմանէ: Եւ առ այս
օգնէ յոյժ, զի մարդ այնպիսի լեզուաւ և շարա-
դրութբ բանից աղօթեսցէ. զոր կարասցէ հասկանալ
Քանզի թէպէտ և ած լսէ և իմանայ զամ՟ բանս
աղօթից

աղօթից, այլ պիտոյ է և աղօթողին իմանալ՝ առ-
'ի սրտի մտօք առնել զխնդրուածս իւր։

Բայց 'ի բանից աղօթիցն պարտ է միտ դնել արտաքին ձևոյ և դրից մարմնոյն. զի իցէ վայելչապէս 'ի ծունկս անկեալ, համբերձ երկիւղիւ և ամ՟ համեստութ՟ առանց յենլոյ յիր ինչ կամ հայելոյ այսր և անդր, որ լինի պատճառ ցնդելոյ մտացն, և առիթ գաղջութ՟ կատարելոյ զաղօթսն։ Եթէ աղօթէ ոք 'ի մէջ բազմութեան կամ յեկեղեցւոջ պարտի զգուշանալ յարտաքին այլատարազ գործողութեց և յարարողութեց ինչ որք թէպէտ և յառաջ գան 'ի ջերմեռանդութէ, այլ կարեն լինել տեսողաց պատճառ դատողութե՟ և համարելոյ կեղծաւորութի. որպէս է մեծաձայն հառաչել. կամ ձայնիւ բարբառոյ ասել զբանս աղօթից հարկանել ուժգին զկուրծս. և այլ այսպիսիք. որով և յոլովակի անհանգիստ լինին մերձակայքն։ Այլ պարտ է մարդոյ ըստ խրատուն քրիստոսի՝ մտանել 'ի սենեակ սրտի իւրոյ, և անդ 'ի ծածուկ և լռելեայն աղօթել, ո՛չ զի ա՛ծ միայն տեսցէ զհեծութի սրտի նորա, և ո՛չ մարդ։ Միանգամայն պարտ է յաղօթս ունել անձանձրոյթ յարատևութիւն՝ ը՟ բանին քրիստոսի թէ Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս, և մի ձանձրանալ. Ղուկ. 18. 1։ Ունելով 'ի սրտի զջերմեռանդն սէր և զճշմարիտ յոյս ը՟ ունելոյ 'ի նմ՟ է զորինչ և խնդրէ. զի ըստ ասելոյ սրբոյն ներսէսի շնորհալւոյ. Պարգևատուն բարեաց ա՛ծ, յորժամ տեսանէ զջերմեռանդն հայցո-

ւածս

ճանս խնդրողին․ առաւել առատապէս շնորհէ զխնդրելին։ Այլ զայս յարատեւութի ոչ այնպէս պարտ է իմանալ, որպէս թէ զօրն ողջոյն յաղօթս պարապեսցի ոք․ այլ զի մի հեղգասցի յաւուրն սահմանեալ ժամանակօք ինչ առնել աղօթս առ ած։ Իսկ եթէ յորում ժամու առաւել պատշաճ իցէ աղօթել, ասասցուք։

3. Պատշաճական ժամանակ աղօթից համարի այն, յորում առաւելապէս պարտական է մարդ գոհանալ զայ և խնդրել զօգնութի շնորհաց նր։ Արդ՝ այսպիսի ժամանակ է նախ՝ առաւօտն, յորժամ զարթնու ոք 'ի քնոյ․ յորում և պարտի գոհանալ զարարչէն, որ պահեաց զնա 'ի գիշերին, և հասոյց 'ի ժամ առաւօտուն․ միանգամայն և խնդրելի են շնորհքն այ, որով կարասցէ մարդ առանց մեղաց անցուցանել զօրն զայն։ (ըստ որում աւանդեցաք զայս և 'ի նախընթացս գիրս քաղաքավարութե, գլուխ

I4. Երկրորդ՝ ժամանակ աղօթից համարի օր հասարակ․ յորում պարտի մարդ նորոգել զխնդրուածս իւր առ ած․ հայցելով ընդ մարգարէին․ զի պահեսցէ զնա 'ի գայթակղութե և յորոգայթից գիշերին՝ որ 'ի հասարակ աւուր․ որպ զի և զմնացեալ ժամ տուընջեան յաջողութբ և բարի գործովք կատարեսցէ։ Երրորդ՝ յարմար ժամ աղօթից է գիշերն կամ երեկոյն․ յորժամ հանդերձեալ է ոք ննջել․ որով և լռանայ բան սաղմոսին․ Թէ Ես առ ած կարդացի՝ և տր լուաւ ինձ․ յերեկոյս 'ի վաղորդայն և 'ի հասարակ աւուր։ Այլ պարտի մարդ

'ի

'ի հանգստանալն յերեկոյն քննել զխիղճ մտաց իւրոյ, զի եթէ յայնմ աւուր մարդկային տկարութբ ինչ անցեալ իցէ զպատուիրանօքն այ, և անկեալ 'ի մեղս՝ զղջասցի, յաւելով 'ի վր գործեալ մեղացն, և աղաչելով զած, զի թողցէ նմա զյանցանսն, և տացէ շնորհս այլ ոչ ևս մեղանչելոյ: Այս խնդրելի է 'ի բարեգութ մարդասիրութեն այ. զի և զհանգիստ քնոյ գիշերոյն խաղաղութբ տացէ անցուցանել: Ջի ա բանից մէջն ներսէսի լամբրոնացւոյ, Երկոքումբք այսոքիւք հպին հոգւոյ մեր առ ած. նախ՝ ապաշխարանօք. իսկ ապա՝ յաճախութբ աղօթից: Մէկն. առաք. 15: I: Եւ առ այս թէ կամեսցի ոք՝ կարէ գտանել զզանազան աղօթս, զոր սահմանեալ աւանդեցին. սուրբ հարք և վարդապետք մր հաւատացելոց. յորոց զքանի մի աղօթս պարտի մարդ առնուլ 'ի բերան, զի կարասցէ ա ժամանակին անշփոթ կատարել զպաշտամունս իւր առ ած:

Արտաքոյ այսոցիկ ժամանակաց՝ պարտ և արժան է ճշմարիտ քրիստոնէին, բազում անգամ յաւուրն վերացուցանել զմիտս իւր առ ած. նուիրելով նմա զամ գործողութիս իւր և կարգելով զայնս 'ի փառս այ. որ և համարի տիրապէս աղօթք. զի նուէր խոստովանի մարդ զած՝ տր և արարիչ իւր. և զինքն ծառայ պատրաստական 'ի կատարել զկամս նորա:

4. Ասասցուք և մի տեղւոյ աղօթից, ուր արժան իցէ քրիստոնէին աղօթել. այլ յայսմ ոչ են մեզ

կամք խորութիւն դնել 'ի մէջ տեղւոյ և տեղւոյ. զի ամենայն ուրեք՝ յորում կարէ մարդ խաղաղ մտօք աղօթել առ աստուած այն համարի յարմար տեղի աղօթից: Բայց քանզի սահմանեալ կայ յաշխարհի և առանձին տուն աղօթից. ուր սովոր են մարդիկ միաբան կատարել զպաշտամունս Աստուծոյ, նմին իրի պարտ է մեզ աստանօր խօսիլ զայնմ տեղւոյ և եթ որ է եկեղեցի Աստուծոյ՝ յորում պաշտի և փառաւորի Աստուած 'ի բազմութենէ հաւատացելոց. և 'ի կանոնաց առանդելոց սակս այնր՝ հնար է ամենայն ումեք կառավարել զանձն և յայլ տեղիս առանձնական աղօթից:

Արդ՝ երկիւղած քրիստոնեայն յորժամ հանդերձեալ է գնալ յեկեղեցին պարտի պատրաստել զանձն զգեցեալ զկայելուչ և զմաքուր հանդերձս իբրև այն՝ որ հանդերձեալ է գնալ 'ի տուն երկնաւոր թագաւորի: Եւ յորժամ մտանէ 'ի նոյն, զառաջինն պարտի բանալ զգլուխ իւր. և ապա խաչակնքելով զդէմսն՝ խոնարհութեամբ և երկիւղիւ ծունր դնել առաջի սուրբ սեղանոյն. և երկրպագել ամենասուրբ հաղորդութեան. և յետ այնր օրէն է առանձնանալ 'ի տեղի ուրեք, և անդ ջերմեռանդութեամբ կալ յաղօթս առ Աստուած: Եւ զկնի առանձնական աղօթից, զոր առնէ մարդ ըստ բաւականին, պարտի լռութեամբ միտ դնել բանից աստուածային ժամերգութեան՝ կամ պատարագի և սուրբ ընթերցուածոց, որ լինի յեկեղեցւոջ: Եւ չէ օրէն ամենևին խօսիլ ընդ այլս կամ հայիլ յերեսս նոցա. այլ պիտոյ է կալ պարկեշտութեամբ և ամենայն պատկառանօք՝ ընդ Աստուծոյ

և

և եթ խօսակից լինելով ։ Այս թիւր է և անկարգ զոր գործեն ոմանք. որոց թողեալ զունկնդրութիւն աստուածային ժամերգութեան և աղօթից խորհրդոյն, խօսին ընդ բարեկամս, և ընդ ծանօթս իւրեանց. զի ոչ է տունն Աստուծոյ տեղի կենցաղավարութեան ընդ մարդկան ։ Եւ եւս ՚ի կալն յեկեղեցւոջ՝ պարտ է դիտել զսովորութիւն հասարակաց. և ըստ այնմ յատին կալ կամ ծունր դնել. որպէս զի մի՛ արասցէ բաժանութիւն ժողովրդեան ։

## Գլուխ. 2 ։

Թէ զի՞արդ պարտ իցէ ունկն դնել աստուածային բանից ։

Աստուածային բանք կոչին ամենայն հոգևոր քարոզք և բարի խօսակցութիւնք որք լինին զԱստուծոյ և զառաքինութեանց, որովք յորդորի մարդըս ՚ի սէր և յառաքինական գործս առ ՚ի ծառայել Աստուծոյ և ստանալ զփրկութիւն հոգւոյն ։ Արդ՝ թէ քանի՞ օգտակար և շահաւոր իցեն մարդոյ ունկնդրութիւնք այսպիսի բանից, ոչ է տեղւոյս ասել՝ իբր արտաքոյ գոլով վախճանի այսր մերում առաջադրեալ գործոյ. վ̄յ որ մեզն է անկ, զայն միայն յայտ արասցուք աստանօր, թէ զի՞արդ պարտ իցէ ունկն դնել այնմ. զի օգուտ նորա արդեամբ ծանիցի ՚ի մեզ ։

1. Արդ՝ ովք զի բանն Աստուծոյ պտղաբերեսցէ ՚ի հոգիս մեր, պարտ է ՚ի վեր քան զամենայն ունկնդրել և փափաք առ-

տու այն. երբեւ քաղցեալ և ծարաւի դիմելով ՚ի լոյս ա՟ծային բանից. համարելով զնոյն ճշմարիտ կերակուր հոգւոյ. ուստի ընդունի մարդ սնունդ հոգևոր յաճախումն առաքինութեց և ՚ի զարգացումն բարեպաշտութե՟ն վարուց: Այլ անպտուղ եղանեն նոքա յունկնդրութե՟ն բանին ա՟յ, որք գնան անդր վ՟ս սովորութե՟ն կամ մարդավարութե՟ն՝ չունելով ՚ի սրտի զճշմարիտ սէր և զանձուկ լսելոյ և ՚ի մէտ առնելոյ զբանս ա՟յ. որով և անօգուտ լինի ն՟ց այն ունկնդրութիւն: Եւ ևս պարսաւելի են և նոքա, որք վ՟ս հետաքրքրութե՟ն գնան ՚ի լսել քարոզի, առ ՚ի հայիլ և քննել զեղանակ խօսակցութե՟ն քարոզչին. կամ թէ զինչ ինչ նոր հանդերձեալ իցէ ասել. որ է աւելի զայթակղութե՟ն բազմաց. որով գնան լսել զբանն ա՟յ, և անմասն եղանեն ՚ի պտղոյ նո՟ր. զի փոխանակ խրատ ընդունելոյ անտի ՚ի շահ հոգևոր անձանց իւրեանց, լինին դատաւորք քարոզչին. եթէ արժանաւոր ինչ լուեալ գովեն. ապա թէ ոչ՝ անարգանեն և բամբասեն. որով և յունկնդրութե՟ բանին ա՟յ, առնուն իւրեանց առիթս մեղաց և հոգևոր վնասու: Այլ պարտ է մարդոյ ուղղութե՟ սրտի գնալ ՚ի լսել ա՟ծային բանից, և մտա դնել ճշմարտութե՟ն ասացելոյն՝ առանց հայելոյ, եթէ պաճուճեալ իցէ կամ անզարդ և կամ համառակ ինչ և յայտնի զրոյցք. զի ո՛չ յայս սակս կարգեցան քարոզք եկղ՟ զի մարդիկ նորանորս լուիցեն, այլ զի յիշեսցեն և մի մոռասցին զհանապազորդեան պարտս, զոր ունին ՚ի ծառայել ա՟յ և ՚ի գործել

զա

զառաքինութիւնս ։

2. Պարտ է մարդոյ խոնարհութբ՟ և երկիւղիւ՟ հանդերձ ամ՟ մտադրութբ՟ լսել զբանն այ՟, առանց խօսելոյ ը՟ այլս, կամ հայելոյ այսր անդր յերեսս այլոց. այլ պարտի զաչսն 'ի խոնարհ ունիլ, և զմիտսն ուղղեալ առ բանս քարոզչին. թողլով 'ի բաց զամենայն արտաքին հոգս և զբաղմանց խորհուրդս. որք են պատճառ ցնդելոյ մտացն, և արգելք իմանալոյ զբանն այ՟. և համարին փուշք, որք հեղձուցանեն զբարուոք սերմն ածային բանից. և անպտուղ առնեն 'ի հոգիս մեր զայն ։ Յայս տակս թիւր գործեն նոքա, որք 'ի ժամ քարոզի ոչ միայն ինքեանք անմտադիւրք լեալ բանիցն այ՟ ցընդեալ մտօք լսեն զայն, այլ և զայլս շփոթեն. խօսելով ընդ նմա, ծիծաղելով, դղրդմունս առնելով բարձրաձայն հազալով. թքանելով և այլ այսպիսի իրօք. որք ամօթ համարին և 'ի մարդկային ընկերութիս, թող թէ յունկնդրութիս ածային բանից.

3. Պարտ է ունկնդրաց բանին այ՟ քաղցրութբ՟ սրտի և զուարթութբ՟ երեսաց լսել զբանս քարոզչին. զգուշանալով ամենևին՝ զի մի ցուցցեն զանախորժ դէմս, յորժամ լսիցեն բանս ինչ, որով յանդիմանին մոլութիք և մեղք իւրեանց. ածեալ զմտաւ՟ թէ պաշտօն և պարտք քարոզչին է յորդորել զմարդիկ յառաքինութիս և ատելի ցուցանել զմեղս. ոչ զի է այն յունկնդիրս, այլ զի մի լինիցի 'ի նոսա ։ Սակայն յառաւել յուղղութի վարուց արժան է ունկնդրին, զի յորժամ լսէ զբանն այ՟ մերձեցուցանել

ցանել յանձն. համեմատելով զվարս իւր ընդ բա-
նիցն, զոր լսէ. և առնուլ անտի խրատ ուղղելոյ
զվարուս իւր: Նմին իրի Թիւր գործեն նոքա, որք
'ի լսելն զքարոզ՝ փոխանակ յինքեանս յանկելոյ.
յայլս մերձեցուցանեն. զայն զոր է՝ 'ի Թշնամիս և 'ի
դրացիս իւրեանց, որպէս Թէ վասն նոցա լսիցեն
զայն, և ո՛չ վասն անձանց իւրեանց. որով և 'ի զուր
լինի ունկնդրութիւն նոցա:

4. 'Ի լսելն զքարոզ՝ չէ՛ պարտ հայիլ յանձն քա-
րոզչին, իբր զի է անարգ և արհամարհեալ ոք.
կամ զի է յայնպիսեաց անտի. որք ասեն և ո՛չ առ-
նեն. այլ պիտոյ է յայն և եթ լինիլ ուշադիր, զի
ընկալցի զբանն Աստուծոյ, զոր ասէ քարոզիչն. նմանեալ
յայսմ եղիայի մարգարէին, որ զհայն կարևոր 'ի
անուանդ կենաց, միօրինակ ընդունէր մատակարարել
նմա 'ի սևաթևոյ ագռաւուցն և 'ի զուարթուն հր-
րեշտակէն: ( 3. Թագ. Գլ. 17. 6: և 19. 5: )
Ճաշ է այն՝ զի կերակուրն իցէ ազնիւ. այլ Թէ
յումմէ՞ մատակարարիցի, չէ՛ պարտ նկատել: Զի
և անարգ երկիրն արտադրէ զոսկի պատուական,
և ո՛չ յայնսակս արհամարհելի Թուի ումեք ոսկին,
իբր զի է յանարգ հողոյ. նոյնպէս բանն Աստուծոյ, զոր
ասէ քարոզիչն, է ոսկի ընտիր, զոր միայն պա՛րտ
է առնուլ ունկնդրին՝ Թողլով զհողն անպիտան.
զհետ երԹալ խրատուն Քրիստոսի, Թէ Զոր ասիցեն
ձեզ արարէ՛ք և պահեցէ՛ք. բայց ըստ գործոց նոցա
մի առնէք: Մատ. 23. 3:

5. Պարտ է մարդոյ. զգուշանալ մեծապէս զի մի

յուն

յունկնդրութիս քարոզից առանց հարկի նախ ք̃ զա̃ւարտիլն, անկատար թողեալ զայն մեկնեսցի անտի. մանաւանդ՝ եթէ լիցէ ոք ՚ի մէջ բազմութե̃, և կամ յերևելի տեղւոջ. զի բաց ՚ի լինելոյ անքաղաքավարութի՝ է և ս նշան արհամարհութե̃ կամ ոչ ախորժելոյ ընդ բանս քարոզչին, որ և մարթի լինիլ տեսողացն առիթ դատողութեան և գայթակղութեան: Այլ եթէ ոք անպարապ գոլով չունիցի կամս ունկն դնել ամբողջ քարոզին, պարտի ՚ի սկզբան անդ կալ յայնպիսի տեղւոջ ուստի դիւրին իցէ նմա ելանել առանց տեսանելոյ յայլոց կամ անհանգիստ առնելոյ զայլս ՚ի տալ նմա Ճանապարհ:

6. Աստանօր արժան համարիմ յիշեցուցանել և զայն քննասէր հաւատացելոց, որոց պարտ է ոչ միայն փափաքանօք լսել զբանն այ̃, այլ և փութալ գործով կատարել զլուեալն. ըստ խրատու առաքելոյն յակոբայ. ( I. 22: ) որ ասէ. Լինիջիք առնելիք բանին. և մի լսելիք միայն համարեսջիք զանձինս: Զի զորօրինակ չէ բաւական առ սնունդ մարմնաւոր կենաց՝ ճաշակել զկերակուրն, և վաղվաղակի արտաքս փսխել. նոյնպէս անօգուտ է հոգւոյ լսել զբանս այ̃, և ոչ պահել զայն ՚ի սրտի. որպէս զի սերմն ա̃ծային բանից սերմանեալն ՚ի հոգւիս ունկնդրութե̃ քարոզից, պտղաբերեսցէ ՚ի մեզ զարդիւնս առաքինութե̃:

Գլուխ

## Գլուխ. 3։

### Թէ զիարդ պարտ իցէ մարդոյ գործել զբարիս և ծառայել աստուծոյ։

Զպարտականութիւն՝ զոր ունիմք ծառայել այ բարի գործովք, Թէպէտ և խոստովանի ամ ոք. այլ սակաւք են՝ որք զայն արդեամբ կատարեսցեն. ոչ զի անհնար է գործելն. այլ զի բնութիւն մարդկան ախտաւոր գոլով՝ զկանխալի պաշտօն անախտ բնութեան այ իբր դժուարին ինչ տայ երևեցուցանել, մինչև անդիմանալ բազմաց և զեղանակ ըստ պատշաճի ծառայութեան այ։ Այս պատշաճ է այստանօր յաւարտ գլոյս՝ իբր ՚ի յետին լրման բովանդակութ գործոյս, հեշտընկալ և դիւրին կանոնօք ախորժալուր առնել ամենայն զբաղձս և զանձկալի ծառայութիւն այ, յոր պարտի ամ ոք սպասել զկեանս իւր. և աշխատիլ ՚ի նմա՝ իբրև ՚ի ստացուած մեծութ, որ մնայ յաւիտեան։ Զի ըստ բանից սբյն Ներսէսի Լամբրոնացւոյ, Որ բարեգործութ յանկայ, ոչ այլ ինչ յանկայ՝ բայց միայն անմահութեան.

Մէջն առաւ. գլ. 13. 12։

Աղէ՛ որովհետև ստեղծուած եմք այ, ՚ի նմանէ ընդունելով զկեանս և զամ ինչ, և եմք կարգեալ ՚ի ստանալ և ՚ի ժառանգել զնա. ուստի չէ պարտ յարել սրտիւ ՚ի կենցաղս յայս անցաւոր, որ է տեղի պանդխտութե մերոյ. այլ փութալ դիմել ՚ի

հայր

հայրենին մեր, որ է արքայութիւն երկնից՝ առ ՚ի տեսանել անդ զԱստուած, և բերկրիլ նովաւ: Եւ առ այս հարկ է ծառայել Աստուծոյ և գործել զբարիս. զի արժանի լիցուք իբրև հաւատարիմ ծառայ մտանել յուրախութիւն Տեառն: Ծառայութիւն՝ զոր պարտական եմք Աստուծոյ, է նախ՝ սիրելն զնա յամենայն սրտէ, յամենայն մտաց և յամենայն զօրութենէ քո է՝ միայն զնա սիրել ՚ի վեր քան զամենայն ինչ, և զսէր նորա հաստատապէս կրել ՚ի սրտի մերում, անջնջելի պահելով զյիշատակ նորա ՚ի մեզ:

Երկրորդ՝ զճշմարիտ և զաներկբայ հաւատս, զոր ունիմք առ Աստուած, պարտիմք ցուցանել ՚ի ձեռն ուղիղ և անմոլար դաւանութեան մերոյ. և ՚ի ձեռն անդրդուելի յուսոյ. խոստովանելով և ակնունելով թէ Աստուած՝ զոր ինչ միանգամ խոստացեալ է բարիս, ունի կատարել զամենայն:

Երրորդ՝ պարտ է մեզ երկնչել յԱստուծոյ և պահել զ պատուիրանս նորա. գիտելով՝ եթէ անաչառ դատաւոր է նա գործոց մերոց և տեսանէ զամենայն. և զի հանդերձեալ է դատել և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր: Քանզի ոչ ծածկի ՚ի նմանէ և ոչ մի ինչ յանցանք, զոր գործէ մարդ խորհրդով, բանիւ կամ գործով. վասն այսորիկ պարտիմք զգուշանալ ամենևին յամենայն մեղաց, և ՚ի գործելոյ իրաց ինչ. որ իցէ ընդդէմ օրինացն Աստուծոյ:

Չորրորդ՝ պարտ է յամենայնի ճանաչել զանձինս մեր երախտապարտս առ բազմապատիկ բարերարութիւնս Աստուծոյ, զոր արարեալ է առ մեզ օր ըստ օրէ. զի

զոր ինչ

զորինչ միանգամ ունիմք և վայելեմք՝ է ՚ի ձրի պար
գևացն ա՟յ, զոր առատաբաշխէ յարարածս իւր.
ը՟ այսմ թէ Ամենայն տուրք բարիք և ա՟մ պարգևք
՚ի վերուստ են իջեալ առ ՚ի Հօրէն լուսոյ: Յա՟կ. I.
17: Այլ և պարտիմք զնշանակ երախտագիտութե՟
մերոյ ցուցանել առ նա յա՟մ ժամ, գոհանալով ըզ
նմանէ, օրհնելով և փառաւորելով զնա. և ըստ
կարի պէսպէս բարեգործութ՟ք ջանալով փոխարի-
նել երախտեաց նորա:

Չորրորդ՝ պարտ է յա՟մ գործս համակամութի՟
ունիլ ը՟ հաճոյսն ա՟յ. ը՟ունելով զա՟մ ինչ իբրև
՚ի ձեռանէն ա՟յ, թէ բարիք իցեն և յաջողուածք.
և թէ վիշտք և անյաջողդիպուածք. յորս և պար
տիմք գոհանալ զքաղցր բարեհաճութե՟ կամաց
նորա, որ կարգէ զամենայն առ մեր օգուտ և ՚ի
փրկութի՟:

Հինգերորդ՝ պարտ է մեզ ՚ի նեղութի՟ս և ՚ի վիշտս
դիմել առ ա՟յ հաւատով և խոնարհութ՟բ ապաւի-
նելով ՚ի քաղցրագութ ողորմութի՟ նորա որ հանա
պազ ապաւէ լսել աղաչանաց մերոց, և կատարել
զխնդրուածս մեր: Եւ զայս ոչ միայն ՚ի վիշտս և
՚ի կարօտութի՟ս մեր պարտիմք առնել, այլ և օր ը՟
օրէ յա՟մ գործողութի՟ս՝ խնդրելով զօգնութի՟ շնոր-
հաց նորա, որով կարասցուք գործել զա՟մ ՚ի փա-
ռս ա՟յ, և ՚ի փրկութի՟ հոգւոց մերոց:

Յայսոսիկ ներքին կրթութի՟ս հաւատոյ, սիրոյ,
յուսոյ, երկիւղի, երախտագիտութե՟, համակա
մութե՟ և ապաւինութե՟ առ ա՟յ, որք են իբր
պտուղք

պտուղք բազմաւոր անկոյս, պարտիմք յաւելուլ և զայլ արտաքին ջերմեռանդութիւնս՝ իբր մշտադալար սաղարթս կամ ծաղիկս գունագեղս, որք են պարկեշտութիւն 'ի վարս, համեստութիւն 'ի խօսս, արդարութիւն 'ի գործս, կրօնասիրութիւն որով պարտ է զսահմանեալ տօնս ածային հանդիսից սրբութեամբ կատարել. ստէպ գնալ յայցելութիւն և 'ի ջերմեռանդութիւն յեկեղեցիսն այ. և յուխտատեղիս սրբոց. 'ի ստէպութիւն ամենասուրբ խորհրդոյ պատարագին. յունկնդրութիւն աստուածային բանից. և լինել փութաջան յընկերսիրութիւնս 'ի գործս ողորմութեան, ունելով 'ի սրտի զճշմարիտ փափագ՝ յամենայնի կատարելոյ զկամս այ. և զայլս ևս 'ի նոյն յորդորելոյ. որովք կոչի և լինի մարդ տիրամօր արժանաւոր ծառայ այ. և օրհնի 'ի նմանէ է աստ յաշխարհի. և 'ի հանդերձեալն դասի այնպիսին ընդ սուրբս օրհնաբանիչս անուան նորա յերկինս: Ըստ որում գրէ և Սարգիս շնորհալի՝ յասէն. Զփոխարէն տրիտուր վաստակոյս այսոցիկ սրբութեան, հաւատոյ, սիրոյ, աղօթից, պահպանութեան անձին, մի յաւուրեայ կեանս ակնկալեսցուք հատուցանել մեզ այ. այլ 'ի կեանս մշտնջենաւորս և յանվախճան

Ճառն: Մեկն. Կաթ՛՛ Յովհ՛՛ եառ, 3:

## ՊԵՐՋ:

Զա

Ջանայիր որ տղայութեան ժամանակիդ՝ մինչև ծերանալդ՝ խելք սովորելէ յետնա՛ լինես. վասնոր խելքն քեզ՝ խվէլը պէտք կգայ քանց յուրիշ բան։

(որպէս Պյիտտակոս իմաստունն ասէ։)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## Կանոնաց քաղաքավարութեան աշխարհաբառ լեզուաւ:

Ինքն կենաց պարգևիչ և բարերարն ամ մարդն ստեղծելոյ՝ իւր համար, պէտկայ որ մարդն ես յառաջ ճանաչի, իւր ստեղծօղն, պաշտի և սիրի. շնորհակալ լինելով նորայ երախտեաց՝ և բարերարութենց, որ մեզ միտկ և կամքայ տվել որով կարողանամք ճանաչել իւր մեծութիւն, և փափագել առ զնրա ծառայութենն: Վասնորոյ մարդիս առաջի պարտականութիւննայ մեղքէն զգուշանալ՝ և ամ պատուիրանքն պահել, և ջանանալ բարի գործովք՝ և առաքինութբ, զարդարել մեր հոգին. որ կարողանամք հասանել մեր վախճանին և երանութե, որէ նոյն ինքն Ած:

---

### Աղօթք անելոյ վերայ:

Եկատելէայ որովհետև աղօթքն այ յետ խօսակցութիւննայ, վասնորոյ հարկայ որ մարդն ինքն ըստ ինքեան իմանայ. և իւր միտկն վերայ ժողովի. և պարկեշտութբ ծունկ չոքելով բոլորովին սրտով և մտքով առ Ած դիմի.

Ուստի աղօթք անելոյ ժամանակն, հարկ չէ որ դեսդէն ականի կամ յուրիշի յետ խօսի, կամ ծիծաղի. այլ մտադրութբ պիտի Աղօթք անել մինչ վերջանայ: Ըն լեզուաւ աղօթք արայ որ կարողանաս հասկանալ՝ և ջեռմեռանդութե շարժել:

Եկե

Եկեղեցումէջն ջանայիր համեստութիւն և առանց ձէն աղօթես, բարի օրինակ տալով՝ յուրիշներուն, չլինի թէ անասնի պէս մին օր առանց աղօթք հանց կացանես՝ այլ անպակասն պիտի օրն երկու անգամ աղօթք առնես, մինն առաւօտէնց յերբ որ քնիցդ կզարթնես, և միւսն յարակուն քուն լինելոյ ժամանակդ: Առաւօտէնց պիտի փառք տաս այ որ ըզքեզ ողջըս պահել, և յետ այնու հաւատով խընդրես բարերարէն, շնորհ՝ և օգնութիւ, որով կարողանաս էն լուսացած օրդ առանց մեղաց անցկացանել: Նմանապէս գիշերն պիտի աղաչես զած՝ որ պահի և ազատի քեզ զանազան փորձանքից, որ կարողայ քեզ հանդիպել: Իսկ որպէս յեշտ լինի մարդոյն աղօթել, պիտի որ ջանանայ որ մին քանի Աղօթք ես բերանով սերտ լինի որ կարողանայ ժամանակին ասել:

---

## Անկողնուց ելնելու վերայ:

Առաւօտու պահուն երբոր մարդ քնիցն զարթնի, պէտքայ որ առանց ծուլութեան ելնի անկողնուցն (այսինքն բիչանիցն), և կարգաւ և զգաստութիւ հագնի իւր շորերն, նայելով որ եխտոտ կամ ձղած չլինի զգեստն. և թէ որ լինի պիտի մաքրել և կարել և յետոյ հագանել: Քանի որ մինն կատարեալ՝ չի հագել իւր շորերն չի պիտի որ տանից դուրս գոյ, կամ բազմութեան մէջ մանգոյ: զգեստ հագնելուց յետոյ՝ հարկայ որ յի-

րեան

ըսան և ձեռներն լուանալ, բայց լուանալէ ժամանակն պէտք մարդս ջանանայ որ պարկեշտութե և զգուշութե առնէ էնպէս որ շորերն չթրջվի և ջուրն դէս դէն չնկանի։ Եւ կանանս պէտք պահել՝ ամ ըմպայլելու ժամանակն, թէ առաւօտեան լինի, և թէ յետ կերակրոյն, կամ յուրիշ ժամանակն նմանապէս սրբելէ ժամանակն՝ պէտք մարդ զգուշանայ, որ բոլոր յերես սրբիչն չթրջի այլ միայն մին կողմն, որ յուրիշնել կարողանայ նոյն յերես սրբկողմն սրբվի։

---

## Կենցաղավարութեան վերայ

Մ զմարդն բանականայ սահմանել՝ որ անխելք անասնոյ պէս չվարվի աշխարքի վերայ վնյ պէտք մարդս իւր կենցաղավարութեան մէջ՝ միշտ զգաստ և արթուն լինի, և էնպէս բան ոչ ասի և ոչ առնի՝ որով անբան անասնոյ նմանի, այլ պէտք մտածի նայի՝ կշռի, որ ասացածն և արարածն՝ ըստ տեղոյն յարմար՝ և պատշաճ լինի, ՚ի մէջ ժամանակի և ՚ի մէջ անձանց, առաջի որոց կխօսի և կամ կառնի։ Հարկայ որ մարդ իւր վարքն էնպէս ուղղէ և կարգաւորէ որ հաճելի և ախորժելի լինի առաջի ծյ և մարդկան, վնյ պէտք զգուշանայ էնպէս բաներիցն որ կարողայ մեղաց պատճառ լինել, կամ այլոց կամաց ներհակութի և վնաս բերել, կամ այլոց զզուանայանել՝ կամ կարգ և կանոնի ընդդէմ լինել

լինել։ Այլ մանաւանդ պիտի ջանանայ մարդս որ յինքն առաւել այլոց սիրելի՝ և հաճոյ լինի, քան այլքն իւրն։ Մարդի յետ վարվելոյ ժամանակն, հարկւոյ որ ամենեցուն ըստ իւրեանց աստիճանի համեմատութեն մեծարի. Թէ որ մեծի յետ կվար վես, խոնարհութիւնդ. հեռնիցդ մի տալ. Թէ հաւասարի յետ՝ ջանայիր քեզ յարմարայանես նորա աչքումն. իսկ եթէ նուաստի կամ փոքրի յետ, ջանայիր որ սիրութբ և քաղցրութեամբ վարվես։ Կենցաղավարութե մէջ զգուշայիր որ բարկութի կամ զզվութի չցուցանես, կամ ներհակութիւն և ընդէմ մնի չխօսես կամ կեղծաւորութի կամ լրբութին և ծիծաղ այլոց պակասութեան վերայ չառնես, և հարկ չի որ ծաղրուի ու մասխարուի առնես, ինչպէս տեղ՝ և ինչպէս ժամանակն՝ որ վայելուչ չի։

Թէ որ մինն կամայց ներհակի կամ քոյ մին պակասութեն վերայ քեզ խրատի պիտի քաղցրութբ ընդունես, և շնորհակալ լինես։ Առաջի ծերոց և մեծամեծաց՝ պէտքայ որ պարկեշտութբ և ամօթխածութեն նստես, առանց դէտդէն նկանել և զգաստ պիտի լինես, որ կարողանաս նոցայ խօսքն իմանալ՝ և ըստ պահանջման տեղոյն պատասխանել Այս կանոնս առաւելապէս պիտի տղայք և երիտասարդք պահեն, զիայ յերբ որ ծերոց և իմաստուն անձանց մէջ գտանվեն, պիտի որ լռութբ և համեստութբ ականջ դնեն նոցայ խօսքին, և են ինչ որ իւրեանց հարկաւորայ սովորեն և 'ի

մտի

մտի պահէն։ Էն բանն որ քեզ չի պատկանեալ մի հարցանել և իմանալոյ յետևէն մի գնալ։ Թէ որ բարեկամդ՝ քեզ մին խորհուրդ յայտնի, ջանացիր որ ծածուկ պահես։ Առանց մտածել մարդի խօսկ մի տալ, յերբոր մին խօսկ տվիր հետևիր որ կատարես։ Զգուշացիր որ այլոց տան կամ հագուստին կամ կերածին պարսաւող չլինես՝ և աչք չդնես։ Այլոց ձախորդութէ կամ պակասութեան վերայ չխնդաս, խաղի մէջ չբարկանաս կռիւ չխանես մեծ մեծ չփայես։

Ուրիշի առաջ եղունգդ մի կտրել, մատով քիթ և ականջդ մի խառնել։ Մարդի առաջ, անձինդ չքորես և չլինի թէ ախ վախ անելով կոտրատվես Ձեռներդ և երեսդ՝ ջանացիր միշտ մաքուր պահես, և չլինի թէ թքովդ յստակես ձեռներդ յերեսիդ՝ և շորերիդ եխտն։ Թէ որ մին պզտուելի եխտտտուն տեսնես յուրիշի մի նշանց տալ, այլ հետևիր համդարտութբ ծածկես, որ մարդ չտեսնի։ Ցուրտ եղանակն ձեռներդ յերար չըշփես կամ բերանովդ և քնչովդ չտաքցանես։

---

Խօսակցութեան վերայ։

Չի եթէ համեղ խօսկցութիւն կուզես պիտի որ հետևես օգտակար՝ անմեղ՝ և զուարճալի լինի։ Ուրախութեան մէջ, տրտմալի բան՝ մի խօսել, նմանապէս և ոչ տրտմութեան մէջայ հարկաւոր՝ որ ուրախալի և ծիծա

ծիծաղալը բան խանես բերանիդ: Խօսակցութեանդ մէջն զգուշ կացիր երդում ուտելէն՝ բամբասանքէն՝ անէծքէն՝ հայհոյութիւնէն՝ յուշունց տալէն՝ սուտ խօսելէն՝ սիրտ ծակօղ խօսքերէն՝ պարծանք և մեծութիւն անելէն, որ էստոնցմէ խօսակցութեան շնորհքն կկորի, ինչ որ պիտի խօսես յառաջ մտածիր որ կարգաւ միակերպ համեղութեամբ և քաղցրութեամբ խօսես, առանց բանն բանի մէջ խառնելով: Եւ ինչ որ սկսար խօսել կամ պատմել. հետևիր որ կատարելապէս վերջացնորես, կիսատ չթողուս. և նորմէ յուրիշ բան չսկսես, և կամ մին անգամէն խօսածդ միւս անգամ չկրկնես, խօսակցութիւնն հարկաւորայ որ յայտնի և պարզ կերպիւ լինի, էնպէս՝ որ ամէն մարդ անաշխատ կարողանան խասկանալ, վասնորոյ պատշաճ չէ էնպէս բառ գործածել կամ էնպէս լեզուաւ խօսել որ չխասկացվի: Եւ ինչ լեզուաւ որ սկսար խօսել հարկաւորայ որ մի և նոյն լեզուաւ վերջացնորես, չլինի թէ հայևար սկսես՝ և ինկլիզևար աւարտես: Խօսելոյ ժամանակդ ջանայիր կոշտ և անշնորհք զրոյց չխառնես, մանաւանդ հակառակութեան մէջն, այլոց խօսքն չ'արհամարհես այլ հետևիր որ ամենեցուն յետ պատուով, և քաղաքավարութեամբ խօսակցութիւն առնես: Բազմութեան մէջն միայն դու խօսօղ մի լինիլ, այլ ջանայիր որ յուրիշներն ժամանակ տաս խօսելոյ: Մարդի բերանից խօսք մի կտրել, և մի յափշտակել: Թէ որ քեզանից ել մեծ կայ զգուշայիր յառաջ քանզ էն

կու չսկսես խօսել։ Եւ անծանօթ կամ չգիտա-
ցած խօսակցութեան մէջն մի խառնվիր և ուրիշի
խօսք մի սրբագրել։ Խօսկցութեանդ մէջն ջանա
ցիր որ ձէնդ յստակ և պարզ հանես, առանց
բռռալոյ, չլինի թէ շուտ շուտ կամ քնթով խօսես
կամ կակազես կամ քանզ չափին՝ իվեր կամաց ձէ-
նով խօսես։ Խօսելու ժամանակդ այլոց շատ մի
մօտկանալ, ձեռնով մի բթել, ձեռներդ երեսի
դէմ մի ձգել։ Քինթդ բերանդ և աչքդ մի ծռել,
ձեռներդ շատ մի շարժել, այլ ջանացիր որ ծան
րութի և քաղցրութիւն ցոյց տաս։

---

## Նստելու վերկալու և մանգալէ վերայ։

Եւ անդ ուր բազմութիւն մարդկան ոտայ
վերայ կանգրած լինեն՝ այն տեղն հարկ չի
նստել, սակայն թէ որ տկարութի ունենաս
և կամ քեզ հրաւիրեն նստելն՝ ջանացիր որ պատո
ւաւոր տեղն ուրիշի տաս, և դուքաշ տեղ նստես
նստելու ժամանակդ, ոտներդ չձգես և չփռվես
կամ թինգն տալով չնստես, և քամակդ ուրիշի չա-
նես, բազմութե մէջ նստած ժամանակդ տօշակի
չտաս, կամ առանձին քեզնէքեզ չ՚երգես, կամ
թուղթ չկարդաս, կանգնման ժամանակդ ուրիշի
թինգն տալով չկանգրես, կամ ծերոց պէս մարդե
ձեռք չբռնես, այլ ինքենէդ վերկացիր առանց
ծռվել և տքալ։ Թէ որ ուզենաս հաւասար ընկե
րացդ միջից բաժանվել՝ ջանացիր որ նստած անձան

ցէ

ցէ թողութիւն խնդրես և ապա թէ երթաս ։ գնալու
ժամանակդ չ՚լինի թէ մարդի առաջք կտրելով
կամ երկու մարդի միջիցն ճղվելով հանց կաս ։
Մանգոլէ ժամանակդ՝ երկու բանից պիտի զգու-
շանաս, մինն վռազ վազելիցն, և միւսն աւելի քանզ
չափն ծանր գնալիցն, բայց ներելիայ եթէ որ յա-
տուկ հարկն պահանջի ։ Յերբ որ մանգոս ոտներդ
շատ մի բարձրացանել կամ էատուր ներհակ քաշ-
ալով մի գնալ և կամ բեռնակրի ( այսինքն կուլու ) պէս
ոտներդ մի տալ գետին ։ Մատներիդ վերայ կամ
թութուալով ճանապարհ մի գնալ, և կամ քէֆովի
պէս դէս դէն մի ընկանել ։ Գլուխդ ուղիղ պա-
հիր չափաւոր և բնական իւր ձևով նայելով միշտ
ոտիդ կոխած տեղն ։ Թևերդ կախելով կամ տա-
րուբեր առելով մի գնալ, և աղլխով բէնթով
կամ խամբարքով ճանապարհին մի խաղալ ։ Մինէկ
ճանապարհ գնալու ժամանակդ քեզնէ քեզ մի խօ
սել, քնթի տակով մի երգել ։ Թէ որ մինն հան-
դիպի՝ ճանապարհի վերայ մի կանգնել, ղայիմ մի
խօսել կռիւ մի տալ կատակաբանութիւն ( այսինքն խօշ
տաբ ) մի առնել ։ Թէ որ քանզ քեզ մեծի յետ ճա
նապարհ գնալու լինես, ջանայիր որ ձախ կողմով
գնաս աջ կողմդ նրա տալով, և քու ընթացքն նրա
յարմարացանես ։ Իսկ եթէ համասարի յետ երթաս
կարողաս միատեղ գնաս բայց զգուշայիր որ չլինի
թէ իւրն քսվելով երթաս ։ Թէ որ դունից կամ մին
նեղ տեղից որ հանց կալու լինես ջանայիր որ յու-
րիշի ճանապարհ տաս մանաւանդ քանզ քեզ մեծին ։

Ներ

## Կերակուր ուտելու վերայ։

Այլ թէ որ նախ քանց սեղան նստելդ ձեռնէրդ չես լուացել, ուրեմն լուա՛ որ յիստակ լինի։ Եւ երբ կնստես կերակուր ուտելու՝ երեսդ խաչակնքիր և փառք տուր այ որ քեզ կերակուրայ պարգևել ուտելէ։ Սեղան չնստես քանի որ քանց քեզ մեծն նստել չի և ձեռդ չձգես կերակրի քանի որ քանց քեզ մեծն չի սկսել։ Սեղանին շատ մօտ մի նստել։ Արմնէդ սեղանի մի կպցանել թևէրդ չտարածես, և երեսի վերայ չնկանես այլ չափաւոր հեռաւորութեամբ համդարտ նստես։ Կերակուրն ձախ ձեռնով չուտես, ձեռնէրտ եխոտոտայանես ոչ. այլ պատառաքաղով (այսինքն չանկալով) կեր։ Մեծ դիքայ չդնես բերանդ և շուտ շուտ չուտես, մին դիքէն չաւարտած միւսն չդնես բերանդ։ Ամբողջ հաց կամ միս կամ պտուղ (այսինքն եմիշ) խածանելով չուտես այլ դանակով կտրելով չափաւոր դիքայ շինիր և էնպէս կեր։ Ուտելու ժամանակդ չտքաս, կամ խոզի պէս շփշփալով չուտես։ Թէ կերակուրդ տաքայ չլինի թէ փչես սառելէ համար, այլ կամայ կամայ ուտելով սպասիր մինչ սառի։ Թէ որ գդալով կուտես զգուշայիր որ շատ չլցես որ վէր թափի չլինի թէ սաղն տանես բերանդ՝ վասն կերակրի ջուրն խմելու համար սեղանի վերայ զգուշայիր որ ուտելու լէվ վասն չջոկես քեզ համար ինչ որ առաջդ գայ կամ այլքն տան նոյնն կեր։ Թէ որ մին կերակուրն քեզ խօշ չի

չի, չլինի թէ չհալածելու նշան տաս կամ պակասութն դնես, և էս տուր ներհակն թէ քեզ խօշ լինի շատ չգովես։

Եխտոռ ձեռնով հաց կամ եմիշ մի կտրել, գաւաթ մի բռնել մատով ալ մի վերառնել թէ որ հացդ պակասի յուրիշի առաջքից մի վերառնել։ Մարդու կերածն մի ակներ։ Շատ մի բռնադատել յուրիշի կերակուր ուտելու՝ և մանաւանդ վն գինի խմելու։ Թան էնքան լցիր որ վէր չդառնայ և կարողանաս խմել։ Կիսատ խմածդ յուրիշի չտաս։ Խմելէ ժամանակն հետևիր որ թան մին ձեռնով բռնես շատ ծանդր ծանդր չխմես և ոչ շատ շուտշուտ եյետ խմելուցդ չլինի թէ թան ծծես և հառաչես։ Սեղանի վերայ չլինի թէ գինի կամ կերակուր քնթիդ մոտկայանելով խոտ քաշես։ թէ որ մին կերակուր բերանդ դրիր որ ախորժելի չի քեզ չլինի զզվելով բազմութն մէջ բերանիցդ դուս խանես այլ կամաց վերկայիր սեղանի ցըն և առանձին թափիր մին էնպէս տեղ որ մարդ չտեսնի։ Կերակրի մէջ թէ ոսկոռ կամ փուշ կամ ուրիշ իքմին հանդիպի բերանումդ դուս մի ձգել այլ ձեռնով առ բերանիցդ և դիր ամանիդ մէջն չլինի թէ սեղանի տակն գձես կամ մին տեղ փարթաւես։ Իսկ եթէ դիպուածով ձեռնիցդ մին իքմին վէր ընկանի հետևիր որ չնորհքով և զգուշութբ վերառնուս։ Սեղանի վերայ պիտի ոչ որ տրտում և տխուր նստել և զզուելի բանի վերայ պէտք չի խօսել բարկութն չի հարկաւոր

յու

ցուցանել մանաւանդ սեղանատիրոջն այլ անուշ և համեղ խօսկերով պիտի զբօսնուլ։ Թէ որ մինն կուշտացած լինի պիտի որ պարկեշտ և հանդարտ մնայ մինչև միւսանին ևս կերակրոյ պրծանեն վասն որոյ հարկ չէ որ դանակով կամ գդալով կամ աղլխով կամ յուրիշ էքմէքով խաղալ կամ չանկալով կեռուէք յխատակել և կամ սեղանից վերկենալ նախքանց գոհանալըն։ Սակայն թէ որմինն մին հարկաւոր բան պատահի բայց պիտի շուտով յետ դառնայ։ Սեղանի վերայ կամ կերակուր ուտելու ժամանակն՝ զգուշայիր որ շատ չխաղաս չթքես գլուխդ կամ անձնդ չքորես ղայիմ զկնչես և շուտ շուտ թութուն չքաշես։ երբ որ սեղանիցն վեր-կաս ձեռներդ լուա՛յ թէ որ բազմութեն մէջ լուա-նաս ձեռդ պիտի որ պարկեշտութբ առնես։

---

Բնական գործողութեանց վերայ։



ծ և խաղալու և փռշտալու ժամանակն՝ ջանայիր որ կամաց լինի որ ձէնդ ղայիմ դուս չգոյ և ձեռդ կամ աղլուխդ բե-րանիդ մօտ բռնիր որ թուքդ չթռնի. Թքելու և խնչելու ժամանակն չլինի թէ բարձրաձայն խխես և թուքդ արևալէ տեղ մի ձգել. թէ որ աղլխի մէջ կթքես մօտկայրուր որ թուքդ դուս չյաթկի քինթդ գետին մի խնչել և ձեռնով մի սրբել ա-ւանց աղլխի, զգուշայիր որ աղլուխդ շատ եխառու չ՝ բանայանես յետ խնչելույ և թքելույդ չ՝ լինի

թէ

թէ գլխուդ մէջն ականես։ Ու քաշելն թէ որ ըստ տեղոյն և ժամանակին չլինի ծուռնայ, վայ ջանայիր որ ամէն մին դարտակ բան վերայ ախ չքաշես։ Արշտոտալն ծուլութեան նշանայ պիտի որ քեզ գայես մանաւանդ յուրիշի առաջ։ Սակայն թէ որ արշտատաս, չլինի թէ անասնոյ պէս ձէնէր հանես այլ առջ ձեռդ դիր բերանիդ վերայ՝ որ բերանիդ բացվելն չերևայ։ Ծկրօտ խանելն որ կլինի հասարակ օրէն կերակրից յետ՝ պիտի զգուշանայ մարդ որ անձայն լինի, յիրեսն մին կողմն դարձանելով որ բերանից դուս եկած շունչն ուրիշի երեսն չհասանի։ Դու միայնակ ժամանակդ մտիդ յետ քինթդ բերանդ չծուես, լեզուդ դուս չխանես՝ պաշարած աչկով չակնես։

---

Պառկելէ վերայ։

Էն տեղն որ բազմութի նստած կխօսեն, հարկ չի կշտու ընկանել՝ կամ քուն լինել։ Երբ որ կգնաս պառկելը, թէ հաւասար ընկերանոյէ պիտի բաժանվես, ( գիշեր բարի կամ երեկուս խաղաղութի ) ասա ամենեցուն և տալ գնա։ Անկողին կամ բիչանայ մտանելէդ յառաջ՝ քննութին արա խղճմտանայդ, և զղջա արարածդ մեղքերիդ վերայ, և յետոյ հանձնիր քեզ այ և սբ Ածածնին՝ և պահապան հրեշտակիդ, ասելով մի քանի աղօթք'ի պատիւ նոյա։ Պառկելէ ժամանակն՝ չլինի թէ մարդի յառաջ շորերդ հանես

հանես, և խանածդ շորերն դես դէն չփառթա-վես, այլ դիր մին գուշը տեղ՝ որ առաւօտէնց կարողանաս անաշխատ գտանել։ Ընկողին մոռած ժամանակդ, ջանայիր էնպէս պառկես որ ամէն կողմդ ծածկած լինի, և հետևիր հանդարտ լինես մոռածելով մին հոգևոր և բարի բան։

## ՊԵՐՋ։

## Յորդոր առ Մանուշակ

մ խոնարհական՝ ուշիմոր ղայ,
միտ դիր խրատուց՝ որ՚ի մը մա.
զվարդս քո՝ սոքօք ուղ ղեա՛,
լինիս յոգունց՝ դու գերա կայ։
Հետամուտ լե՛ր՝ այս գիտու թեան.
քեզ պիտանի՝ կենակցու թեան,
յորմէ սկիզբն՚ըն մարդկու թեան,
բերի՚ի ծայր՚ըն. սրբու թեան։
Ա՛ւ դու մանուկ՝ զայս իմ խրատ,
որով լինիս՝ բարեաց զա կատ։
յանկարծ ախտից՝ լինիլ փա րատ,
զի եղիցիս՝ սուրբ անա րատ,
Յորժամ յառնես՝ դու՚ի քնոյ,
յիշեա՛ զա՛ծ՝ զարարիչ քոյ,
մի նմանիր՝ ծոյլ անա նոյ,
նանրախորհուրդ՝ զբաղե լոյ։
Րամեալ զմիտսդ՝ առ քեզ պահ եա՛,
զգործս առ օրին՝ քո սահմա նեա՛,
՚ի գործդրութիւն՝ անհեղգ փու թա,
զելլս իրացն՝ ՚ի տէր յանձ նեա։
՚Ի բանս քո՝ լե՛ր մտա դիր,
զի մի լինի՝ խօսք ախտա կիր,
որով ցուցցես՝ զեղծ մարտա դիր,
անձնավլընաս՝ սուսերա կիր։
Գնայք մարմնոյ՝ հանդարտա կան,
շարժուածք զգաստ՝ վայելչա կան.
զգեստք

զգեստք մաքուր՝ յարմարա    կան,
որով լինիս՝ ազնուա    կան:
Նորագունարձ՝ ծաղկի նը    ման,
լեր գունարթուն՝ ՝ի գործս հա    մայն,
անոյշ բարուց՝ ըստ կերպա    րան,
տեսցի ՝ի դէմսդ՝ և ՝ի բե    րան:
Արդարութե՝ զուղին գը    նաս,
եթէ ուղիղ՝ վարս ստա    նաս,
համեստ կենօք՝ չքեղա    նաս,
ամենեցուն՝ հաճոյա    նաս:
Տնկեա՛ ՝ի քեզ՝ զխոնարհու    թիւն,
առ ՝ի ստանալ՝ զհնազանդու    թիւն,
՝ի բաց վանեա՝ զծուլու    թիւն,
մի տիրեսցէ՝ քեզ ձանձրու    թիւն:
Դի վարիլ քո՝ ընդ ընկե    րին,
մի ներհակիր՝ կամաց նո    րին,
և մի կռուիր՝ դու ՝ի խա    ղին,
յորմէ ծագի՝ խօսք աղտե    ղին:
Ոսկի զարդուք՝ զքեզ բոլո    րես,
թէ զայս կանոնս՝ ողջին պա    հես,
ուր երևի՝ մեղաց ար    կած,
խոյս տուր անտի՝ լեր անկա    կած:
Սիրտ ամօթխած՝ պատկառա    նօք,
և մի շոգմոգ՝ կերպարա    նօք,
մի հայեսցիս՝ լիրբ երե    սօք,
թէ և իցես՝ առ ընկե    րօք:
Աարդանրման՝ կենօք վա    ուխ,
եթէ չնորհօք շարժմամբ վա    րխ,

բարի

բարի մարդկանց՝ դու յարմա րիտ ,
ցոփ ընկերաց՝ չըհետևւ իս :
Արթուն մանուկ՝ զգօնա միտ ,
լեր բարութեց՝ մանրակը կիտ ,
Իբր մեղու՝ երկայնա միտ ,
որ 'ի վաստակս՝ է աներկ միտ :
Բոտին թևով՝ յօդս Ճե մէ ,
փոքր մարմնով՝ նիւթս րա մէ ·
խորխախս անոյշ՝ նովաւ կաղ մէ ,
քաղցրաճաշակ՝ քրմաց բաշ խէ :
Դպիր դու լեր իմձ օժան դակ ,
գործով լցո՝ փայս բովան դակ ,
յոր և կարգի՝ իմնպա տակ ·
զի մի եղէց՝ անսավա տակ :
Առաքինի՝ վարուցդ հան դէս ,
ցուցցես 'ի գործոց՝ վայելչա պէս ,
ով զգեստ՝ դիպակա պէս ,
արկցես զքև՝ իշխանա պէս :
Պէտք են ջանից՝ առ յուսա նիլ
հանապազօր՝ 'ի նոյն կըզ թիլ
ապա թէ ոչ՝ մնաս ան կոփ ,
և անպիտան՝ քան զգուլ խոփ :
Եթէ անսաս՝ իմոց բա նից ,
դիւրաւ տաշիս՝ 'ի քոց ոխ տից ,
գեղեցկատիպ՝ ձև յօրի նիս ,
ախորժատես՝ շինուած լի նիս :
Տաճար կազմիս՝ ծնու թեան ,
շնորհաց հոգւոյն՝ բնակու թեան ,

որով լուսես՝ հաստ որբու Թեան,
մաքրեալ խոպաու՝ զաղտ մոլու Թեան։
Եկեսս հասաւչէին՝ ընծայես ցես,
պսակ փառաց՝ դու ընկալ ցես,
առ յաշխարհէ՝ երանաւ ցես,
յարքայութեն՝ պայծառանա ցես։

## ՎԵՐՋ

# ՅԱՆԿ ԳԼԽՈՅ։

Յառաջաբանութիւն գրքոյս. ա։
Գովեստ՝ շնորհակալութե՝ և յիշատակարան 'ի դիմաց տպարանին. է։
Գլ. Ա։ Թէ զինչ իցէ քաղաքավարութիւն. 1։
Գլ. Բ։ Յաղագս հանրական կանոնաց քաղաքավարութե. 3։
Գլ. Գ։ Կանոնք առ կենցաղավարութի. 11։
Գլ. Դ։ Հետևորդ կանոնք առ կենցաղավարութի։ 21։
Գլ. Ե։ Կանոնք առ բնական գործողութիս ինչ մարդոյ. 25։
Գլ. Զ։ Կանոնք վս այցելութե. 31։
Գլ. Է։ Կանոնք զորս պարտ է պահել 'ի ժողովի. ( այսինքն ժողովրդանոցի ) 38։
Գլ. Ը։ Կանոնք վս խօսակցութե. 40։
1. Նիւթ խօսից. 41։
2. Կարգ խօսից. 47։
3. Եղանակք խօսից. 52։
4. Ձայնք, արտասանութիւնք, 59։
շարժմունք ձեռաց, գլխոյ. ևլն. 62։
5. Առանձին կանոնք ինչ վս կատակի. ( այսինքն ծաղրարարութեան։ ) 63։
Գլ. Թ։ Կանոնք նամակագրութե. 66։
Կնիք ծալելոյ և կնքելոյ զնամակն 71։
Յաղագս վերտառութե. 73։
Գլ. Ժ։ Կանոնք գրչութե. 75։

Գլ.

Գլ. ԺԱ. Կանոնք ՚ի նստիլն, ՚ի կանգնիլն և յընթանալն ՚ի ճանապարհի. 78.
Գլ. ԺԲ. Կանոնք ՚ի զգեստս և յայլ ագանելիս. 85.
Գլ. ԺԳ. Կանոնք ՚ի սեղանի, կամ յուտելն զկերակուր. 89.
Հանգամանք սեղանոյ արևմտեայց 89.
Հանգամանք սեղանոյ արևելեայց. 91.
Կանոնք առաջին. 92.
Գլ. ԺԴ. Կանոնք՝ յորժամ հանդերձեալ իցէ ոք ննջել. 108.
՚Ի զարթնուլն ՚ի քնոյ. 111.
Գլ. ԺԵ. Կանոնք յաղագս ծառայից. 113.
՚Ի կալն առաջի տերանց, և ՚ի սպասաւորելն սեղանոյ. 118. 119.
Գլ. ԺԶ. Կանոնք յաղագս տերանց 124.
Գլ. ԺԷ. Ուսանելին կանոնադրութիւնք ՚ի կենցաղավարութիւն ընդ այլ և այլ վիճակի մարդկան. 128.
Զիարդ պարտ իցէ վարիլ ընդ ծնողս. 128.
Ընդ եղբարս և ընդ ազգականս. 130.
Ընդ դաստիարակս. 131.
Ընդ երախտաւորս. 132.
Ընդ երիցագոյնս և ընդ իշխանաւորս. 132.
Ընդ բարեկամս. 133.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ։

Յաղագս քաղաքավարութեան ըստ այ․ 137։
Գլ․ 1։ Թէ որչ արժան է կալ յաղօթս առ Ած, 138։
Գլ․ 2։ Թէ որչ պարտ է ունկն դնել Ածային բանից․ 145։
Գլ․ 3։ Թէ զինչ պարտ իցէ մարդոյ գործել զբարիս և ծառայել աստուծոյ․ 150։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանոնաց քաղաքավարութեան աշխա- րաբառ լեզուաւ․ 155։
Աղօթք անելու վերայ․ 155։
Ընկողնուց ելանելու վերայ․ 156։
Կենցաղավարութեան վերայ․ 157։
Խոսակցութեան վերայ․ 159։
Նստել վերկալ և մանդոլէ վերայ․ 161։
Կերակուր ուտելու վերայ․ 163։
Բնական գործողութենց վերայ․ 165։
Պառկելէ վերայ․ 166։